

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱԽԱԼՍԱՐԱՆ

Տաթևիկ Կիրակոսյան

**ՆՈՒՋԱՐՏԱՆԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՆԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ  
ՆԱԴՈՐԳԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՈՒԶԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՏԴ 004.77:81  
ԳՄԴ 16.263+81  
Կ 530

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

Գրախոս՝ Ա. Է. Չուբարյան, բ.գ.թ., պրոֆեսոր  
Ռ. Ս. Առաքելյան, բ.գ.թ., դոցենտ  
Խմբագիր՝ Ս. Բ. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆեսոր

### Կիրակոսյան Տաթևիկ

Կ 530 Հուզարտահայտչականությունը համացանցային հաղորդակցության մեջ/ Տաթևիկ Կիրակոսյան: -Եր: ԵՊՀ հրատ., 2024, 190 էջ:

Հույզերը մշտապես եղել են բանականության, լեզվագիտակցության, կրթական և առօրյա վարքի անբաժանելի մասը: Հաղորդակցման ժամանակակից միջոցները, հատկապես համացանցը, նպաստում են միջմշակութային հաղորդակցությանը, որն էլ իր հերթին հազեցած է հույզերով: Հույզերը բազմազան են, ուստի բազմաթիվ են նաև լեզվում գոյություն ունեցող հուզարտահայտչական միավորները, որոնք կիրառվում են հաղորդակցության ընթացքում:

Մենագրության նպատակը հուզարտահայտչական միավորների կիրառման հնարավորությունների և առանձնահատկությունների ուսումնասիրությունն է համացանցային հաղորդակցության ընթացքում: Մենագրության մեջ իրականացվում է հուզական մտածողության խոսքային և ոչ խոսքային արտահայտչաձևերի համալիր քննություն համացանցային հաղորդակցության մեջ: Մենագրության մեջ ուսումնասիրված են այնպիսի երևույթներ, որոնց շնորհիվ ձևավորվում է հաղորդակցական ներուժը, այդ թվում՝ հուզականության կարգի դրսևորման առանձնահատկությունների քննությունը համացանցային հաղորդակցության մեջ:

Մենագրությունը նախատեսված է լեզվի և ճանաչողության փոխկապակցվածության, խոսքատեղծման և խոսքային ներգործման հարցերով հետաքրքրվող մասնագետների լայն շրջանակի համար: Այն կարող է գործածվել նաև մագիստրոսական ուսուցման կիրառական լեզվաբանության և հոգելեզվաբանության դասընթացներում:

ՀՏԴ 004.77:81  
ԳՄԴ 16.263+81

ISBN 978-5-8084-2677-1  
<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426771>  
© ԵՊՀ հրատ., 2024  
© Կիրակոսյան Տ., 2024

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ 1	
ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.....	16
1.1 Հաղորդակցության ընդհանուր բնույթը և տիպերը.....	16
1.2 Համացանցային հաղորդակցության հիմնական գործառույթները.....	51
Ծանոթագրություններ .....	69
ԳԼՈՒԽ 2	
ՀՈՒՅՁԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՇՓՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԱՐԸ.....	73
2.1 «Հույզ» հասկացությունը որպես գիտական քննության օբյեկտ .....	73
2.2 Հույզի՝ որպես հոգելեզվաբանական կարգի առանձնահատկությունները լեզվում.....	91
Ծանոթագրություններ .....	112
ԳԼՈՒԽ 3	
ՀՈՒՋԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....	114
3.1 Հուզարտահայտչական միավորները լեզվի բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում .....	114
3.2 Հուզարտահայտչականության դրսևորումը խոսքային ակտերում.....	141
Ծանոթագրություններ .....	168
Վերջաբան .....	173

Summary .....	176
Резюме .....	177
Օգտագործված գրականության ցանկ .....	178
Բառարաններ .....	187
Օգտագործված համացանցային աղբյուրներ.....	188

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային կյանքը հազեցած է տարաբնույթ հույզերով և դրանց երանգավորումներով: Մարդկային հույզերը նախ և առաջ իրավիճակների և դրանցով պայմանավորված գործողությունների պատասխան հակազդումներն են, որոնք, դրդիչի դեր կատարելով, մարդկանց մղում են գործելու: Հույզերի արտահայտման անմիջական միջոցները դրանց լեզվական դրսևորումներն են հաղորդակցական տարբեր իրադրություններում: Հաղորդակցական լեզվաբանությունը, որպես գիտական նոր ուղղություն, ուսումնասիրում է իմաստային տարբեր միավորների հաղորդակցական ներուժը, որի դրսևորումներից մեկն էլ հուզական բաղադրիչն է, առանց որի հնարավոր չէ պատկերացնել հաղորդակցության գործընթացը:

Մարդկային հույզերի ուսումնասիրության գլխավոր առարկան լեզուն է: Հույզերն անքակտելի են լեզվից, և դրանց ուսումնասիրությունն անհրաժեշտ է իրականացնել լեզվի մեջ և լեզվի միջոցով, քանի որ հենց լեզուն է հույզի ուսումնասիրության թե՛ օբյեկտը, թե՛ առարկան: Լեզվի միջոցով ենք արտահայտում մեր ապրումները, վախերը, գայրույթը, անհանգստությունը, երջանկությունը:

Լեզուն անվանում և նկարագրում է հույզերը, դասակարգում, կարգայնացնում, մեկնաբանում դրանց որակն ու աստիճանը պարզաբանելու միջոցները և ձևավորում է այս կամ այն լեզվամշակույթը կրողի՝ աշխարհի մասին ունեցած հուզական նկարագիրը: Ուստի ակնհայտ է, որ հույզն ու ճանաչողությունը սերտորեն փոխկապված են և նույնիսկ լրացնում են միմյանց: Ճանաչողության գործընթացում մարդիկ գնահատում են իրողություններն ու երևույթները իրականության նկատ-

մամբ ըստ իրենց ուրույն վերաբերմունքի, որն էլ արտացոլվում է լեզվում: Հույզերը, որպես կանոն, իրավիճակային և ճանաչողական բնույթ ունեն, ուստի լեզվի գործառույթների ընտրությունը գրեթե միշտ կախված է խոսքային իրադրությունից, որում, բացի խոսքից՝ կարող է ներառվել նաև շարժմունքների լեզուն:

Լինելով հասարակական երևույթ՝ լեզուն արտացոլում, լուսաբանում, պարզաբանում և մեկնաբանում է շրջակա աշխարհի իրողությունները՝ ստեղծելով մի յուրօրինակ իրականություն, որում ապրում է մարդը: Յուրաքանչյուր լեզու արտացոլում է իր կրողների յուրօրինակ աշխարհայացքը, ինչպես նաև աշխարհի նկատմամբ նրանց վերաբերմունքը, որի շնորհիվ էլ այն յուրօրինակ է ու ինքնատիպ: Հենց լեզուն է, որ ձևավորում է աշխարհի մասին այս կամ այն լեզվամշակույթը կրողի հուզական նկարագիրը: Լեզուն և մտածողությունը փոխկապակցված են, ուստի մարդկային մտածողության էությունը դրսևորվում է խոսքային վարքի միջոցով, այդ թվում՝ նաև հուզական:

Հույզերի արտահայտման մեկ այլ ոլորտ է համացանցային շփումը, որը հաստատուն քայլերով ներթափանցում է մարդկային գործունեության տարբեր ոլորտներ՝ մարդկանց միմյանց հետ շփվելու հնարավորություն ընձեռելով՝ անկախ տարածությունից և ժամանակից: Շփման այս տիպին հատուկ են հաղորդակցման այլ տեսակներին բնորոշ առանձնահատկություններ, ինչպես, օրինակ, ծավալայնությունը, որը զանգվածային հաղորդակցության նման ենթադրում է շփում ամբողջ աշխարհի հետ, ներանձնային և խմբային շփումները, որոնք իրականացվում են համակարգչի օգնությամբ: Համացանցի միջոցով հաղորդակցվելիս խոսողն անպայման իրա-

կանացնում է նախախոսքային կողմնորոշում, որը վերաբերում է թե՛ շփման իրադրությանը, թե՛ գրուցակցին: Մեփական դիրքորոշման, գրուցակցի նկատմամբ դերային ակնկալիքների, ինչպես նաև գրուցակցի անհատական առանձնահատկությունների հաշվառման և խոսողի հետ հուզական հարաբերության գիտակցումն անմիջականորեն արտացոլվում է խոսքում:

Մենագրության քննության առարկան համացանցային հաղորդակցության մեջ կիրառվող հուզարտահայտչական միավորներն են, որոնք ուսումնասիրվում են հոգելեզվաբանական և գործաբանական հայեցակերպերի հաշվառմամբ: Ընդ որում՝ հուզարտահայտչական միավորների շարքին տվյալ համատեքստում դասվում են թե՛ հույզ նշանակող, թե՛ հուզավիճակ ցույց տվող, և թե՛ հուզական գնահատական արտահայտող բառերը: Այսինքն՝ անդրադարձ է արվում հույզերի դրսևորման թե՛ գնահատողական և թե՛ եղանակավորման միջոցներին:

Հարկ է նշել, որ հույզերը հոգեկան երևույթների առանձին կարգ են և արտացոլում են մարդու՝ երևույթների, առարկաների և իրադրությունների իմաստավորումը իր պահանջմունքները բավարարելու ճանապարհին: Քանի որ մարդու հույզերի ուսումնասիրման գլխավոր միջոցը լեզուն է, ապա տրամաբանական է, որ լեզվաբանության ոլորտում հույզերի խնդիրը սկիզբ է առնում լեզվի գործառույթներին առնչվող խնդիրներից, որոնց շարքում են խոսքի ընթացքում հույզ արտահայտելու և հույզ առաջացնելու գործառույթները:

Սույն հետազոտական աշխատանքի նպատակը համացանցային դիսկուրսի՝ որպես հաղորդակցական երևույթի և սոցիալական համատեքստով բնորոշվող գրավոր հաղորդ-



ման, ինչպես նաև համացանցային հաղորդակցության ընթացքում հուզարտահայտչական միավորների կիրառման հնարավորությունների ու առանձնահատկությունների ուսումնասիրումն է: Ամենաընդհանուր բնորոշմամբ՝ դիսկուրսը սահմանվում է որպես խիստ գործաբանական ուղղվածությամբ խոսքային ավարտուն հաղորդում, որն իրականացվում է բանավոր և գրավոր խոսքին բնորոշ միջոցներով: Այն լեզվական և արտալեզվական՝ հոգեբանական, սոցիալական, մշակութային գործոններով պայմանավորված, փոխկապակցված նախադասություններով կազմված խոսքային ավարտուն հաղորդում է: Դիսկուրսում առկա են և՛ բառային, և՛ ոչ բառային միջոցներ: Ընդ որում՝ հաղորդակցության այս երկու միջոցներն են իրականացնում հաղորդակցության հիմնական՝ տեղեկատվական, գործաբանական և արտահայտչական գործառույթները: Հենց դիսկուրսի՝ որպես հաղորդակցության միջնորդավորված, տրամաբանորեն ամբողջական և հասարակայնորեն պայմանավորված միավորի դիտարկումն է, որ հնարավոր է դարձնում մարդկանց միջև ոչ բառային շփման (դիմաշարժ, շարժմունք և այլն) առանձնահատկությունների ամբողջական քննությունը:

Վերջին մի քանի տասնամյակը նշանավորվում է բազմաթիվ հայտնագործություններով և տեխնիկական մեծագույն նվաճումներով գիտության բոլոր ոլորտներում, սակայն դրանցից ամենանշանավորը, թերևս, նորագույն տեխնոլոգիաների աննախադեպ բուռն աճն է, որն այսօր մեծաթիվ հետազոտությունների առարկա է դարձել: Համացանցային հաղորդակցությունն ավելի մեծ թափով ու խորությամբ է ներթափանցում մարդկային գործունեության բոլոր ոլորտները՝ հնարավորություն ընձեռելով խոսելու առաջին հայացքից անհնարին թվա-

ցող այնպիսի երևույթների մասին, ինչպիսիք են՝ վիրտուալ անձը, համացանցային էթիկան, համացանցային վարքագիծը և այլն:

Համացանցի առաջնային և գլխավոր գործառույթը տեղեկություն հաղորդելն է: Տեղեկատվական շփման մեջ մտնելով և զանազան խորհրդանիշներ գործածելով՝ մենք փորձում ենք տարատեսակ տեղեկություններ փոխանակել և դրանք հնարավորինս ընկալելի դարձնել: Սակայն միայն փաստեր ուղարկելն ու ընդունելը բավարար չեն հաղորդակցության արդյունավետությունն ապահովելու համար: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այդ գործընթացում հաղորդակցվողների արտահայտած զգացմունքներն ու հույզերը, որոնց լեզվական դրսևորումն արժանի է հատուկ ուշադրության, քանի որ հաղորդակցության գրեթե բոլոր տեսակները ենթադրում են որևէ հուզական տարրի առկայություն:

Համացանցային գործելակերպը ենթադրում է էլեկտրոնային հաղորդակցության տարատեսակ միջոցների (գերտեքստեր, էլեկտրոնային օրագրեր, վիրտուալ անձի բազմակիության հաշվառում և այլն) գործածում: Հաղորդակցության ընթացքում դրանք հնարավորություն են տալիս դիտարկելու վիրտուալ իրականությունը որպես անձի ինքնարտահայտման և ինքնադրսևորման նոր երևույթ, որը հանգեցնում է մշակութային նոր վարքագծի ձևավորման:

Աշխատանքում հաղորդակցական լեզվաբանության դիրքերից քննվում է նաև բառի յուրօրինակ բաղադրիչը՝ արտահայտչականությունը, որը բառի մեջ հուզականության արտահայտման արդյունքն է: Կարևոր է նշել, որ որքան շատ են լեզվում հույզ նշանակող բառերը, այնքան ավելի լիակատար է գիտակցված հույզի կարգը տվյալ լեզվակիրների գիտակցու-

թյան մեջ (Առաքելյան, 2007): Հույզերը ոչ միայն պայմանավորված են գործունեությամբ, այլև հենց իրենք են պայմանավորում գործունեությունը և կարող են վերարտադրվել գիտակցության մեջ՝ դառնալով մտածողության անբաժան մաս: Հույզերի դրսևորման միջոցներից են առոգաբանությունը, դադարները, խոսքի ռիթմը, մեղեդայնությունը, հնչերանգը և ելևէջները, որոնք էլ արտացոլում են մարդու վերաբերմունքը երևույթներին:

Ժամանակակից հասարակության առանձնահատկությունները որոշվում են մարդու աշխարհընկալման բնույթով, որն անմիջականորեն ազդում է անձի և հանրության ձևավորման վրա: Տեղեկատվության արագ զարգացման և տարածման ներկա պայմաններում ավելի ու ավելի արդիական են դառնում համացանցային հաղորդակցությունը և դրան վերաբերող ուսումնասիրությունները:

Վիրտուալ հաղորդակցությունը վիրտուալ իրականության ձևավորման կարևոր մասն է և բավական բարդ ու բազմաշերտ երևույթ է: Համաշխարհային համացանցում այն միջմշակութային հաղորդակցական հմտությունների և կարողությունների ձևավորման նորագույն և տեխնիկապես ամենաարդյունավետ ու հազեցած միջոցներից է:

Հարկ է նշել, որ հաղորդակցության այս յուրօրինակ գործընթացը չի կարող տեղի ունենալ առանց հաղորդակցվողների հույզերի արտահայտման, որն էլ խթանեց նոր, վիրտուալ այնպիսի ժանրերի ստեղծումը, ինչպիսիք են, օրինակ, շփումները սոցիալական ցանցերում և խմբային տարատեսակ քննարկումները (chats, discussion boards, ICQ, conferences): Տեղեկատվական այս տիպի պաշարներից յուրաքանչյուրը գործնականում ենթադրում է հետադարձ կապի հնարավորություն,

որի միջոցով հաղորդակցության մասնակիցը կարող է հարցում կատարել, մեկնաբանություններ անել և նույնիսկ երկխոսել հարցման հեղինակի և/կամ հաղորդակցության այլ մասնակիցների հետ:

Ներկայումս համացանցը որպես տեղեկատվական-տեխնոլոգիական նորագույն միջոց հետզհետե առաջնային դիրքեր է գրավում: Է. Թոֆլերը, Ն. Լումանը, Մ. Կաստելը, Յու. Հաբերմասը, Ս. Տեր-Մինասովան և այլք հետազոտությունների արդյունքում հանգել են այն եզրակացության, որ նորագույն տեղեկատվական-տեխնոլոգիական միջոցները անձի ինքնարտահայտման կարևորագույն միջոց են, ընդ որում, այս գործընթացը ծավալվում է բացառապես շփման պայմաններում, անձերի միջև կայացող հաղորդակցության միջոցով (տե՛ս օրինակ՝ Завьялова, 2011):

Անդրադառնալով հույզերի նկարագրման հարցին՝ աշխատանքում քննարկվում են «հույզ» և «հուզականություն» եզրույթները: Ընդ որում՝ հույզը հանդես է գալիս որպես հոգեբանական կարգ, որը լեզվական մակարդակում վերափոխվում է հուզականության (Шаховский, 1990): Այլ կերպ՝ հուզականությունը հույզ արտահայտելու միջոց է: Տարբեր հեղինակներ յուրովի են մեկնաբանում հույզերի հոգեբանությունը: Այսպես, օրինակ, հույզի բնորոշման միջոց են դիտվում ընդհանուր սրամաղորությունը, գերզգայուն վիճակները, որոնց որակական բնորոշումներն են գրգռվածությունը կամ ընկճախտը և այլն: Այս դեպքում հույզերը մեկնաբանվում են որպես որոշակի իրադրության դրսևորման քիչ թե շատ յուրովի ընկալվող ազդակներ:

Մեզնից յուրաքանչյուրը միևնույն հույզը յուրովի է ընկալում ու արտահայտում: Հույզերը խոսողի սուբյեկտիվ հոգեբա-

նական վիճակներն են, նրա պատասխան ազդակները զանազան իրողություններին, հաղորդակցության մասնակիցների վարքին և օբյեկտիվ իրականությանը: Խոստովի վերաբերմունքը խոսակցի նկատմամբ արտահայտվում է հաճելի կամ տհաճ, բավարար կամ ոչ բավարար և նմանատիպ այլ հակադիր զգացողությունների միջոցով: Դրանք ի հայտ են գալիս դրական, բացասական կամ խառը տիպի հույզերի դրսևորմամբ, որը կարող է իրականանալ նաև ամենատարբեր լեզվական և արտալեզվական միջոցներով, ինչպիսիք են, օրինակ, հնչյունները, որոնք արտահայտում են աֆեկտային վիճակներ, ծիծաղը, դիմաշարժությունը, շարժմունքները, առոզանությունը, խոսքի տեմպը, բառերի ընտրությունը, ասույթների ու դիսկուրսի տիպերը և այլն:

Հարկ է նշել, որ հուզականության արտացոլման լեզվական միջոցները բազմաթիվ են: Անզլերենում հույզերի արտահայտման լեզվական միջոցներ են ձայնարկությունները, հուզարտահայտչական-գնահատողական ածականները, մակբայները, բայերը, գոյականները և այլն: Հույզերը բազմազան են, ուստի բազմաթիվ են նաև լեզվում գոյություն ունեցող հուզարտահայտչական միավորները, որոնց կիրառմամբ էլ որոշվում է հաղորդակցության բնույթը:

Լեզվում հույզերն առավել հաճախ դրսևորվում են տարբեր շարահյուսական կարգերով և խոսքային ակտերով, որոնք արտահայտում են հույզերի հարակցական նշանակությունները:

Անհատի խոսքային կամ ոչ խոսքային յուրաքանչյուր գործունեություն պայմանավորված է մի շարք կարիքների առկայությամբ, որոնք արտացոլվում են նրա դրողմներում, մտադրություններում, նպատակներում: Ուստի կարելի է ասել, որ

հուզական խոսքի առաջացման նախապայմանը սուբյեկտի՝ որոշակի հույզերի վերապրումն է, որն էլ խոսքային գործունեության իրականացման շարժառիթն է:

Մարդու խոսքային գործունեությունը բազմազան է իր ձևով, կառուցվածքով և տևողությամբ. այն ասույթների հսկայական զանգված է, որը պայմանավորված է իլլոկուտիվ բաղադրիչներով, մարդու յուրօրինակ մտադրություններով և շարժառիթներով՝ խոսող սուբյեկտի հույզերով: Թե՛ հուզական, թե՛ հաղորդակցական ոլորտները սերտորեն կապված են խոսքային ակտերի կառուցվածքի հետ, որոնց գլխավոր նպատակն է հասցեատիրոջ վրա ներգործելը:

Մարդկային խոսքը խոսքային ակտերի յուրօրինակ ամբողջություն է, որը կենդանի խոսքի իրականացման հիմքն է: Խոսքային ակտը, որը հանգամանորեն ուսումնասիրվել է աշխատանքի վերջին մասում, դիտարկվում է որպես նպատակաուղղված խոսքային գործունեություն, որը խոսողն իրականացնում է ըստ խոսքային վարքագծի կանոնների և սկզբունքների և, որը ենթադրում է լոկուտիվ, իլլոկուտիվ և պերլոկուտիվ ազդեցություն: Այս առումով տարանջատվում են «հուզական բաղադրիչ պարունակող խոսքային ակտեր» և «հուզարտահայտչական խոսքային ակտեր» հասկացությունները: Վերջինը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից. հույզի անվանում, հույզի առաջացման պատճառ և հույզի առարկա: Ինչ վերաբերում է հուզական բաղադրիչ պարունակող խոսքային ակտերին, ապա դրանք տարաբնույթ են, այսինքն՝ ունեն տարբեր իլլոկուտիվ նպատակներ: Աշխատանքում քննության առնվող խոսքային ակտերը դասվում են արտահայտչական խոսքային ակտերի թվին, քանի որ հենց դրանց միջոցով են արտահայտվում մարդու հուզական տարբեր դրսևորումները:

Արտահայտչական գործառույթն անմիջականորեն ուղղված է խոսքի հասցեատիրոջը, իսկ հուզականը՝ ինքնարտահայտմանը: Հետևաբար «հուզական գործառույթ» ասելով՝ նկատի է առնվում չուղղորդված հույզերի լեզվական արտահայտությունը որպես մարդու՝ աշխարհի հանդեպ հուզական վերաբերմունքի արդյունք:

Համացանցային դիսկուրսի տարբեր տեսակներում՝ անգլերեն վիրտուալ երկխոսություններում, քննարկումներում և առցանց հաղորդակցության այլ ձևերում հուզարտահայտչական միավորների կիրառման առանձնահատկությունները սույն մենագրության մեջ քննության են առնվում նորովի և բազմակողմանիորեն՝ ինչպես լեզվի տարբեր մակարդակներում, այնպես էլ հուզարտահայտչական ակտերում:

Հուզարտահայտչական և հուզագնահատողական միավորների քննությունը կարող է լույս սփռել մի շարք խնդիրների պարզաբանման վրա՝ հոգելեզվաբանության, ճանաչողության, հաղորդակցության և գործաբանության ոլորտներում: Այսպիսով, կարևոր է նշել, որ աշխատանքում փորձ է արվում անգլերեն հուզարտահայտչական միավորներն ուսումնասիրել համացանցային հաղորդակցության շրջանակներում՝ նպատակ ունենալով դիտարկելու հաղորդակցության գործընթացում հուզագնահատողական բառերի յուրահատուկ դրսևորումները համացանցային տիրույթում:

Հույզերն օբյեկտիվ իրականության ընկալման և արտացոլման ձևերից են և ըստ դրանց հոգեբանական տեսության՝ խոսքային յուրաքանչյուր գործունեություն ունի հուզական բնույթ: Ուսումնասիրության նպատակն իրագործելու համար ընտրվել են համացանցային դիսկուրսից համապատասխան հատվածներ, տարբեր կայքերում տեղադրված երկխոսու-

թյուններ, նամակներ և այլն (ավելի քան 1000 նմուշ): Այսպիսով, հետազոտության փաստական նյութը հիմնականում համացանցային շփման երկխոսական միավորներն են, որոնք վերցված են facebook, instagram, chaticq, twitter (X) կայքերից, ինչպես նաև էլեկտրոնային փոստերից:

Լեզվագործաբանական մեթոդի կիրառման նախընտրությունը պայմանավորված է համացանցային հաղորդակցության ուսումնասիրման դաշտում առաջադրված մոտեցումներով և դրանց հիման վրա ստացված արդյունքներով, որոնք կարող են կիրառվել ինչպես էլեկտրոնային գերտեքստերի մյուս ձևերի (օրինակ՝ հեռախոսհրդաժողովների, խմբային քննարկումների և այլն), այնպես էլ անհատի խոսքային առանձնահատկությունները վեր հանող և լեզվական տարբեր հայեցակերպերով կատարվող ուսումնասիրություններում:



## ԳԼՈՒԽ 1

# ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՒՆԱՆՑՄԱՆ ՄԻՋՈՑ ԵՎ ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

### *1.1 Հաղորդակցության ընդհանուր բնույթը և տիպերը*

Համատեղ գործունեության ընթացքում մարդիկ փոխանակում են տարատեսակ գաղափարներ, մտքեր, առաջարկներ, գիտելիքներ, դիրքորոշումներ և այլն: Այս ամենը կարելի է անվանել տեղեկույթ, իսկ փոխանակման գործընթացը՝ տեղեկույթի փոխանցման գործընթաց: Հաղորդակցությունը տեղեկույթի փոխանակումն է, որի հիմքը և արդյունքը ստացված տեղեկությունն է: Եթե մարդիկ օժտված չլինեին տեղեկություն փոխանցելու հատկությամբ, նրանք չէին կարողանա շփվել, միասին աշխատել, նպատակներ ձևավորել և իրագործել դրանք:

«Հաղորդակցություն» եզրույթը գիտական գրականության մեջ ի հայտ է եկել 20-րդ դարում և շատ արագ ստացել հանրամշակութային իմաստ, ըստ որի՝ դրա նպատակը տեղեկատվության փոխանակումն է հասարակության մեջ: «Հաղորդակցություն» եզրույթը տարբեր գիտնականներ տարբեր կերպ են մեկնաբանում: Այսպես, օրինակ, ըստ Ջ. Փարրիի, «հաղորդակցություն իրականացնել» (հաղորդակցվել) նշանակում է տեղեկություն փոխանցել: Հոգեբանության մեջ «հաղորդակցությունը» դիտվում է որպես շփման բաղկացուցիչ տարր: Նման տարբերակման կողմնակից է Թ. Փարսոնսը, որը տարանջատում է «շփում» և «հաղորդակցություն» եզրույթները և «շփումը» դիտարկում է որպես տեղեկատվության փոխանցման միջոց, որն իր բնույթով ճանաչողական է՝ չունենալով ան-

հատի վարքագծի վրա ազդելու որևէ նպատակ (Parsons, 1965; Асмыс, 2005): Վ. Պանֆերովն ու Բ. Պորշնեն էլ նշում են, որ «շփումը» մարդկանց փոխազդեցությունն է, որի բովանդակությունը փոխադարձ ճանաչողության ապահովումն ու տեղեկության փոխանակումն է հաղորդակցության տարբեր միջոցներով: Դրա նպատակը փոխադարձ գործունեություն իրականացնելու համար ավելի նպաստավոր փոխհարաբերություններ ստեղծելն է (Поршнев, 1979; Панферов, 2000): «Շփում» և «հաղորդակցություն» հասկացությունները առանձնանում են նաև փիլիսոփայության մեջ: Շփումը նոր տեղեկույթի մշակման գործընթացն է, որն ընդհանուր է իրար հետ շփվող կողմերի համար:

«Շփում» և «հաղորդակցություն» հասկացությունները փիլիսոփայության մեջ տարբերակվում են երկու հիմնական հատկանիշներով: Նախ և առաջ՝ շփումն ունի գործնական (այսինքն՝ նյութական), հոգևոր (տեղեկատվական) և գործնական-հոգևոր բնույթ, այնինչ հաղորդակցությունը լոկ տեղեկատվական գործընթաց է՝ այս կամ այն տիպի հաղորդագրությունների փոխանցման միջոց: Երկրորդ հատկանիշը կապի բնույթն է: Այս դեպքում հաղորդակցությունը ներկայացվում է որպես օբյեկտի և սուբյեկտի հարաբերություն: Հաղորդակցությունն այս կամ այն օբյեկտի հետ սուբյեկտի տեղեկատվական կապն է, ընդ որում, այդպիսի օբյեկտ կարող է լինել մարդը, կենդանին և այլն: Տեղեկություն ստացողն այս դեպքում այն օբյեկտն է, որն ընդունում է տեղեկությունը, ճիշտ ապակողավորում, յուրացնում և գործածում այն: Այդ իսկ պատճառով անկարևոր է, թե ով է ընդունողը՝ մա<sup>ր</sup>դը, կենդանի<sup>ն</sup>, թե<sup>՞</sup> այլ օբյեկտ:

Հաղորդակցությունը բարդ գործընթաց է<sup>1</sup>, որը ենթադրում է փոխկապակցված և հաջորդաբար իրականացվող մի շարք

փուլեր: Այն ժամանակակից հասարակական փոխազդեցությունների գլխավոր բաղկացուցիչ մասն է: Հաղորդակցության գործընթացն ուսումնասիրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ մարդկային շփման պայմաններում կարևոր է ոչ միայն այն, թե ինչպես է տեղեկույթը փոխանցվում, այլ նաև այն, թե ինչպես է այդ տեղեկույթը ձևավորվում, ճշգրտվում և հետագա զարգացում ապրում: Հաղորդակցությունն ու տեղեկատվությունը տարբեր, բայց փոխկապակցված հասկացություններ են: Հաղորդակցությունը ներառում է և՛ տեղեկություն այն մասին, թե «ինչ» է փոխանցվում, և՛ այն, թե այդ «նյութը» ինչպես է փոխանցվում:

Մարդու հոգեկան գործունեությունը, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, իրականանում է այնպիսի գործընթացներով, ինչպիսիք են տեղեկատվության մուտքը, մշակումը և ելքը, որոնք համապատասխանաբար հանդես են գալիս որպես իմացություն, գիտակցություն և արտահայտություն: Լեզուն ընկած է մարդկային կյանքի, կենսագործունեության ու ճանաչողության հիմքում: Մարդու հուզական աշխարհը և մտածողությունը կառավարվում են լեզվի միջոցով: Մարդկային լեզուն կարելի է սահմանել որպես արտահայտության ընկալելի միջոցների ամբողջություն, որոնք հատկապես հենց մարդուն են բնորոշ: Լեզվի շնորհիվ է, որ մարդկային հույզերն ու ապրումները, մտքերն ու ձեռքբերումները փոխանցվում են ժամանակի ու տարածության մեջ (Ջահուկյան, 1992; Գասպարյան, 2011):

Յուրաքանչյուր լեզու մարդկային մշակույթի զարգացման արդյունք է, շփման, մտքի ձևավորման և այն մյուսներին փոխանցելու միջոց: Լեզվի ամենագլխավոր գործառույթը հաղորդակցականն է, քանի որ լեզուն նախ և առաջ հաղորդակցու-

թյան և տեղեկատվության փոխանակման միջոց է: Մտքերի ձևավորման արդյունքում առանձնացվում է նաև դրա երկրորդ գլխավոր գործառույթը՝ մտակազմականը (Маслов, 1998): Քաջ հայտնի է, որ լեզուն նաև խոսելու կարողության զարգացման միջոց է և չկիրառվելու պարագայում այն կարող է մոռացվել: Հետևաբար կարելի է ասել, որ լեզուն գոյություն ունի, եթե այն գործում է (կիրառվում է), իսկ գործում է այն խոսքում:

Խոսքի գործադրման հայեցակերպի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն անդրադարձ բնույթ ունի, քանի որ ստեղծվում և կիրառվում է հակազդական հեռանկարով՝ համապատասխան խոսքային գործողության արձագանքի ակնկալիքով: Խոսքային գործողությունը երկկողմ գործընթաց է, որովհետև ենթադրում է ոչ միայն հաղորդակցվող երկու կողմերի առկայություն. այն նաև երկմիասնական գործողությունների՝ խոսքի արտաբերման (խոսքաստեղծման) և ընկալման (մեկնաբանման) ամբողջություն է (Պարոնյան, 2011):

Հաղորդակցությունը, որպես գիտական եզրույթ, գործածվում է մի շարք գիտություններում՝ հոգեբանության, փիլիսոփայության, հանրալեզվաբանության մեջ և այլն: Հոգեբանության մեջ այն դիտվում է որպես մարդկանց միջև իրականացվող նպատակաուղղված, անմիջական կամ միջնորդավորված գործընթաց, որի նպատակը կապ հաստատելն ու պահպանելն է (Леохтвев, 2003): Հոգեբանության տեսանկյունից՝ հաղորդակցությունն ընկալվում է որպես մարդկանց միջև փոխազդեցություն, որի ընթացքում նրանք ճանաչում են միմյանց, իրականացնում զանազան փոխհարաբերություններ՝ ընդհանուր գործունեության շրջանակներում միմյանց նկատմամբ ստեղծելով որոշակի փոխադարձ վերաբերմունք և փոխադարձ կապվածություն:

Շատ հաճախ «հաղորդակցություն» բառն արտահայտում է ինչպես զրուցակիցների միջև մտքերի ու տեղեկատվության փոխանցման գործընթացը, այնպես էլ նկարագրում է նրանց փոխադարձ հուզական ապրումները: Լեզվաբանները հաղորդակցությունը դիտարկում են նախ և առաջ զանազան խոսքային իրադրություններում լեզվի՝ որպես հաղորդակցության գործոնի դրսևորում: Այսպիսով, հաղորդակցությունը բարդ և բազմաշերտ գործընթաց է, որը միաժամանակ կարող է հանդես գալ և՛ որպես անհատների փոխազդեցության, և՛ որպես տեղեկատվական գործընթաց: Այն կարող է մարդկանց միջև հարաբերություններ ստեղծելու, միմյանց վրա փոխազդելու միջոց լինել և, ի վերջո, այն փոխադարձ փոխըմբռնմանը միտված գործընթաց է:

Բնական լեզուների հիմնանպատակը մարդկանց միջև հաղորդակցություն ապահովելն է, որն իր հերթին պայմանավորված է ֆիզիկական, հանրամշակութային և լեզվաբանական գործոններով: Ֆիզիկական գործոններ ասելով նկատի են առնվում անվանողական այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են հասարակության գերակայությամբ<sup>2</sup>: Լեզվաբանական գործոնները ներառում են բազմալեզու միջավայրում տարբեր լեզուներով տեղեկույթի փոխանցման կարողությունը, իսկ հանրամշակութային գործոնը ենթադրում է հաղորդակցվողների միջև շփման ապահովում ու դրա պահպանում, ինչպես նաև նրանց միջև տարբեր տիպի հասարակական հարաբերությունների հաստատում:

Շփումն անհատի հարաբերությունն է հասարակական խմբի, հանրության, կազմակերպության կամ հասարակության՝ որպես ամբողջի հետ: Հանրալեզվաբանները շփումը դիտում են որպես հասարակական գործոններով պայմանավոր-

ված մարդկային գործունեության ձև: Լեզվաբաններն այն ուսումնասիրում են որպես տարբեր խոսքային իրադրություններում լեզվի հաղորդակցական գործառույթի իրականացում: Հոգեբանության մեջ «շփում» եզրույթը նշանակում է համատեղ գործունեության պայմաններում մարդկանց միջև տեղեկության փոխանակման նպատակով շփվելու և զարգացնելու գործընթաց (Шарков, 2003):

Մույն աշխատանքում գործածվող «հաղորդակցություն» և «շփում» եզրույթները փոխկապակցված են և ենթադրում են ինչպես տեղեկատվություն հաղորդելու, այնպես էլ միմյանց վրա փոխազդելու գործոններ: Հաղորդակցությունը շփումն է երկու կամ ավելի անհատների միջև, որը հենվում է փոխըմբռնման վրա: Հաղորդակցությունը նաև այն միջոցների ամբողջությունն է, որոնց օգնությամբ մարդիկ շատ հաճախ հարաբերություններ են ստեղծում միմյանց հետ և հասկանում են միմյանց զգացմունքները (Тер-Минасова, 2008):

Արդյունավետ հաղորդակցությունը յուրաքանչյուր մասնակցից որոշակի հմտություն և կարողություն է պահանջում: Հաղորդակցությունը մեծ ծավալ է ստանում, երբ կա դրդում<sup>3</sup>, մոտիվացիա, որը կարծես ուժգնացնում է գործողությունների գիտակցումը՝ մղելով հաղորդակցվողներին պարզելու, թե ինչ է պետք ասել, ինչու պետք է կատարել այս կամ այն աշխատանքն այդ կերպ և այդ ժամանակահատվածում: Հաղորդակցության շնորհիվ է, որ մարդիկ իրենց վերաբերմունքն են արտահայտում կատարվածին: Հենց այս տեսակ հաղորդակցությունն է, որ նպաստում է մասնակիցների հուզական որակների արտահայտմանը կամ պարզաբանմանը և հնարավորություն է տալիս իրականացնելու սեփական հասարակական կարիքները: Այսպիսով, որպես շփման ձև՝ հաղորդակցությու-

նը լայն տարածում ունի ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ նեղ մասնագիտական շրջանակներում (Шарков, 2003):

Հաղորդակցության գործընթացում տեղի է ունենում ոչ միայն տեղեկատվության փոխանցում, այլև դրա ակտիվ փոխանակում, քանի որ գործ ունենք երկու կամ ավելի անհատների միջև հարաբերությունների հաստատման հետ, որի ընթացքում նրանցից յուրաքանչյուրը գործուն սուբյեկտ է: Այս է պատճառը, որ շփումն ընկալվում է ոչ միայն որպես տեղեկատվության փոխանցման կամ ուղարկման և ընդունման միջոց, այլև որպես համատեղ գործունեության արդյունք: Շփման յուրաքանչյուր մասնակցի համար շատ կարևոր է տեղեկատվության արժեքավոր լինելու փաստը, քանի որ շփման ընթացքում մասնակիցներն ընդհանուր միտք ձևավորելու նպատակով լոկ բառեր չեն փոխանակում: Այդ միտքը ձևավորելու համար շատ կարևոր է, որ այն լինի ոչ միայն ընդունելի, այլ նաև հասկանալի ու գիտակցված:

Տեղեկատվության ընկալման կարևորագույն առանձնահատկություններից է ընտրողականությունը: Մարդը տեղեկատվություն ստանալու նպատակով, գործածելով իր տեսողական, ձայնային և լեզվական միջոցները՝ ընկալում է ոչ թե ստացած ամբողջ տեղեկատվությունը, այլ միայն այն, ինչը նա նախընտրում է, կամ ինչը նրա համար առավել կարևոր է (Каймакова, 2008): Ընտրության հարցում զգալի չափով ազդում են անհատների թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեբանական կարողությունները, որոնցից են անցյալի նկատմամբ վերաբերմունքը, նախկին կենսափորձը, տրամադրվածությունը և այլն: Այսպիսով, տեղեկատվության ընտրությունը հնարավորություն է տալիս մի կողմից ձերբազատվելու ոչ կարևոր կամ ոչ պիտանի տեղեկությունից, մյուս կողմից՝ դառնալու կարևոր տեղեկատվության կորստի պատճառ:

Տեղեկատվության ընկալման մյուս էական առանձնահատկությունը դրա համակարգումն է, որի շնորհիվ համապատասխան մշակման արդյունքում այն որոշակի ձև է ստանում և դառնում ընկալելի, և որն էլ մարդուն հնարավորություն է ընձեռում յուրովի արձագանքելու ստացված տվյալներին: Տեղեկատվության համակարգումն իրականանում է երկու ձևով՝ տրամաբանական մեթոդով և պարզ մշակման մեթոդով: Առաջին մեթոդին բնորոշ է տեղեկատվության համակարգված և հետևողական ձևավորումն ու ներկայացումը, որոնցից յուրաքանչյուրի հիմքում տրամաբանական գործողություններն են: Երկրորդ մեթոդով մարդը մշակում է տեղեկատվությունը՝ հաշվի առնելով սեփական զգացմունքները, հույզերը, համոզմունքները, նախապատվությունները, ընկալումները և այլն: Տեղեկատվության ընտրությունն ու համակարգումը, ընդհանուր առմամբ, իրականանում են որոշակի սկզբունքների համաձայն, սակայն յուրաքանչյուր մարդու համար այս գործընթացն անհատական բնույթ ունի՝ կախված ընկալման գործընթացի առանձնահատկություններից: Հետևաբար մարդկանց հետ արդյունավետ փոխազդելու և նրանց կառավարելու համար անհրաժեշտ է նախ և առաջ հասկանալ տվյալ անձի համար իրականության ընդունելի ընկալման հիմնական առանձնահատկությունները: Իրականության ընկալման բոլոր գործոնները կարելի է ստորաբաժանել արտաքին և ներքին տիպերի: Ներքին գործոններից առանձնացվում են՝ մարդու հոգեվիճակը, նրա կարիքներն ու սպասումները, ընկալմանը նախորդող ազդակները, այդ ազդակների նկատմամբ դրական կամ բացասական դիրքորոշումները: Իրականության ընկալման ներքին գործոնների շարքին են դասվում փոխանցվող ազդակների ուժգնությունը, չափը, ազդակի հա-



ճախականությունը և մարդու վրա շրջապատի ազդեցությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն փաստը, որ ընկալումը բավական բարդ գործընթաց է՝ կախված տարաբնույթ գործոններից: Ընդ որում՝ շատ խնդիրներից խուսափելու և իրականությունը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է, որ անհատը խուսափի կարծրատիպերից և ավելորդ ընդհանրացումներից, իրեն ոչ բնորոշ տրամադրվածությունից, առաջին տպավորությանը հետևելուց՝ փոխարենը ձգտելով իրականության ավելի օբյեկտիվ ընկալման (Каймакова, 2008):

Տարբերակվում են հաղորդակցության հետևյալ գործառույթները՝ տեղեկատվական, երբ փոխանցվում են իրական կամ կեղծ տեղեկություններ, փոխգործուն (ինտերակտիվ), որը ներառում է մարդկանց միջև փոխներգործությունը: Փոխգործուն գործառույթի օրինակներ են գործողությունների փոխադարձ համաձայնեցումը, տրամադրության վրա գործած ազդեցությունը, համոզումները, ինչպես նաև զրուցակցի վրա ներգործման զանազան միջոցների կիրառումը (ներշնչանք, հորդոր, խնդրանք և այլն): Գործածվում են նաև ճանաչողական միջոցներ, երբ, օրինակ, հաղորդակցվողները միմյանց ընդունում և ընկալում են որպես համախոհներ և գալիս են փոխհամաձայնության:

Հաղորդակցության բնույթը, անշուշտ, որոշվում է դրա կոնկրետ տեսակով: Այս առումով առանձնացվում են հաղորդակցության ներանձնային (անձնային), միջանձնային (ներխմբային, միջխմբային, զանգվածային) և մշակութային (հոգևոր, գիտական) տեսակները:

***Ներանձնային հաղորդակցությունը*** լինում է անմիջական (ուղիղ) և միջնորդավորված (տարածական): Հաղորդակցությունը կարող է լինել նաև ակտիվ և պասիվ: Եթե հաղորդակց-

վողը կարողանում է ներգործել ուղերձն ընդունողի վրա, ապա վերջինս հաղորդակցության գործընթացում պասիվ դեր է կատարում, և հաղորդակցությունն ինքնին պասիվ բնույթ է կրում: Հաղորդակցությունն այն դեպքում է դառնում ակտիվ, երբ դրան մասնակցող բոլոր հաղորդակցվողները միաժամանակ սկսում են ուղարկել ուղերձը և իրենց գործողություններով անմիջապես արձագանքում են ստացված ուղերձին (Шарков, 2003): Ներանձնային հաղորդակցությունը իրականանում է հիմնականում կազմակերպությունների շրջանակներում, երբ հաղորդակցություն է ապահովվում տարբեր ստորաբաժանումների և մակարդակների միջև (Каймакова, 2008):

***Միջանձնային հաղորդակցությունն*** իրականանում է երկու անձանց միջև, երբ երկուսն էլ տեղեկության փոխանցող և ընդունող են: Հաղորդակցվող կողմերից մեկի ուղերձն իրականացվում է ձայնի միջոցով, իսկ հետադարձ կապ է համարվում յուրաքանչյուր մասնակցի պատասխանը՝ փաստերի հերքման, տեղեկության ճշգրտման և այլ միջոցներով (Шарков, 2003):

Միջանձնային հաղորդակցությունն իր բնույթով էապես տարբերվում է հասարակական հաղորդակցությունից, քանի որ դրա կարևորագույն և ամենաբնորոշ առանձնահատկությունը հուզականությունն է: «Միջանձնային հարաբերությունների հուզականություն» կամ «հուզական հիմք» ասելով՝ հասկանում են որոշակի զգացմունքների հիման վրա դրանց գոյանալու և հաստատվելու փաստը, որն առաջանում է միմյանց հետ մարդկանց շփվելու արդյունքում: Միջանձնային հաղորդակցության արդյունավետությունը կարևոր է կառավարման գործում առաջընթաց ապահովելու համար, քանի որ մի կողմից ղեկավարվող շատ հարցերի լուծումներ տրվում են մարդ-

կանց անմիջական փոխգործունեության հիման վրա (օրինակ՝ դեկավարի և ենթակայի հարաբերություններ, աշխատողների հարաբերություններ զանազան իրողությունների շրջանակներում): Մյուս կողմից՝ հենց այս հարաբերություններն են զանազան քննարկումների և խնդիրների արդյունավետ լուծման լավագույն միջոցները (Каймакова, 2008):

Միջանձնային հաղորդակցության ուսումնասիրության տեսական հիմք կարող է համարվել խոսքային ակտերի մասին տեսությունը: Ըստ Լ. Վիգոտսկու և Ա. Լեոնտևի՝ խոսքային հաղորդակցության կարևորագույն գործոնները դրդիչներն ու նպատակներն են: Դրդիչը համադրվում է հաղորդակցության գործունեության հետ և սուբյեկտին մղում է ակտիվորեն գործելու: Նպատակը գրեթե միշտ գիտակցված է, մինչդեռ դրդիչը կարող է լինել ինչպես գիտակցված, այնպես էլ չգիտակցված: Շատ հաճախ դրդումն ու նպատակը համընկնում են: Միջանձնային հաղորդակցության գործընթացում կարևոր է գրուցակցի դրդումը կանխագուշակելու կարողությունը, առավել ևս, եթե նրա միտումները պարզ և հասկանալի չեն: Դրդման հասարակական հիմքը հասարակական հարաբերություններն են (Шарков, 2003): Եվ վերջապես, տեղեկույթի փոխանցման շնորհիվ միջանձնային շփումները նպաստում են նաև անհատների միջև փոխանակվող կարծիքների հաստատմանը կամ հերքմանը:

Միջանձնային և ներանձնային հաղորդակցությունների հաճախ հակադրվում է **«զանգվածային հաղորդակցություն»** հասկացությունը: Հարկ է նշել, որ «զանգված» հասկացությունը հանրալեզվաբանության մեջ ունի տարբեր մեկնաբանություններ: Զանգվածն ընդունվում է և՛ որպես ամբոխ, և՛ որպես հանրություն, և՛ որպես տարասեռ համակարգ: «Զանգված» եզ-

րույթը ձևավորվել է որպես բազմաթիվ անհատներին հսկելու կամ վերահսկելու միջոց: Ուսումնասիրողները կենտրոնացել են այն փաստի վրա, որ ցանկացած դեպքում զանգվածի մեջ մարդիկ իրենց այլ կերպ են դրսևորում, քան մեկուսացված լինելու պարագայում: Կ. Բերքը մարդկանց այդ հավաքական խումբն անվանում է ամբոխ: Ֆրանսիացի սոցիոլոգ Գ. Լեբենը, որը զանգվածային հասարակության մասին հասկացություններից մեկի հեղինակն է, նույնպես զանգվածը նույնացնում է ամբոխի հետ: Ըստ նրա մեկնաբանման՝ զանգվածային հաղորդակցության միջոցների զարգացման հետևանքով կյանքը դառնում է կախված ամբոխի վարքագծից: Ամերիկացի սոցիոլոգ և հանրային հոգեբան Գ. Բլումերը զանգվածը դիտում է որպես տարրական, ինքնաբերաբար առաջացող կոլեկտիվ խմբավորում: Այս տեսակետը մեծ դեր է խաղացել հետագայում «զանգվածային հաղորդակցություն» եզրույթը սահմանելիս: Ըստ Գ. Բլումերի՝ զանգվածի գլխավոր առանձնահատկություններից են նրա անդամների անանունությունն ու մեկուսի լինելը, նրանց թույլ փոխազդեցությունը, կազմակերպվածության բացակայությունը, սոցիալական ծագման պատահական լինելու փաստը (տե՛ս նաև՝ Шарков, 2003; Каймакова, 2008):

Զանգվածային հաղորդակցության շնորհիվ անհատները կապ են պահպանում հասարակական լայն շերտերի հետ: Տեղեկատվությունն այնքանով է հետաքրքրում զանգվածային լսարանին, որքանով այն համապատասխանում է լսարանի հասարակական սպասումներին, այսինքն, բացի բովանդակային գործոնից, տեղեկույթը պետք է ներառի նաև գնահատողական գործոն: Զանգվածային տեղեկատվությունն էլ իր հերթին պետք է ունենա հասարակական արժեք ամբողջ լսարանի համար: Զանգվածային լսարանի համար տեղեկույթի արժեքը

պայմանավորված է դրա հասարակական անհրաժեշտությամբ, համապատասխան տեղեկությունների հազեցվածությամբ, տարբեր կարծիքների, գնահատականների առկայությամբ (բազմակարծությամբ), նորարարությամբ և գործնականությամբ: Ջանգվածային հաղորդակցության միջոցները մի կողմից սահմանափակում են զանգվածային և անձնային հասարակական դիրքորոշումները, մյուս կողմից՝ միավորում: Միևնույն տեղեկությունը կարող է միաժամանակ հետաքրքրել և՛ մարդկանց կոնկրետ խմբի, և՛ առանձին անհատների:

Ջանգվածային հաղորդակցության հիմնական միջոցներից են զանգվածային տեղեկատվության ձևերը՝ ռադիոն, հեռուստատեսությունը, մամուլը: Ներկայումս զանգվածային լրատվական ամենահզոր միջոցներից է համացանցը: Ջանգվածային հաղորդակցությունը բնութագրվում է միակողմանի ուղղվածությամբ, քանի որ հետադարձ կապը գործնականորեն բացակայում է (Шарков, 2003):

Միջանձնային և զանգվածային հաղորդակցության հիմնական տարբերակիչ հատկանիշը շփման ընթացքում հաղորդակցության միջանձնային միջոցների շնորհիվ անհատների միջև անմիջական շփում հաստատելն է, մինչդեռ զանգվածային հաղորդակցության ընթացքում տեղեկատվության փոխանակումը միջնորդավորվում է հաղորդակցության տեխնիկական միջոցներով (Каймакова, 2008):

Հաղորդակցության վերը նշված բոլոր տեսակներն առկա են ամենատարբեր բնագավառներում, ամենատարբեր տարիքային, սեռային, ազգային պատկանելություն ունեցող մարդկանց միջև՝ անկախ նրանից, թե նրանք ո՞ր մայրցամաքից, երկրից, պետությունից կամ տարածաշրջանից են:

Ինչպես արդեն նշվել է՝ հաղորդակցությունը տեղեկույթի փոխանակման յուրօրինակ տեսակ է, որն իրականանում է գրավոր և բանավոր ձևերով, ինչպես նաև մարմնի շարժումների և խոսքային տարբեր գործոնների միջոցով (Почепцов, 2001):

Մասնագիտական փոքր խմբերում հաղորդակցությունն իր ուրույն նշանակությունն ունի: Ի տարբերություն զանգվածային հաղորդակցության՝ փոքր խմբերի անդամներին սեփական դատողություններն արտահայտելու հնարավորություն է ընձեռված, որն էլ նպաստում է առկա ունակությունների ազատ արտահայտմանը: Փոքր խմբերում տեղեկատվության քննարկման ընթացքում ղեկավարը հաղորդակցությունն էլ ավելի արդյունավետ դարձնելու համար պետք է շահագրգռված մոտեցում ցուցաբերի աշխատակիցների խոսքի և արժեքավոր առաջարկների նկատմամբ՝ ձգտելով ավելի ճշգրիտ և օբյեկտիվ տեղեկություն քաղել: Կազմակերպությունների խնդիրն է՝ մշակել հաղորդակցության այնպիսի համակարգեր, որոնց օգնությամբ մանրակրկիտ կուսումնասիրվեն տեղեկատվական հոսքերը և հաղորդակցության գործընթացների ճիշտ իրականացումը: Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել հաղորդակցության չորս հիմնական գործառույթներ. 1) դրդում, 2) վերահսկում, 3) հույզերի արտահայտում, 4) տեղեկույթի փոխանցում (Шарков, 2003):

Մարդկային շփումը ներառում է ***խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության ձևերը***: Խոսքային հաղորդակցությունն իր հերթին իրականանում է գրավոր և բանավոր հաղորդագրությունների միջոցով, ընդ որում՝ վերջինս իրագործվում է երկխոսությունների, խորհրդակցությունների, բանակցությունների, հեռախոսային զրույցների, ելույթների ընթացքում, երբ

ձայնային կապերի միջոցով տեղեկության զգալի ծավալ է փոխանցվում: Գրավոր հաղորդակցությունն իրականանում է փաստաթղթերի միջոցով՝ նամակներով, հրամաններով, կարգադրություններով, հրահանգներով և այլն: Ոչ խոսքային հաղորդակցությունը իրականանում է խոսքային բնորոշիչների և մարմնի շարժումների լեզվի միջոցով: Վերջինս ոչ խոսքային հաղորդակցությունների հիմնական բաղկացուցիչն է, որն ազդում է դիմացինի վրա: Ոչ խոսքային հաղորդակցության միջոցներն են՝ կեցվածքը, շարժումները, դիրքը, դեմքի արտահայտությունը, հայացքը, խոսողների միջև առկա տարածությունը և այլն: Խոսքային հարալեզվական միջոցներն են հնչերանգը, խոսքի տեմպը, դադարները, բառերի արտասանության եղանակները և այլն: Յուրաքանչյուր ոք տեղեկություն է ստանում՝ գործածելով բոլոր հնարավոր միջոցները, սակայն դրանց մի մասն իր ուրույն ձևն է ստանում շփման գործընթացում:

Խոսքային հաղորդակցությունը մարդու գործունեության ոլորտում գերիշխող դիրք է զբաղեցնում: Այն հնարավոր է իրականացնել տրամաբանական շեշտի միջոցով, ինչպես նաև ասույթների համատեղմամբ այնպիսի ոչ բառային միջոցների հետ, ինչպիսիք են ձայնի ուժգնությունը, հնչերանգը և այլն: Ասույթն իր հերթին բառային մակարդակի հաղորդակցության միավոր է (Шарков, 2003): Փաստորեն, խոսքային հաղորդակցությունն իրականացվում է նշանային համակարգերի և խորհրդանշանների օգնությամբ, ընդ որում, ամենակարևորը լեզուն է, որը, որպես նշանային համակարգ, մարդկային մտածողության և շփման լավագույն միջոցն է:

Հաղորդակցության ձևերից կարելի է առանձնացնել նաև այսպես կոչված *տեսողական հաղորդակցությունը*,<sup>4</sup> որը ներառում է ոչ միայն մարդու գործածած բառերը, այլ նաև նրա

մեջ ձևավորված տեսողական պատկերը: Թերթմբոնումից խուսափելու համար յուրաքանչյուր ոք պետք է որևէ տեղեկատվություն հաղորդի նաև ոչ բառային մեթոդով: Այս առումով տարբերակում են դրական և բացասական ազդակները: Դրական ազդակներից են՝ դեմքի հանգստությունը, հանգիստ դիրքը, հայացքով շփումը և ավերի բացված լինելը, իսկ բացասականները՝ նյարդայնությունը, երեսին դիպչելը, սեղմված բունցքները և այլն (Пошевцов, 2001): Այսպիսով, պարզ է դառնում, որ տեսողական հաղորդակցության շնորհիվ տեղեկատվությունը դառնում է ավելի դյուրընկալելի և հիշվող, որի վառ օրինակ են հեռատեսային զանազան տիպի հաղորդակցությունները, լուսանկարները և այլն:

Խոսքային հաղորդակցության ուսումնասիրություններն առավել հետաքրքիր են դիսկուրսի շրջանակներում, որը լեզվական և արտալեզվական (հոգեբանական, հասարակական, մշակութային) գործոններով պայմանավորված և փոխկապակցված ասույթներից կազմված խոսքային ավարտուն հաղորդում է: Այն այսպես կոչված «կենդանի խոսքն է», այսինքն՝ ընթանում է իրական հաղորդակցական պայմաններում և լայն իմաստով բարդ հաղորդակցական երևույթ է, որը բացի տեքստից՝ ներառում է նաև, տեքստն ընկալելու համար անհրաժեշտ արտալեզվական գործոններ<sup>5</sup>: Դիսկուրսը իրադրային հայեցակերպ ունեցող կապակցված տեքստ է, որը պայմանավորված է արտալեզվական՝ գործաբանական, հանրամշակութային, հոգեբանական և այլ գործոններով: Դա խոսք է, որը դիտվում է որպես նպատակաուղղված հանրային գործունեություն, որը իրականանում է մարդկանց փոխներգործության ընթացքում և նրանց գիտակցության կառույցներում (Արու-



տյունովա, 1990; նաև Պարոնյան՝ «Լեզվաճանաչողություն և դիսկուրս», 2011):

Ինչ վերաբերում է տեքստին, ապա այն քիչ թե շատ որոշակի նպատակով ձևավորված խոսքային ստեղծագործություն է, որին բնորոշ է ավարտուն ու ամբողջական լինելը: Ի տարբերություն դիսկուրսի՝ տեքստում շեշտվում է նրա իմաստային կառուցվածքի բաղադրիչների միասնականությունը (Филимонова, 2001):

Ե. Կուբրյակովան և Օ. Ալեքսանդրովան<sup>6</sup> նույնպես դիսկուրսը դիտում են որպես ճանաչողության գործընթաց, որը կապված է խոսքային իրադրության առաջացման հետ, մինչդեռ տեքստը մեկնաբանվում է որպես խոսքային գործունեության վերջնական արդյունք, որին բնորոշ է կայուն ձևը (Кубрякова, Александрова, 1997): Վերը նշվածից հետևում է, որ «դիսկուրս» հասկացությունը նախ և առաջ դիտարկվում է որպես ամբողջական միավոր, որը կազմված է իմաստային և տրամաբանորեն փոխկապակցված հաջորդական նախադասություններից:

Փաստորեն, տեքստը հաղորդակցության միջոցն ու միավորն է, իսկ դիսկուրսը՝ այն ձևը, որով ընթանում է հաղորդակցությունը: Ի տարբերություն տեքստի՝ դիսկուրսը կենդանի խոսքն է. այն առաջանում, զարգանում և դադարում է, երբ քննարկման ենթակա առարկան կորցնում է իր այժմեականությունը: Այսպիսով, թեպետ տեքստն ու դիսկուրսը լիովին տարանջատելի են, այնուամենայնիվ դրանք չեն հակադրվում միմյանց, քանի որ տեքստ/դիսկուրս փոխհարաբերությունը բնութագրվում է պատճառահետևանքային կապով: Դիսկուրսն ավելի լայն հասկացություն է, քան տեքստը, ընդ որում, վերջինս գրավոր խոսքի մի յուրօրինակ արդյունք է, որը, ինչ-

պես և դիսկուրսը, ունի իր այսպես կոչված «հաղորդակցական ուղղորդիչները» (Бочарникова, 2010):

Արտահայտված հույզի մասին եզրակացություն անելու համար անհրաժեշտ է այն ուսումնասիրել կոնկրետ իրավիճակում: Ուստի կարելի է փաստել, որ հույզերը դիսկուրսիվ բնույթի են: Հենց այս դիրքերից էլ աշխատանքում դիտարկվում են հուզական մտածողության խնդիրներ: Հույզերի արտահայտությունը կոնկրետ հուզական իրավիճակում թույլ է տալիս հաղորդակցվողներին միանշանակ մեկնաբանել արտահայտվող և/կամ վերապրվող հույզերը: Իրավացի են այն հեղինակները, ըստ որոնց՝ լեզուն նախ և առաջ ճշգրիտ տեղեկության ստացման, ստացված գիտելիքի բանական մշակման և դրա փոխանցման միջոց է: Այս բոլոր գործընթացները չեն կարող տեղի ունենալ առանց հաշվի առնելու զգացումները, ապրումները, ցանկությունները, ուստի դրանք չեն կարող չներառվել և չդիտարկվել որպես լեզվաբանության ուսումնասիրության օբյեկտ (Шаховский, 2009):

Դիսկուրսին բնորոշ առանձնահատկություններից են բառերի յուրօրինակ կապակցումները, ասույթների հաջորդականությունը, հնչերանգային նրբությունները: Դիսկուրսի վերլուծության բարդությունը հաճախ հետևանք է այն փաստի, որ մարդկային գործունեության արդյունք համարվող տեքստերը գործում են որոշակի հասարակական իրավիճակներում: Հաղորդակցվողի և հաղորդումն ընդունողի կապն իր հերթին արտահայտում է տարբեր տիպի հասարակական փոխհարաբերություններ: Ըստ այդմ՝ հաղորդակցության միջոցներն իրենց գործունեության ցանկացած փուլում պայմանավորված են հասարակական գործոններով: Հենց դիսկուրսի՝ որպես հաղորդակցության միջնորդավորված, տրամաբանորեն ամբող-

ջական և հասարակայնորեն պայմանավորված միավորի դիտարկումն է, որ հնարավոր է դարձնում, «ոչ խոսքային» լեզուների ուսումնասիրությունը մարդկային շփման փոխհարաբերությունների շրջանակներում՝ որպես մարդկանց միջև հաղորդակցության դրսևորում: Ինչպես նշում է Ֆ. Շարկովը, սա հասարակական հաղորդակցության ամբողջական տեսության ձևավորման հիմքն է, որը ներառում է հաղորդակցության թե՛ խոսքային, թե՛ ոչ խոսքային միջոցների ուսումնասիրությունը: Ոչ խոսքային հաղորդակցության ձևը կարևորվում է միջանձնային շփման մեջ: Ի տարբերություն բառի կամ նախադասության՝ ոչ խոսքային միջոցները, որոնք մարդիկ ավելի անմիջականորեն են ընկալում, ավելի ուժեղ են ներգործում՝ փոխանցելով հարաբերությունների ամենաաննկատ նրբությունները: Հաղորդակցության և՛ խոսքային, և՛ ոչ խոսքային միջոցներն իրականացնում են հաղորդակցության հիմնական՝ տեղեկատվական, գործաբանական և արտահայտչական գործառույթները: Ոչ խոսքային նշանները հաճախ համարվում են չհիմնավորված և վերաբերում են զգացմունքներին, հույզերին և գնահատողական հարաբերություններին: Գործաբանական գործոններն են՝ շփման հաստատումը, հետադարձ կապը, խթանող և կանոնակարգող շարժառիթները և այլն: Արտահայտչական գործառույթն իրացվում է հարմարվողականություն և հուզականություն արտահայտող միավորներով, ինչպես նաև հուզական-արտահայտչական կառույցներով (Шарков, 2003):

Հաղորդակցությունը դիտվում է կա՛մ որպես գործողություն՝ ազդանշանների փոխանցման միակողմանի գործընթաց՝ առանց հետադարձ կապի իրականացման, կա՛մ որպես փոխադարձ ներգործություն՝ տեղեկատվության փոխանցման

երկկողմանի գործընթաց, կա՛մ էլ հաղորդակցական գործընթաց, որում հաղորդակցվողները հաջորդաբար հանդես են գալիս որպես տեղեկույթի աղբյուր (փոխանցող) և ստացող (Шарков, 2003): Հաղորդակցության գործընթացի հիմնական նպատակը փոխանցվող տեղեկույթի ընկալման ապահովումն է: Այնուամենայնիվ, միայն տեղեկույթ փոխանցելու փաստը բավարար չէ մարդկանց շփումն արդյունավետ դարձնելու համար: Տեղեկույթի փոխանցման գործընթացը և դրա արդյունավետության պայմաններն ավելի լավ վերլուծելու նպատակով անհրաժեշտ է հստակ պատկերացնել այդ գործընթացի փուլերը: Տեղեկույթի փոխանցման գործընթացում առանձնացվում են չորս հիմնական տարրեր. աղբյուր, տեղեկույթ, միջոց (ուղի) և ստացող (տեղեկույթ ընդունող): Տեղեկույթի աղբյուր կարող են լինել անհատները, մարդկանց խմբերը, հասարակական կազմակերպություններն ու այլ սուբյեկտներ, որոնք համարվում են տեղեկույթի ստեղծող: Տեղեկույթը, որը սովյալ դեպքում նույնանում է հաղորդագրությանը, այն խթանն է, որը ստացողին է փոխանցվում տեղեկույթի աղբյուրից, և իրականացվում է հաղորդակցության գործողությունը: Հաղորդագրության իմաստն ու նշանակությունը հաղորդագրությունն ուղարկողի մտքերի, արժեքների, հարաբերությունների ու զգացմունքների մասին տեղեկությունն հաղորդելն է: Հաղորդագրություններն ուղարկվում են հաղորդչի միջոցով, որի դերում կարող է լինել մարդը կամ ցանկացած տեխնիկական սարք: Տեղեկությունը հիմնականում կազմված է խորհրդանշաններից, որոնք երկու կողմերի համար էլ նույն նշանակությունն ունեն: Հաղորդակցության համակարգերում կիրառվող խորհրդանիշներից ամենագլխավորը լեզուն է: Միջոցը տեղեկույթի փոխանցման ուղին է, որում հաղորդչի դերում կարող է լինել թե՛ միջավայրը, թե՛ ցանկացած տեխնիկական միջոց:

Հաղորդագրություն ստացողը հասցեատերն է, որին ուղղված է տեղեկությունը: Հաղորդագրության ուղարկումն ու ստացումը ենթադրում են մի քանի փոխկապակցված փուլեր: Հիմնական խնդիրը տեղեկության կազմելը և այն փոխանցելու ուղին այնպես կիրառելն է, որ երկու կողմի համար էլ այն հասկանալի լինի, և երկու կողմն էլ կարողանան ընկալել ելակետային միտքը: Դա բավական բարդ գործընթաց է, քանի որ յուրաքանչյուր փուլ նաև մի ժամանակահատված է, որի ընթացքում միտքը կարող է խեղաթյուրվել կամ ընդհանրապես անհետանալ: Ընդունված են փոխկապակցման հետևյալ փուլերը.

- Մտքի ծագման,
- Կողմերի մասնակցության և ուղու ընտրման,
- Փոխանցման,
- Ապակողմերի մասնակցության,
- Հետադարձ կապի:

Մտքի ծագման փուլը կարևոր է հաղորդակցության գործընթացի ճիշտ կայացման համար: Տեղեկատվության փոխանակումը սկսվում է մտքի ձևավորումից և տեղեկության ընտրությունից: Հաղորդագրություն ուղարկողը որոշում է, թե փոխանցման նյութ դառնալու համար որ միտքը կամ հաղորդագրությունն է արժեքավոր: Նրա դերը տեղեկության նախագծումն ու կողմերի մասնակցության է: Մակայն տեղեկատվության փոխանակման շատ փորձեր խափանվում են առաջին իսկ փուլում միայն այն պատճառով, որ հաղորդագրություն ուղարկողն իր միտքը ոչ լիարժեք է գիտակցում և ծրագրում: Ընկալման և հաղորդակցության միջև գոյություն ունի որոշակի կապ, և հաղորդակցությունը կարող է արդյունավետ համարվել կախված այն բանից, թե փոխանցվող տեղեկությունը որքանով է համարժեք և ընկալելի այն ստացողի համար:

Մինչև միտք հաղորդելը ուղարկողը պետք է խորհրդանշանների միջոցով այն կողավորի՝ դրա համար գործածելով համապատասխան բառեր, հնչերանգ և շարժումների լեզու: Այսպիսի կողավորումը սովորական միտքը վերածում է հաղորդագրության: Հաղորդագրությունն ուղարկողի խնդիրը նաև կողավորման համար կիրառվող խորհրդանշաններին համապատասխանող ուղի ընտրելն է: Հանրության համար առավել ընդունված ուղիներն են խոսքի և գրավոր նյութի փոխանցումը, ինչպես նաև կապի էլեկտրոնային միջոցները՝ ներառյալ համացանցը, էլեկտրոնային փոստը, հեռախորհրդածողովները և այլն: Եթե փոխանցման ուղին կամ միջոցը չեն համապատասխանում առաջին փուլում ծագած մտքին, տեղեկույթի փոխանցումը չի կարող արդյունավետ լինել: Սակայն հաղորդագրության միջոցը չպետք է սահմանափակվի միայն մեկ ուղով: Շատ հաճախ ցանկալի է միաժամանակ հաղորդակցության երկու կամ ավելի միջոցների կիրառումը: Թեև այս դեպքում գործընթացը բարդանում է, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տեղեկատվության միաժամանակ գրավոր և բանավոր միջոցների կիրառման դեպքում հաղորդակցությունն ավելի արդյունավետ է, քան, օրինակ, միայն գրավոր փոխանակման պարագայում:

Հաջորդ փուլը վերաբերում է հաղորդագրության ֆիզիկական փոխանցմանը, այսինքն՝ թե ինչպես է հաղորդագրություն ուղարկողն օգտագործում ուղին՝ ուղերձն ընդունողին (ստացողին) հասցնելու համար: Ոմանք սա սխալմամբ հենց հաղորդակցության գործընթաց են համարում, սակայն փոխանցումը կարելի է համարել ընդամենը հաղորդակցության գործընթացի կարևորագույն փուլերից մեկը, որն անհրաժեշտ է միտքը մեկ այլ մարդու հասցնելու համար: Տեղեկույթի փո-

խանցումն իրականանում է նշանային համակարգերի կիրառմամբ: Հաղորդակցության գործընթացում հիմնականում գործածվում են մի քանի նշանային համակարգեր: Հաղորդակցության գործընթացները դասակարգելիս, ինչպես արդեն նշվել է, պայմանականորեն առանձնացվում է խոսքային հաղորդակցությունը, որում որպես նշանային համակարգ հանդես է գալիս բանավոր խոսքը և ոչ խոսքային հաղորդակցությունը (երբ գործածվում են զանազան ոչ խոսքային նշանային համակարգեր):

Խոսքը համարվում է հաղորդակցության ամենաարժեքավոր միջոցը, քանի որ տեղեկության փոխանցման ընթացքում տեղեկույթի իմաստը պահպանվում է հենց խոսքային միջոցի շնորհիվ: Խոսքի միջոցով է իրականանում տեղեկույթի կողմավորումը և ապակողավորումը: Շատ կարևոր է նաև բառերի ճշգրիտ օգտագործումն ու դրանց արտահայտիչ, իմաստալի և հասանելի լինելը, արտահայտությունների ճիշտ ձևավորումը, հնչերանգի և բառերի ճիշտ արտաբերումը: Ոչ խոսքային հաղորդակցության հիմքում տեղեկույթն է, որը փոխանցում է ուղարկողը՝ առանց բառերի կիրառման, և որոնց փոխարինում են խորհրդանշանները: Ոչ խոսքային միջոցների գործառույթներից են խոսքի հավելումը կամ փոխարինումը, հաղորդակցության գործընթացի մասնակցի հուզական վիճակի արտացոլումը և այլն: Խոսքը համարվում է հաղորդակցության համընդհանուր միջոց, սակայն այն իմաստ ու նշանակություն է ձեռք բերում միայն ոչ խոսքային խորհրդանշանների հետ գործածվելիս<sup>7</sup>:

Տեղեկույթ ստանալուց հետո ընդունողն ապակողավորում է այն: Ապակողավորումն ուղարկողի օգտագործած խորհրդանշանների մտովի վերծանումն է, որն իրականացնում է

ստացողը: Եթե ստացողը ճիշտ նույն կերպ է ընկալում ուղարկողի ընտրած խորհրդանշանները, ապա պարզ է դառնում, թե ինչ է նկատի ունեցել ուղարկողը մտքի ձևավորման պահին: Եթե հաղորդված մտքի նկատմամբ չկա որոշակի հակազդում կամ արձագանք, տեղեկության փոխանցման գործընթացն այդ պահին պետք է ավարտված համարել: Ստացողի կողմից մտքի ճիշտ ընկալումն ակնհայտ կլինի ուղարկողի համար միայն այն դեպքում, երբ տեղի ունենա հաղորդակցության դերերի փոփոխություն և ստացողն իր արձագանքի միջոցով տեղեկացնի, թե որքանով է հասկացել ընդունված տեղեկությունը: Ահա այս պատճառով էլ կարևորվում է ևս մեկ, որոշիչ փուլ՝ հետադարձ կապը: Հաղորդակցության արդյունավետ փոխանցումը պետք է երկկողմանի լինի: Հետադարձ կապի առկայությունն անհրաժեշտ է պարզելու համար, թե որքանով է հաղորդագրությունն ընկալելի և ընդունելի: Հետադարձ կապը կարող է նպաստել հաղորդակցության արդյունավետության զգալի բարձրացմանը: Մի շարք ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ հաղորդագրության երկկողմանի փոխանցումը, ի տարբերություն միակողմանի փոխանցման, լինելով ավելի դանդաղընթաց, այնուհանդերձ ավելի արդյունավետ է, քանի որ ավելի քիչ լարում է պահանջում, ավելի ճշգրիտ է և համոզիչ (Каймакова, 2008):

Անդրադառնանք նաև հաղորդակցության փուլ չհամարվող «աղմուկին», քանի որ այն մեծ ազդեցություն ունի հաղորդակցության որակի վրա: Աղմուկը, որը ցանկացած միջատությունն է հաղորդակցության գործընթացին, կարող է մասամբ կամ ամբողջությամբ աղճատել հաղորդագրության իմաստը: Աղմուկի բարձր աստիճանը, անկասկած, կարող է



հանգեցնել մտքի զգալի կորստի կամ ամբողջովին կասեցնել տեղեկույթի փոխանակումը կամ հաստատումը:

Հաղորդակցության գործընթացի արդյունքները կախված են տեղեկատվության ճշգրիտ ընկալումից, որն էլ իր հերթին պայմանավորում է հաղորդակցության արդյունքները: Եթե հաղորդակցության գործընթացում ստացողի գիտելիքները, վարքը և դիրքորոշումները հանգեցնում են ցանկալի փոփոխությունների, ապա այն համարվում է արդյունավետ (Шарков, 2003):

Հարցերը հաղորդակցական լեզվաբանության սահմաններում քննարկելիս կարևոր է անդրադառնալ նաև հաղորդակցական իրադրության ստեղծման կադապարին, որն ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝ խոսընկեր և խոսակից, հենքային գիտելիք, հաղորդակցության եղանակ և ձև, հաղորդակցության միավոր և հիշողություն: Խոսընկեր (խոսող/գրող) և խոսակիցը/ընթերցողը լսում/կարդում և մեկնաբանում է իրեն ուղղված խոսքը: Հենքային գիտելիքն իրականության մասին գրուցակիցների ընդհանուր գիտելիքի պաշարն է, որի օգնությամբ նրանք հաղորդակցվում են, բացառելով ակնհայտ և ավելորդ գիտելիքը: Հաղորդակցության եղանակը պայմանավորում է մարդկանց շփումը միմյանց հետ, իսկ հաղորդակցության ձևը դրա խոսքային կամ ոչ խոսքային բնույթն է: Հաղորդակցության միավորը ենթադրում է «նախադասություն-ասույթ-խոսքային ակտ» շարահյուսական միավորների առկայություն: Եվ, ի վերջո, հիշողությունը ներառում է մարդու ճանաչողական գիտակցության ոլորտը, որտեղ արդեն առկա գիտելիքը հիմնականում պատկերային բնույթ ունի, և լեզվական գիտակցության ոլորտը, որտեղ «պահվում են» բառերը: Կարևոր է նաև նշել, որ խոսքը վերլուծելիս արտալեզվական

գործոնների մեկնաբանությունը պայմանավորված է հիշողության գործառույթով (Պարոնյան, 2011):

Հաղորդակցության գործընթացի տարբեր փուլերում ոչ խոսքային ազդակները վերածվում են խոսքայինի և հակառակը: Հաղորդակցվողը (տեղեկատվություն հաղորդողը) ինքն է որոշում՝ ո՞ւմ, որքա՞ն և ի՞նչ ուղիներով փոխանցել տեղեկությունը: Ընդհանուր առմամբ, հաղորդակցության տեխնիկական միջոցների շարքին են դասվում բոլոր հատուկ նշանակության նյութական-իրեղեն միավորները, որոնք կիրառելի են հաղորդակցության գործընթացում՝ հեռախոսը, հեռագիրը, ֆաքսիմիլային սարքը, ձայնն ուժգնացնող սարքավորումները (բարձրախոս), տեսակապը, երկկողմանի ռադիոկապը, էլեկտրոնային փոստը և այլն: Մյուս տեխնիկական միջոցները, թեև չեն ընձեռում նման հնարավորություն, այնուամենայնիվ ապահովում են հաղորդակցությունը սուբյեկտի և չորոշարկված օբյեկտի միջև: Դրանց թվին են պատկանում, օրինակ՝ մամուլը (թերթեր, ամսագրեր), հեռուստացույցը, ռադիո- և տեսասարքավորումները: Հեռուստատեսությամբ իրականացող գործընթացները խիստ տարբերվում են տեսաֆիլմի միջոցով իրականացող հաղորդակցության գործընթացներից: Հաղորդակցվողը հեռուստահաղորդակցության ընթացքում հեշտությամբ ճանաչելի է և ավելի կայուն լսարան ունի, քան տեսահաղորդակցության մասնակիցը: Հաղորդակցության ընթացքի վերաբերյալ տարբերություններ կան նաև մամուլի (հաղորդակցության գրավոր ձև) և ռադիոյի կամ, օրինակ, հեռուստատեսության և հասարակական բանավոր հաղորդակցության այլ ձևերի միջև: Հաղորդակցության գործընթացն ավելի արդյունավետ է դառնում, եթե այն ներառում է տեղեկատվություն՝ հայտնի հարցազրույցներից և լրագրերից: Տեղեկության փո-

խանցման ամենաարդյունավետ ձևերից մեկը, այնուամենայնիվ, լրագիրն է: Ինչ վերաբերում է ամսագրերին, ապա դրանք տեղեկությունը փոխանցում են միայն հետաքրքրված սպառողին և թերթերի համեմատությամբ ավելի քիչ հնարավորություններ ունեն: Հեռուստատեսությունը հաղորդակցության ավելի արդյունավետ միջոց է, քան տեսաֆիլմը, քանի որ հեռուստահաղորդակցության գործընթացն ավելի ուժգին է, փոխգործուն և զգալի չափով մեծացրել է հաղորդակցության հնարավորությունները: Մամուլը՝ որպես հաղորդակցության գրավոր ձև, իր հաղորդակցական հնարավորություններով կտրուկ տարբերվում է ռադիոյից և հեռուստատեսությունից, որոնք հաղորդակցության բանավոր և լսողական ու տեսողական ձևերն են: Այս գործընթացների արդյունավետությունը կախված է հաղորդակցության բոլոր փուլերում իրականացվող տեղեկատվության պահպանման գործընթացներից և հաղորդակցության համակարգի բոլոր օղակներում տեղեկույթի հնարավոր աղճատման բացառումից:

Տեղեկատվությունը գրավոր, բանավոր կամ մեկ այլ ձևով մարդկանց փոխանցվող լուրն է: Տեղեկատվությունը հասարակական հիմնարար արժեքներից է: Հասարակությունում շրջանառվող տեղեկատվական հոսքերը միտված են ծառայելու հասարակական տարբեր կրթական համակարգերի (հասարակական ինստիտուտների, կազմակերպությունների, խմբերի և այլն): Մասնագիտացված բնույթի տեղեկատվությունը կոնկրետ հասցեատեր ունի: Այդպիսի տեղեկատվությունն ամրակայվում կամ արտացոլվում է նորմերի և պահանջների համակարգում: Ի տարբերություն վերը նշվածի՝ զանգվածային բնույթի տեղեկատվությունը համընդհանուր բովանդակություն ունի, իսկ դրա հասցեատերը այսպես կոչված «բաց

սահմաններով» համակարգ է: Այլ կերպ՝ զանգվածային տեղեկատվությունը հասարակական տեղեկատվության տեսակ է, որից օգտվում են մարդկանց բավական մեծ խմբեր՝ ելնելով դրա առաջացման, տարածման և կիրառման առանձնահատկություններից: Զանգվածային տեղեկատվությունը համընդհանուր է իր տեսակով, մակարդակով, ուսումնասիրվող համակարգով և նշաններով ու թեմատիկ ուղղվածությամբ: Այս առումով այսօր արդիական խնդիր է «մարդ–տեղեկատվություն–հաղորդակցություն» համակարգի կայացման միջոցների միջև առկա կապերի բացահայտումը: Միայն այս երեք բաղադրիչների փոխկապակցման միջոցով է հնարավոր խորապես ուսումնասիրել հաղորդակցական կապերը և ընդարձակել դրանց ձևերն ու կազմավորման տիպերը (Մարков, 2003): Հենց տեղեկատվությունն է, որ զանգվածային հաղորդակցության շնորհիվ դառնում է համընդհանուր:

Զանգվածային հաղորդակցությունը, որպես հասարակական հաղորդակցության ձև, զանգվածային տեղեկատվության տարածման գործընթաց է և հանդես է գալիս նաև որպես լայն շրջանակներում տեղի ունեցող շփման գործընթաց և տարբեր կողմերի միջև ծավալվող փոխադարձ կապ, որն ուղեկցվում է հսկայածավալ տեղեկատվության փոխանակմամբ: Այն զանգվածային հաղորդակցության ձև է՝ միջնորդավորված տեխնիկական միջոցներով, որոնց շնորհիվ հնարավոր է տեղեկատվությունը միաժամանակ մեծ քանակությամբ գործածողների հասցեագրելը: Այսպիսով, տեղեկությունը, որպես գործընթացների և երևույթների գիտակցման միակ միջոց, ամբողջ մարդկության համար դառնում է գիտատեխնիկական առաջընթացի և զարգացման համազգային պաշար: Համաշխարհային խնդիր-

ների լուծումը կախված է տեղեկության հնուտ գործածումից և հիմնված է նորագույն տեխնոլոգիական միջոցների վրա:

Մեր օրերում ամեն ոք շարունակ առնչվում է հսկայական տեղեկատվական հոսքերի հետ: Տեղեկատվությունը դարձել է մարդկային գործունեության գրեթե բոլոր բնագավառների բաղկացուցիչ մաս: Տեղեկատվության փոխանակումը կարող է տեղի ունենալ պաշտոնական և ոչ պաշտոնական ձևերով: Տեղեկատվության պաշտոնական փոխանակումն այնպիսի գործընթաց է, որն ընթանում է նախագծված և պաշտոնականացված ձևերին համապատասխան: Տեղեկատվության պաշտոնականացման ձևերից են բլանկները, ձևաթղթերը, որոնք անհրաժեշտ է լրացնել և տրված ժամանակամիջոցում ուղարկել ըստ նշված հասցեի: Պաշտոնականացման ձևերը ժամանակ առ ժամանակ պետք է ճշգրտվեն՝ հաշվի առնելով հաղորդակցության համակարգում տեղի ունեցող փոփոխությունները: Տեղեկատվության ոչ պաշտոնական փոխանակումը կատարվում է կազմակերպության շրջանակներում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս: Շատ հաճախ ոչ պաշտոնապես փոխանցված տեղեկությունը «սուբյեկտիվ» բնույթի է և կարող է խեղաթյուրվել: Տեղեկության ոչ պաշտոնական ձևն ուշադրության է արժանանում հիմնականում այն դեպքում, երբ դրա պաշտոնական ձևը տեղի է տալիս:

Ներանձնային հաղորդակցությունն իրականանում է համապատասխան ասույթների ու բառերի փոխանակմամբ: Ըստ Գ. Շպետի՝ բառը կատարյալ մտքի կերպարն ու ձևն է: Շփման ընթացքում զրուցակիցները բառը լսելիս այն տարբերակում են ըստ հետևյալ հատկանիշների. որպես մարդու ձայն, որպես կոնկրետ մարդու ձայն, որպես մարդու կոնկրետ վիճակի կամ հոգեվիճակի նշան, որպես մարդու՝ հասարակական որոշակի

ուրորտի պատկանելիության հատկանիշ, որպես կոնկրետ լեզվական տարր, որն ընկալվում է ըստ իր իմաստի, մշակութային նշանակության՝ բնորոշելով մարդու վերաբերմունքն իր գործածած բառի նկատմամբ (Шпет, 1989):

Տեղեկատվություն ուղարկողն ու ստացողը հաղորդակցության համակարգում պետք է համապատասխանեն ընդհանուր պահանջներին, ունենան հումանիտար գիտելիքների որոշակի մակարդակ, հասկանան ընդհանուր խորհրդանիշների լեզուն, հնարավորություն ունենան վերծանելու կողավորված տեղեկությունը և, վերջապես, ունենան հաղորդակցություն հաստատելու և այն պահպանելու փոխադարձ ցանկություն: Հաղորդակցվողը, որի նպատակը որոշակի լսարանով ապահովված լինելն է, պետք է գիտենա, թե ինչպիսին է լսարանի հասարակական կողմնորոշումը, գիտելիքների ու հետաքրքրությունների շրջանակը:

Հաղորդակցության դերերը ճշգրտելու համար հարկավոր է բնորոշել դերի և դիրքի միջև առկա փոխկապակցությունը: Հասարակական դիրքը որոշ չափով պայմանավորում է հաղորդակցվողների դերային հարաբերությունները և հնարավորություն է տալիս կանխորոշելու դրանք: Միննույն ժամանակ, ըստ հաղորդակցության դերերի, հնարավոր է դատել հաղորդակցվողի հասարակական դիրքի մասին: «Դիրք» և «դեր» եզրույթները որոշ չափով կապվում են այսպես կոչված «հասարակական կարծրատիպ» հասկացության հետ, որը շրջանառության մեջ է դրել Ու. Լիպմանը 1922 թվականին՝ հասարակական օբյեկտների և իրողությունների կայուն կերպարները նշանակելու համար՝ նշելով, որ տեղեկատվության փոխանցումը հաղորդակցվողների միջև իրագործվում է հենց հաղորդակցության գործընթացում: Վերջինս ենթադրում է մարդ-

կային հաղորդակցության գործունեության բնագավառը, որում իրականանում է հաղորդագրության կամ տվյալ տեղեկության ստացման գործընթացը (Lippman, 1922, Карасик, 2002):

Տարբեր ուսումնասիրողներ տարբեր կերպ են սահմանում «անհատ» եզրույթը: Անձնական «ես»-ի հակազդումը կախված է այն հաղորդակցության համակարգի ընդգրկումն լինելուց, որին մասնակցում է «ես»-ը: Ըստ Ջ. Միդլի, «ես»-ի ծագումն ամբողջովին հասարակական բնույթի է, որում գլխավորը նրան բնորոշ առանձնահատկությունն է, այսինքն՝ ինքն իր համար օբյեկտ է, որն էլ տարբերում է նրան անշունչ առարկաներից ու կենդանիներից: Դերային տեսության կողմնակիցները կարծում են, որ անհատը կոնկրետ իրավիճակում տեղեկատվության փոխանցման ընտրության հնարավորությունն ապահովող և այդ տեղեկատվությունը համապատասխանաբար ընկալելու կարողությամբ օժտված հասարակական դերերի գործողությունների արդյունք է: Հաղորդակցության տեսության մեջ անհրաժեշտ է տարբերակել «լեզվական անհատ» հասկացությունը տարբեր հասարակական կառույցներում կիրառվող նմանատիպ, սակայն տարբեր հասկացություններից: Քանի որ լեզվական անհատը մասնակցում է հաղորդակցության բոլոր տեսակների իրականացման գործընթացին, ապա այն բնորոշելիս պետք է հաշվի առնել ոչ միայն անհատական առանձնահատկությունները, այլ նաև տվյալ հասարակական խմբի խոսքային գործունեության նորմերը: Ոչ պակաս կարևոր է նաև լեզվական անհատի հաղորդակցական գործոնի ուսումնասիրությունը բազմակողմանի հաղորդակցական գործունեության ընթացքում: Պետք է նշել, որ «հաղորդակցվող անհատ» հասկացությունն ավելի լայն է, քան «լեզվական անհատ»-ը:

«Հաղորդակցվող անհատ» երևույթը պայմանավորված է անհատական հատկանիշների ու բնորոշումների ամբողջությամբ, որն ապահովում է կոնկրետ իրավիճակում տեղեկատվության փոխանցման հաջորդականությունը որոշելու, ընտրելու, ինչպես նաև այդ տեղեկատվությունը համապատասխանաբար ընկալելու կարողություն: Լիովին հասկանալի է, որ լեզվական և հաղորդակցվող անհատներին բնութագրող մի շարք հատկանիշներ կարող են համընկնել, սակայն անհատի ձևավորման հարցում դրանք տարբեր դերեր են կատարում: Հաղորդակցվող անհատին բնորոշ առանձնահատկություններն են իր իսկ «լեզվական գործառույթների» գիտակցումը և գրուցակցի ճանաչողական առանձնահատկություններին համապատասխան գնահատական տալը: Ավելին՝ «հաղորդակցվող անհատին» բնորոշ են խոսքային և ոչ խոսքային միջոցները ճիշտ կիրառելու, ինչպես նաև հաղորդակցական գործընթացում համապատասխան միջոցները որոշակի փոփոխության ենթարկելու կարողություններ<sup>8</sup>:

Մարդը, լինելով հասարակական էակ, կարող է և պետք է շփվի այդ հասարակության մյուս անդամների հետ: Առանց շփման չկա հասարակություն, առանց հասարակության չկա հասարակական կամ մշակութային մարդ և, վերջապես՝ բանական մարդ: Ձևավորվելով լեզվում՝ բառերը մարդուն առանձնացնում են կենդանական աշխարհից: Այսպիսով, լեզուն մարդկանց միավորում է շփման միջոցով: Շփումը կամ հաղորդակցությունը ղեկավարում է մարդկանց, նրանց կյանքը, զարգացումը, վարքը, աշխարհընկալումը և հենց իրենց՝ որպես աշխարհը կազմող բաղադրիչների: Յուրաքանչյուր փորձ կապված է մարդկանց միջև առկա հաղորդակցման օրինակափոխությունը գիտակցելու հետ. այն ձեռք է բերվում պար-



զաբանելով, թե ինչն է նրանց կապում կամ խանգարում: Շփման արդյունավետությունը, լեզվական գիտելիքներից բացի, կախված է նաև այլ գործոններից. շփման պայմաններից ու մշակույթից, էթիկայի կանոններից, արտահայտման ոչ բառային միջոցների կիրառությունից (շարժումնք, դիմաշարժ) և այլն: Լեզվական խոչընդոտի հաղթահարումը դեռևս բավարար չէ տարբեր մշակույթների ներկայացուցիչների միջև արդյունավետ շփում ապահովելու համար: Դրա համար անհրաժեշտ է հաղթահարել նաև մշակութային խոչընդոտը:

Մշակույթի բաղկացուցիչ տարրերից են ավանդույթները, սովորույթները, դրանց հետ սերտորեն կապված ծեսերն ու կենցաղային մշակույթը, առօրյա վարքը, դրա հետ կապված դիմաշարժի և մնջախաղի կոդը, որը գործածում են լեզվամշակութային հասարակության որոշակի կրողներ, «աշխարհի ազգային նկարագիրը», որն արտացոլում է շրջապատող աշխարհի և դրա ընկալման յուրահատկությունը, այս կամ այն մշակույթի ներկայացուցիչների մտածելակերպի ազգային յուրահատկությունները, գեղարվեստական մշակույթը, որն արտացոլում է այս կամ այն էթնոսի մշակութային ավանդույթները:

Եվ այսպես, եթե փորձենք ընդհանրացնել, թե ո՞ր գործոններն են նպաստում հաղորդակցության կայացմանը, որո՞նք են խոչընդոտում և դժվարացնում շփումը տարբեր մշակույթների ներկայացուցիչների միջև և կամ ի՞նչ կերպ է լեզուն արտացոլում աշխարհը և ազդում անհատի ձևավորման վրա, ապա այս հարցերի պարզաբանման համար անհրաժեշտություն կծագի անդրադառնալու «լեզու» հասկացության և երևույթի տարաբնույթ սահմանումներին: Այսպես, օրինակ, լեզուն նկարագրվում է որպես ցանկացած նշանների համակարգ, որը շփման միջոց է անհատների համար: Լեզուն բառե-

րի օգնությամբ մարդկանց մտքերի արտահայտման ձևն է՝ բառերի յուրահատուկ համակարգ, որը կիրառում է ժողովուրդը կամ ազգը (Сенир, 1993; Тер-Минасова, 2008):

Լեզվի հետ կապված մեկնաբանությունները շատ են, սակայն տարբեր դարաշրջանների, տարբեր երկրների և դպրոցների ներկայացուցիչների բնորոշումները համախմբվում են մի գլխավոր գաղափարի շուրջը. լեզուն շփման, հաղորդակցության, ինչպես նաև մտքեր արտահայտելու միջոց է: Անշուշտ, այն նաև այլ գործառույթներ ունի, բայց այս երկուսը գլխավորներն են. լեզուն իր բուն էությանմբ մեզ հայտնի յուրաքանչյուր հասարակության մեջ հաղորդակցության գործընթացի հիմքն է: Այսպիսով, լեզուն մշակույթի հայելին է, որում արտացոլվում է մարդուն շրջապատող իրական աշխարհը, ինչպես նաև ժողովրդի հասարակական ինքնագիտակցությունը, նրա մտածելակերպը, ազգային բնավորությունը, կենսակերպը, սովորույթները, արժեքային համակարգը, աշխարհընկալումը:

Լեզուն մշակույթի կրողն ու փոխանցման միջոց է, այն ազգային մշակույթի գանձերը փոխանցում է սերնդե սերունդ: Տիրապետելով մայրենի լեզվին՝ երեխաները սերտում են նաև նախորդ սերունդների ընդհանրացված մշակութային փորձը: Ըստ Է. Սեպիրի՝ «ցանկացած մշակութային համակարգ և հասարակական վարքի ցանկացած դրսևորում բացահայտ կամ գաղտնի հաղորդակցություն է ենթադրում» (Сенир, 1993): Այսպիսով, լեզուն ոչ թե աշխարհի հայելին է, այլ հենց մարդու աշխարհընկալման միջոցը: Այս դեպքում աշխարհը ներկայանում է որպես մարդուն շրջապատող իրականություն: Սրա հետ մեկտեղ լեզուն նաև անհատականություն ձևավորող գործիք է: Մենք չենք ընտրում ո՛չ մայրենի լեզուն, ո՛չ մեր մշակույ-

թը, ո՛չ էլ մեր ծննդյան տեղն ու ժամանակը: Մենք մուտք ենք գործում մարդկային աշխարհ, և լեզուն անհապաղ սկսում է իր աշխատանքը՝ ձևավորելով աշխարհի, մարդկանց, արժեքային համակարգերի ու գոյատևման միջոցների մասին մեր պատկերացումները: Անկախ նրանից՝ գիտակցո՞ւմ ենք դա, թե՞ ոչ, մեր ողջ կյանքը՝ թե՛ լայն և թե՛ նեղ առումներով, ներկայում, թե ապագայում կախված է այն բանից, թե որքան լավ և արդյունավետ ենք կարողանում շփվել: Այսպիսով, լեզուն հասարակական զենք է, որը մարդկային խմբերից էթնոս է ձևավորում և կազմավորում ազգ, մշակույթ, ավանդույթներ՝ պահպանելով և փոխանցելով տվյալ խոսքային հանրույթի հասարակական ինքնագիտակցությունը: Շփումը մարդկային գործունեության տեսանկյունից դիտարկելիս հանգում ենք այն խորը համոզմունքին, որ մարդը, իհարկե, չի կարող չապրել իր համար՝ բավարարելով սեփական կարիքները, ինքնադրսևորվելով և ինքնարտահայտվելով: Սակայն նա չի կարող չապրել նաև ուրիշների համար. միայն ուրիշների հետ փոխազդեցության և փոխհամագործակցության միջոցով է նա լիարժեք մարդ դառնում:

Շփման տարբեր տեսակների կառուցվածքային և գործառական տիպերն անհատներից սուբյեկտներ են ձևավորում, ինչպես նաև ամբողջացնում մարդկային գիտակցության տարբեր «ես»-երը: Հենց այս բոլոր հարաբերությունների միջոսբյեկտային բնորոշումն է, «շփում» հասկացությունը դարձնում հաղորդակցության ամենահիմնարար կարգերից մեկը:

## 1.2 Համացանցային հաղորդակցության հիմնական գործառույթները

Ուսումնասիրելով «հաղորդակցություն» հասկացությունը, դիտարկելով դրա ձևերն ու միջոցները՝ անհրաժեշտ է անդրադառնալ նաև դրա համեմատաբար նոր տեսակներից մեկի՝ համացանցային հաղորդակցության<sup>9</sup> բնորոշմանը: Հաղորդակցության հենց այս տիպն է, որ այսօր բավական մեծ արդիականություն ունի, քանի որ այն համապատասխանում է ժամանակակից շարժունակ մարդու բոլոր պահանջներին, մարդու, որը փորձում է ընդլայնել իր ճանաչողությունը և ինքնահաստատվել տեղեկատվական ներկա դարաշրջանում:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս արագ փոխանցելու և պահպանելու մեծ ծավալի տեղեկատվություն, միաժամանակ անմիջական փոխազդեցության մեջ են մտել մեծ թվով մարդկանց հետ ամբողջ աշխարհում, դարձել մերօրյա իրականություն: Ներխուժելով մեր կյանք՝ համացանցը կտրուկ փոխել է ոչ միայն տեղեկատվության հետ առնչվելու, այլ նաև հաղորդակցության գործընթացի վերաբերյալ մեր պատկերացումները: Այս է պատճառը, որ համացանցային շփումը որպես հաղորդակցության առանձնահատուկ միջոց զգալիորեն տարբերվում է հաղորդակցության մյուս տեսակներից:

Համացանցային հաղորդակցությունը համեմատաբար նոր երևույթ է. այն հենվում է դինամիկ և բուռն զարգացող տեխնոլոգիաների հետ գործակցման վրա: Մա է պատճառը, որ համացանցային շփմանը վերաբերող կանոնակարգումները կապված են հաղորդակցության հարմարավետության և արագության ապահովման ձգտման հետ: Էլեկտրոնային հա-

դորդակցության ուսումնասիրությունները դեռևս հետազոտման նախնական փուլում են, այնուամենայնիվ այդ ոլորտում արդեն որոշակի ուղղվածություն է նկատվում: Խոսքը էլեկտրոնային հաղորդակցության բառային, տեքստային և գրաֆիկական ձևերի մասին է:

Համացանցային հաղորդակցության՝ որպես լեզվաբանության ուսումնասիրության առարկայի ներկայացման համար անհրաժեշտ է նախ և առաջ պարզել դրա դերը հաղորդակցության գործընթացում, բնութագրել համացանցային հաղորդակցության կառուցվածքային առանձնահատկությունների նշանակությունը, ինչպես նաև տարբերակել համացանցային հաղորդակցության ժանրերն ու տիպերը: Այս ոլորտում կարևոր ուսումնասիրություններ են կատարել Ե. Գորոշկոն, Ե. Գալիչկինան, Մ. Բերգելսոնը և այլք (Горошко 2009; Галичкина, 2001; Бергельсон М, 2007):

Համակարգչային շփման մասին խոսելիս անհրաժեշտ է հստակեցնել նաև «ցանց» (net) հասկացությունը, որը վերաբերում է միավորված համակարգիչների համակարգին (a system of computers linked together): «Ցանց» ասելով հասկանում ենք երկու կամ ավելի համակարգիչների գործակցում, որը հատուկ ծրագրերի և սարքավորումների շնորհիվ նպաստում է տեղեկատվության փոխանակմանը և մարդկանց միջև շփման իրականացմանը<sup>10</sup>:

Ներկայումս համակարգչային ցանցում շփումն իրականանում է մի քանի միջոցներով, որոնցից են՝ տեղային ցանցը (Local Area Network- LAN) կամ համաշխարհային ցանցը (Wide Area Network - WAN)<sup>11</sup>, որը ներկայացնում է զանազան տեղեկատվական ծառայություններ, ինչպիսիք են WWW (World Wide Web), էլեկտրոնային փոստը (e-mail), հեռա-

խորհրդածոդովները (Use-Net) և այլն: WWW-ն զանգվածային տեղեկատվական միջոցների համաշխարհային նոր ձև է, որը ներառում է ամենաբազմազան տվյալների հսկայական ծավալ՝ սկսած աշխատանքային առաջարկներից մինչև գրականագիտական ակնարկներ և այլն:

Հեռախորհրդածոդովները բոլոր օգտատերերին հնարավորություն են ընձեռում մասնակցելու բազմատեսակ խմբային քննարկումների: Հեռախորհրդածոդովներում նամակներն անվանում են հաղորդագրություններ կամ հոդվածներ, իսկ հեռախորհրդածոդով ուղարկվող հեռագրերը՝ հայտարարություններ (posting): Հեռախորհրդածոդովներում գործում են ընդհանուր սկզբունքներ և վարքագծային օրենքներ, որոնք ընդունված են ցանցի օգտատերերի շրջանում և ստացել են «ցանցային վարվելաձև» (netiquette) անվանումը (Галичкина, 2001): «Համացանցային վարվելաձև» ասելով հասկանում են համացանցային միջավայրում շփվող մարդկանց վարքագծի և դրսևորվող սկզբունքների ամբողջությունը: Համացանցային էթիկան հաճախ ձևավորվում է համապատասխան կանոնների միջոցով, որոնց մասին իրազեկված լինելու դեպքում հնարավոր է խուսափել շփման ընթացքում ծագող խնդիրներից: Նշված կանոնների շարքում են, օրինակ, թեմայից չեղվելու պահանջը, գրաֆիկական միջոցներով հույզերի և դիմաշարժումների փոխանցման, ինչպես նաև ձևաչափային սահմանափակումները (որոնք հաճախ պայմանավորված են նամակի ծավալով), նամակների համապատասխան տեսակների հետ կապված որոշակի արգելքները (օրինակ՝ chain- letters - շղթայակցված նամակներ), անհաջող բովանդակությամբ նամակներից զերծ մնալը: Հետաքրքրական է, որ վերջինները համակարգչային շփման մեջ ստացել են «ֆլեյմինգ» (flaming- այրում) անվանումը:

Համացանցային շփումն ուսումնասիրելու համար հարկավոր է պարզաբանել «հաղորդակցության միջավայր» և «հաղորդակցական ոլորտ» հասկացությունների բովանդակությունը: «Հաղորդակցական ոլորտ»-ը մարդու՝ հասարակայնորեն պայմանավորված հաղորդակցական գործունեության ոլորտն է, որն ունի իր գործառույթները և, որն էլ իր հերթին որոշվում է ըստ հաղորդակցական պահանջմունքների, այն է՝ որոշակի տեղեկություն փոխանցելու կամ ստանալու անհրաժեշտությամբ: «Հաղորդակցական միջավայր» ասելով նկատի են առնում շփմանը մասնակցող բոլոր իրական և վիրտուալ մասնակիցներին և այն տեղեկությունը, որն անհատը ստանում է կամ կարող է ստանալ: Այս հասկացությունը ներառում է նաև այն զգացմունքները, որոնք անհատը կարող է կիսել շրջապատի հետ և, վերապրել այդ շրջապատի հետ համագործակցելու արդյունքում:

Համապատասխան պայմաններն ընդգծում են համացանցային շփման առանձնահատկությունները հույզերի դրսևորման և անհատական շփման տեսանկյունից: Այս առումով անհրաժեշտ է նախ և առաջ ուսումնասիրել իրականի և վիրտուալի կապը: Այսպես՝ շփումը կարող է իրականանալ կոնկրետ կամ ոչ կոնկրետ մարդկանց հետ: «Իրական շփում» ասելով հասկանում են մարդկանց հետ իրական «շփումը» (օրինակ՝ հեռախոսային շփում, նամակագրություն), այսինքն՝ այն, ինչը տեղի է ունենում իրականում: «Վիրտուալ շփում» ասելով հասկանում ենք շփումն անորոշ հանրության, անհայտ կամ երևակայական գրուցակիցների հետ: Վիրտուալ շփումը լրացնում է իրականը:

«Համացանցային» եզրույթն առաջացել և լայն կիրառում է ստացել «վիրտուալ» (լատ. *virtualis*՝ հնարավոր) բառից: Անգլե-

րեն «virtual» բառը թարգմանաբար նշանակում է լեզվական համակարգի մտածական միավոր, որը, չնայած խոսքում իրականացված կամ առկայացված լինելուն, հակադրվում է իրականին (Ахманова, 1966): Համակարգչային եզրույթների շարքից «վիրտուալ» բառն օգտագործելիս նկատի ունենք «իրականում գոյություն չունեցող» (Асмыс, 2005): «Վիրտուալ իրականությունն ասելով հասկանում ենք սուբյեկտների փոխազդեցություն, որն իրականացվում է համակարգչի օգնությամբ, և որի միջոցով ստեղծվում է իրականության յուրօրինակ պատկեր: Այն բնութագրվում է մարդու ներկայությամբ, որը հնարավորություն է ընձեռում գործելու իրական և երևակայական օբյեկտների հետ: Համացանցային շփման «վիրտուալ» բնորոշումը դիտվում է մարդու համար կապ հաստատելու հնարավորություն: Նա կարող է կապի մեջ մտնել ցանկացած պահի և շփվել վիրտուալ զրուցակիցների հետ, որոնք իրականում անհայտ մարդիկ են:

Մեր օրերում լայն տարածում գտած համացանցային դիսկուրսն առավելապես համարվում է էլեկտրոնային միջոցների ազդեցություն, քան հաղորդակցության գրավոր ձև, դեռ ավելին՝ այն բազմաթիվ մարդկանց հնարավորություն է տալիս միաժամանակ մասնակցելու հաղորդակցությանը. իրողություն, որը հնարավոր չէ հաղորդակցության այլ միջոցների դեպքում: Նշված, ինչպես և մի շարք այլ պատճառներով համացանցային հաղորդակցությունը տարբերվում է թե՛ գրավոր, թե՛ բանավոր միջոցներից, սակայն որոշ դեպքերում համարվում է այս երկուսի համադրություն<sup>12</sup>:

Տարբերակում են համացանցային հաղորդակցության համաժամանակյա (synchronous) և անհամաժամանակյա (asynchronous) ձևերը: Վերջին ձևը չի ենթադրում համացանցի



օգտատերերի՝ միմյանց հաղորդագրություններ ուղարկելու և ստանալու նպատակով միաժամանակ կապի մեջ լինելը, քանի որ հաղորդագրությունները պահվում են հասցեատիրոջ կայքում՝ (site) մինչ դրանք ընթերցելը: Էլեկտրոնային փոստը դրա վառ օրինակներից է:

Համաժամ հաղորդակցության դեպքում, համացանցի օգտատերերը, տվյալ դեպքում՝ հաղորդագրություն ուղարկողն ու ստացողը, պետք է միևնույն ժամանակ լինեն կապի մեջ, և հաղորդագրություններն այս դեպքում շարժական և ճկուն են, (այսինքն՝ հնարավոր է տեքստի տեղաշարժ համակարգչի էկրանին) և նոր հաղորդագրությունների ստացմանը զուգընթաց անհետանում են էկրաններից, ինչպես, օրինակ, IRC (Internet Related Chat – համացանցային վերահաղորդման զրույց): Գոյություն ունեն նաև այսպես կոչված «համացանցային հաղորդակցության երկկողմ համակարգեր», որոնց դեպքում օգտատերերի էկրանները բաժանվում են երկու կամ ավելի բաժինների, որտեղ նրանց ստեղծած տեքստերի հավաքվելուն զուգընթաց՝ երևում են համապատասխան մասում: Համացանցային հաղորդակցության երկկողմ համաժամ ձևի օրինակ են ներկայումս շատ հայտնի ICQ (I Seek You / Ես փնտրում եմ քեզ) կանխագրերը (Herring, 2008):

Տարբերակվում են նաև համացանցային հաղորդակցության այլ տեսակներ, որոնցից են ցուցակային սպասարկիչը (Listserver Mailing List) բազմագործածական տիրույթը, MUD (Multi User Dungeon/Domain) վիրտուալ խաղերի ոլորտը և այլն: Ցուցակային սպասարկիչների փոստը, ինչպես և հեռախորհրդածողովների խմբերը դասվում են անհամաժամանակյա բազմամասնակից քննարկման շարքում, որոնց հեռագրերն ուղարկվում են էլեկտրոնային փոստի միջոցով: Այնուամենայ-

նիվ, այս երկու տարատեսակները միմյանցից տարբերվում են, քանի որ առաջինը ենթադրում է համապատասխան մասնագետների կարծիքների փոխանակում:

Իրական ժամանակահատվածում տեղի ունեցող գրույցները նույնպես տարբերվում են միմյանցից: Թեև IRC և MUD-ի գրույցները համարվում են համացանցային հաղորդակցության տեսակ, սակայն դրանց բնույթը և պայմանները տարբեր են: Ի տարբերություն MUD-ի մասնակիցների՝ IRC մասնակիցների համար հապավումների գործածումը լիովին ընդունելի է (U- You, R- are, etc.):

Համացանցային հաղորդակցությանը զուգընթաց՝ զարգանում են նաև որոշ այսպես կոչված «արկածային ժանրեր»՝ մասնակիցներին հնարավորություն ընձեռելով բացահայտելու երևակայական աշխարհը և այն տրամադրող միջավայրը, որտեղ այդ նույն մասնակիցները նոր ինքնություն են ձևավորում՝ ուսումնասիրելով երևակայական աշխարհը և, իրենց ինքնատիպությունը գործի դնելով, փորձում են նոր կապեր հաստատել մյուս օգտատերերի հետ (Crystal, 2004):

Անհամաժամանակյա ձևերի առավելությունը համացանցով հաղորդակցվողներին ժամանակ ընձեռելն է, որի պարագայում հաղորդագրությունները ստուգելու և խմբագրելու հնարավորություն է ստեղծվում: Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ համացանցային հաղորդակցության ընթացքում իրականացվում են դիսկուրսի տարատեսակ և բազմաշերտ գործողություններ (Herring, 1994):

Համացանցային, այսպես կոչված, **վիրտուալ իրականությունը**<sup>13</sup> ստեղծվում է տեքստերի միջոցով: Ի տարբերություն ավանդական գրավոր տեքստերի՝ վիրտուալ աշխարհը «հագեցած» է իրական մարդկանցով, որոնք «իրոք» շփվում են միմ-

յանց հետ: Վիրտուալ հաղորդակցական տարածությունը որոշվում է *հաղորդակցության երկրորդական գործընթացներով* (եզրույթն առաջարկել է Գ. Պոչեպովը), որոնք վերաբերում են ՋԼՄ-ներից, գրքերից ու ամսագրերից ստացված, ընկերներից, գործընկերներից, ծանոթներից լսած տեղեկատվության քննարկմանը և տարածմանը (Почепов, 2001):

Հաշվի առնելով վիրտուալ հաղորդակցության յուրօրինակությունն ու արտահայտչականությունը՝ կարելի է ընդգծել դրանում առկա հետևյալ առանձնահատկությունները՝ տեղեկատվության սուբյեկտիվություն, փոխգործակցություն, գերտեքստայնություն, ստեղծագործականություն, անանունություն (Асмыс, 2005):

Շփումը վիրտուալ տարածության մեջ պետք է բնորոշվի նախ և առաջ *սուբյեկտիվությամբ*, երբ յուրաքանչյուր հաղորդակցվող ձգտում է նորովի և յուրովի ներկայացնել շրջապատի օբյեկտներն ու հարաբերությունները և *փոխգործակցությամբ*, որը ներառում է հաղորդակցվողների փոխազդեցությունն ու անմիջական շփումը: Վիրտուալ հաղորդակցությունն այցի է ընկնում նաև *գերտեքստի* առկայությամբ: Ի տարբերություն սովորական տեքստի, որն ունի հեղինակ, գերտեքստն ավանդական հասկացությամբ հեղինակ չունի: Դրա հեղինակները բազմաթիվ են, ընդ որում, մշտապես փոփոխվող գերտեքստի համար հեղինակային խումբը կարող է բավականին հաճախ փոփոխվել: Հեղինակային բազմազանության փաստն ունի ևս մեկ հետևանք՝ գերտեքստում մեկ խնդրի մասին մի քանի տեսակետ կարող է ներկայացվել, իսկ սովորական տեքստում դա գրեթե անհնար է: Դա է պատճառը, որ գերտեքստն ավելի օբյեկտիվ և հասկանալի է ընթերցողի համար, քան դասական տեքստը (Завьялова, 2011):

«Գերտեքստ» հասկացությունը, համացանցի հայտնաբերման պահից սկսած չափազանց արագ է ընդլայնվել և այսօր գրավել է հասարակության տեղեկատվական գրեթե բոլոր ոլորտները: Համացանցային ոլորտի գերտեքստայնությունը գերիրականության ստեղծման միջոցներից է: Այսինքն՝ այն ամենը, ինչ հնարավոր չէ մեր իրականության մեջ, հնարավոր է համացանցային տիրույթում:

«Վիրտուալ անձանց միջև կապը հաստատվում է հաղորդակցության միջոցով, մասնավորապես տեղեկատվական տեքստերի հաղորդման օգնությամբ, ուստի ժամանակակից հասարակության մեջ տեքստը՝ որպես ստեղծագործության ելակետային նյութ և առարկա, որակավորվում է որպես համընդհանուր և մասնավոր տեղեկության փոխանակման միջոց: Հաղորդակցության մշտական զարգացման և տեղեկությունների համընկնման արդյունքում համացանցում տեքստերը վերակազմվում են և, ստեղծելով նոր տեքստեր, վերածվում են գերտեքստի (Acmyc, 2005):

Վիրտուալ իրականության մյուս կարևոր առանձնահատկությունը *համընդհանրությունն է*, այլ կերպ՝ հաղորդակցական տարածության ընդլայնումը, որը որոշվում է շփման գործընթացում տարածքային, հասարակական, սեռային, տարիքային և այլ սահմանափակումներով: Այս առումով կարելի է ընդունել նաև «վիրտուալ ժամանակ» հասկացությունը, որը, առանց որևէ սահմանափակման, արդիական է միայն «հիմա» և «այստեղ», կամ էլ մտքի և տիրող իրադրության կոնկրետ պահի վերաբերյալ: Եթե հաշվի առնենք, որ վիրտուալ տարածության «բնակիչները» ստեղծագործող սուբյեկտներ են, քանի որ շփման մասնակիցը պասիվ չէ և մասնակցում է գերիրականության ստեղծմանն ու կազմավորմանը, ապա վիրտուալ հա-

դորդակցության տարածության մյուս կարևոր առանձնահատկությունը կարող է կոչվել *ստեղծագործական*: «Ցանց» կոչվածն անսահման է, ուստի դրա բոլոր մասնակիցները որոշակի իմաստով «աշխարհի» ստեղծողներ են: Այս առումով բոլորը դառնում են գրողներ՝ միննույն ժամանակ մնալով ընթերցողներ (Յո, 1998): Այսպիսով, վիրտուալ աշխարհն իրականության մեխանիկական արտացոլումը չէ. այլ՝ այլընտրանքային, հնարավոր աշխարհներ կառուցելու միջոց: *Անանունությունը* նույնպես իր ուրույն նշանակությունն ունի վիրտուալ հաղորդակցության մեջ: Շփման մասնակցի մասին գրեթե ոչինչ, բացի նրա շփման ոճից, հայտնի չէ: Համացանցային տարածության մեջ միջանձնային շփումը ձեռք է բերում համընդհանուր բնույթ, բայց իրականանում է, հիմնականում, անդեմ ձևով: Վիրտուալ միջավայրին հատկապես բնորոշ է աշխարհագրական սահմանների բացակայությունը, ավելին՝ այն միջտարածքային, համընդհանուր և համաաշխարհային բնույթ ունի:

Ինչպես արդեն նշվել է, վիրտուալ իրականությունն անձին հնարավորություն է տալիս իրականացնելու իր ստեղծագործական ներուժը՝ իր հետևում թողնելով իրական կյանքի բոլոր արգելքներն ու սահմանափակումները և կյանքի կոչելով այն ամենը, ինչ իրագործելի և հասանելի չէ իրականում: Սա խոսքային վարքագծում և ինքնարտահայտման ընթացքում սեփական «ես»-ն արտահայտելու անսահմանափակ հնարավորություններ է ընձեռում: Շփում հաստատելիս հաղորդակցության մասնակիցն իր մասին տեղեկացնում է անվան միջոցով: Անունը, այս դեպքում՝ կեղծանունը (nickname կամ nick), կարող է լինել աչքի ընկնող և արտասովոր, բացասական կամ ցնցող իր իմաստով, հայտնի կամ անհայտ, սա-

կայն անպայման հիշվող: Անվանակոչելով ինքն իրեն՝ օգտատերն առաջնորդվում է մի շարք շարժառիթներով, որոնցով հնարավոր է բացատրել լեզվական միջոցների ընտրությունը: Կեղծանունն իր մեջ տեղեկատվություն է պարունակում տվյալ անձի, նրա մասնագիտական հետաքրքրությունների և հուզական տրամադրության մասին (Acmyc, 2005):

Փաստորեն, վիրտուալ իրականությունը կարող է սկզբունքորեն բազմաբնույթ լինել: Տեքստերի կազմումը շփման այս տեսակի մեջ անխուսափելիորեն բազմաբնույթ է: Հավանաբար, հենց այս կերպ է մարդը ժամանակակից աշխարհում փորձում տիրապետել հաղորդակցության և տեղեկատվության գերհագեցած դաշտին:

Համացանցային շփումը, ինչպես արդեն նշվել է, ոչ այլ ինչ է, քան հաղորդակցություն վիրտուալ միջավայրում, որն էլ դրա կարևորագույն առանձնահատկությունն է: Տարբերակվում են նաև համացանցային շփման հետևյալ ժանրերը. էլեկտրոնային փոստ (e-mail), զրույցներ (chat)՝ համացանցի միջոցով ուղերձներ ստանալն ու ընդունելն իրական ժամանակում, հայտարարությունների էլեկտրոնային հարթակներ (discussion boards), համացանցային հեռախոսի ռոպոզիտորներ (use-net)<sup>14</sup>, BBS (Bulletin Board System) և այլն:

Էլեկտրոնային փոստի միջոցով անձնական բնույթի սովորական նամակագրությունն իրականացվում է երկու օգտատերերի միջև: Դրա շրջանակներում, անձնական բնույթի նամակներից զատ, գոյություն ունի զանգվածային լրատվության տարածման հնարավորություն, ինչպես նաև գովազդային բնույթի անցանկալի նամակը կամ, ինչպես ընդունված է ասել, «սպամը», որը գալիս է օգտատիրոջ փոստին՝ առանց նրա համաձայնության: Էլեկտրոնային զրույցների ընթացքում շփման

մասնակիցները համակարգչային ստեղնաշարի միջոցով տեքստ են հավաքում, և այդ տեքստը մեկ ակնթարթում հայտնվում է համակարգչի էկրանին ու դառնում հասանելի տվյալ դիսկուրսի բոլոր մասնակիցների համար: Շփման այս ռեժիմը կոչվում է առցանց (on-line):

Ինչ վերաբերում է էլեկտրոնային հարթակներին, ապա դրանք շփումներն են ցանկացած թեմայի շուրջ՝ սկսած համակարգչային բոլոր անհրաժեշտ ծրագրերի փնտրտուքից մինչև կենցաղային թեմաներ:

Որևէ խնդրի շուրջ համակարգչի միջոցով իրականացվող հեռախոսի ռեժիմները հեռակա շփումներն են: Դրանց կարող են մասնակցել անսահմանափակ թվով մարդիկ, որոնք հնարավորություն ունեն ծանոթանալու բոլորի էլույթներին և ստանալու նյութերի համառոտագրերը:

BBS-ը նույնպես համացանցային հաղորդակցության ժանրերից է, որը տեղեկության և հաղորդագրությունների շտեմարան է, և այն մատչելի է մոդեմների և համակարգչային կապերի համար (Գրիգորյան, 2004):

Հաղորդակցման բոլոր տիպերը և, համացանցային հաղորդակցումը մասնավորապես, ենթադրում են առանձնահատուկ միջոցների կիրառում: Իրական ժամանակում իրականացվող, տեքստային հիմք ունեցող հաղորդակցության վերոհիշյալ տեսակների ժողովրդականության, տարածման և աճի հետ տեքստային նոր լեզվական միջոցի՝ հապավումների կիրառման անհրաժեշտություն է զգացվում, որի նպատակը հակիրճ և անմիջական շփում ապահովելն է: Նմանատիպ հապավումների օրինակներից են հետևյալ սկզբնատառային հապավումները՝

- ASAP – As Soon As Possible
- BTW – By The Way
- FWIW– For What It’s Worth
- FYI – For Your Information
- IMHO – In My Humble Opinion
- IMO – In My Opinion
- LOL – Laughing Out Loud
- ROTFL – Rolling On The Floor Laughing
- RTFM – Read The “F”-ing Mannual
- TIA – Thanks in Advance

Համացանցային շփման ընթացքում առանձնակի ուշադրության է արժանանում գրաֆիկական պատկերների կիրառումը: Այս դեպքում տեղեկությունը փոխանցվում է ոչ միայն տեքստերի ձևով, այլ նաև զանազան նկարների և ոչ բառային ձևերի միջոցով: Հայտնի է, որ տեքստի գրաֆիկական ձևն արտացոլում է դրա կառուցվածքը և ընթերցողին տրամադրում է ուղարկել ավելի հուզական և արտահայտիչ հաղորդագրություններ: Համացանցային շփմանը հատուկ է որոշակի գրաֆիկական միջոցների կիրառումը, որոնցից են, օրինակ, ոճավորված նկարները՝ հուզանշանները (սմայլիկները): Առանձնահատուկ ուշադրության են արժանանում նաև բացականչական նշանները, որոնց միջոցով արտահայտվում են բացականչություններ, հրահանգներ, զայրույթ կամ վրդովմունք, օրինակ՝

*When you think about it Joann... your partner should do all the things that **God does...AMEN!***

*We as Christians we need to remember these things when these feelings come. **Need to rebuke Satan and All his negative works!***



*OMG! One of the best groups of all times! So sorry they lost Freddie (the world lost him). I saw him do a concert with Queen. He's different than Freddie, but he's the best substitute I've heard. GO QUEEN AND GO ADAM!*

Վերը նշված օրինակներում, բացականչական նշանի առկայությունը կարող է վկայել հուզականության մասին՝ ընդգծելով կամ առանձնացնելով կարևոր միտքը:

Համացանցային շփման մեջ տրոհագիծը նույնպես շատ հաճախ է կիրառվում՝ փոխարինելով բազմակետը կամ ծառայում է որպես դադարի նշան, օրինակ՝

*Baaa... Hahaha you should wear pink earrings - it will go great with your outfit.*

*Architecture & Design it would be great if you could capture each of your pictures to inform people the name and location of these buildings. That's what people come to your page for - to look at the pictures and become informed. Thank you!*

*View over the Mondego river from the University - and me ... On top of the tower - I can't believe I crumbled up there, on all fours, because the door out was a meter by meter wide, and the ladder was almost vertical...*

Շփման ընթացքում համացանցի միջոցով գրուցակցի խոսքի հնչերանգը չընկալելու, ինչպես նաև սեփականը փոխանցելու հնարավորության բացակայության պատճառով շատ հաճախ կիրառվում են գլխատառեր կամ շեղատառեր: Օրինակ՝

***HURRY WHILE SUPPLIES LAST!!!  
ONLY IN EUROPE YOU WOULD FIND BEER IN  
VENDING MACHINES!***

Համացանցային շփման գրաֆիկական հատուկ նշաններից են նաև չակերտները, տառերի կրկնապատկումը, աստղանիշը և այլ միջոցներ: Այսպես, օրինակ, չակերտները, բացի իրենց հիմնական գործառույթից, օգտագործվում են նաև առանձին բառեր կամ ժարգոնային, մասնագիտական, բարբառային, ինչպես նաև հեզնական բնույթի արտահայտություններն ընդգծելու համար:

*You never know what this does to the real fans of her.*

*Thanks for keeping her **“ALIVE”***

*All right listen \*\*\* Both of you...*

*Haha I swear it's always the same people that comment on whatever I post.*

*- Yes, tha same \*\*\**

Սովորական տեքստում տառի կրկնությունը կիրառվում է հավելյալ հուզականություն ստեղծելու համար: Նշենք, որ այն սովորաբար կրկնվում է երկու անգամից ոչ ավելի: Համացանցային շփման մեջ հնարավոր են միննույն տառի բազմաթիվ կրկնություններ, ընդ որում, տվյալ կրկնությունը կարող է հանդիպել բառի սկզբում, մեջտեղում և վերջում՝ յուրօրինակ բառային նրբերանգներ հաղորդելով: Օրինակ՝

*That's really **hotttt** one.*

***Okieeeeeee** hurry up dudes.*

*AAAAAWEEEEESOOOME!!! I Super love this, so incredibly beautiful.*

*Yaaaas!!! I like so I can't wait for this live album.*

*WOOOWWWW!!! She's the greatest on the stage!!! LOL*

Այս և այլ բազմաթիվ օրինակների վերլուծությունից հետևում է, որ համացանցային դիսկուրսը որպես շփման տեսակ բնորոշելիս կարելի է փաստել, որ դրանում էլեկտրոնային ազդանշանը շփման նույն ավանդական գրավոր ձևն է, միայն թե շփման միջոցը ոչ թե թուղթն է, այլ էլեկտրոնային ազդանշանը: Համացանցային հաղորդակցության առանձնահատկություններից են նաև վիրտուալությունը, որը շփումն է անձանոթ, երևակայական գրուցակցի հետ, հեռավորությունը, այսինքն՝ առանձնացումը ժամանակի և տարածության մեջ, միջնորդավորվածությունը, որն իրականանում է տեխնիկական միջոցների օգնությամբ, թափանցելիության բարձր աստիճանը, երբ համացանցային շփման ունկնդրի, մասնակցի կամ համախոհի դերում կարող է լինել ցանկացած մարդ, գերտեքստի առկայությունը, որը հնարավորություն է տալիս իրականացնելու որոշ գործողություններ, ինչպիսիք են, օրինակ՝ տառերի տարանջատումը, սրբագրումը և այլն: Այլ կերպ՝ գերտեքստը ներառում է օժանդակ գործողություններ, որոնք արագացնում են անհրաժեշտ տեղեկույթի ստացման գործընթացը: Համացանցային դիսկուրսին բնորոշ է նաև մասնակիցների իրավահավասարությունը, հույզերի, դիմաշարժումների, զգացմունքների, փոխանցումը «հուզանշանների» միջոցով, տարբեր տիպի դիսկուրսների համադրումը (կենցաղային, գործնական, գիտական, գովազդային, քաղաքական և այլն),

ինչպես նաև համակարգչային էթիկան, այսինքն՝ համացանցային միջավայրում շփվող մարդկանց վարքագծի սկզբունքների և կանոնների ամբողջությունը:

Այսպիսով, համացանցային շփումը վիրտուալ միջավայրում իրականացվող հաղորդակցությունն է, որը դրա կարևորագույն առանձնահատկությունն է:

Հաղորդակցության համընդհանրացման պայմաններում մշակութային, տնտեսական և հասարակական այլ պաշարներ ու արժեքներ պահպանելու համար անհրաժեշտ է փնտրել նոր ճանապարհներ, ձևեր և միջոցներ: Հաղորդակցությունը մարդկության գոյության հիմքն է ամբողջ աշխարհում, և դրա կարևորագույն համակարգերից մեկն էլ հենց համացանցն է:

Այսպիսով, համացանցային հաղորդակցությանը բնորոշ են վիրտուալությունը, համընդհանրությունը (ցանցում յուրաքանչյուր օգտատիրոջ հետ շփվելու հնարավորությունը), գերտեքստայնությունը, գրառման տարբեր, օրինակ՝ տեքստային և բազմամիջավայր ռեժիմներում տեղեկության փոխանցման հնարավորությունը և այլն (Herring, 1994): Համացանցի հենց այսպիսի բազմազանության ու հարստության շնորհիվ է, որ ականատես ենք դառնում մարդկային մեծ և փոքր խմբերի միջև տարբեր տիպի փոխազդեցությունների, որոնք կարող էին երբեք էլ ի հայտ չգալ բանավոր կամ գրավոր հաղորդակցության ընթացքում: Հետևաբար կարելի է փաստել, որ այսչափ ուսումնասիրված լինելով հանդերձ՝ հաղորդակցության այս ոլորտը դեռևս լուրջ հետազոտման կարիք ունի, քանզի այն մեր իրականության մեջ արդիական է և ընդգրկում է նորագույն երևույթների հսկա ծավալ: Փաստորեն՝ կարելի է առանձնացնել վիրտուալ իրականության երեք հիմնական առավելությունները. լեզվակրի հետ իրական փոխազդեցու-

թյան հնարավորություն, մյուս օգտատերերի հետ անընդհատ և լիարժեք կապի մեջ լինելու բավարար ժամանակի առկայություն, ինքնուրույն մասնակցություն հաղորդակցության գործընթացին:

Համացանցային տարբեր նմուշների մեր ուսումնասիրությունից պարզվում է, որ հույզը ժանրային առանձնահատկություններ չի ենթադրում, սակայն դրա դիտարկումը հենքային կարևորություն ունի մեր ուսումնասիրության համար:

Ամփոփելով վերը նշվածը, կարելի է փաստել, որ համացանցային հաղորդակցությունը, լինելով միջանձնային շփման կարևոր միջոց և ներթափանցելով շփման տարբեր ոլորտներ, առանձնանում է իր բազմակողմանի և հեռանկարային բնույթով: Այն ներառում է զանգվածային, ներանձնային, ներխմբային հաղորդակցությունների այլ տեսակներին բնորոշ հատկանիշներ՝ մասշտաբայնություն, օգտատիրոջ և համակարգչի միջև կապի ստեղծում և այլն: Բացի այդ, համացանցային հաղորդակցությունը կենցաղային, գործնական, գիտական, գովազդային, քաղաքական և այլ տիպի դիսկուրսների ամբողջություն է, որն աչքի է ընկնում խոսքի անսահմանափակ ազատությամբ, հուզականությամբ, զգացմունքայնությամբ և արտահայտչականությամբ:

Իմաստային տարբեր միավորների հաղորդակցական ներուժի դրսևորումներից մեկն էլ իմաստի հուզական բաղադրիչն է, առանց որի հնարավոր չէ պատկերացնել հաղորդակցական որևէ գործընթաց: Այս հենքի վրա էլ ստորև փորձ է արվում քննության առնել հուզականության կարգի դրսևորման առանձնահատկությունները համացանցային հաղորդակցության մեջ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լեզվական նշանների փոխանակման գործընթացը անհրաժեշտաբար առաջ է բերում հաղորդակցության ուղղության, առդիմելու խնդիրը: Խոսքի գործադրումը որպես ամբողջական գործընթաց ուսումնասիրելու հայեցական պահանջին համընթաց լեզվաբանության մեջ աստիճանաբար հասունացավ նաև հաղորդակցական իրադրության կադապար ստեղծելու գաղափարը: Հաղորդակցական իրադրության կադապար ասելով ենթադրվում է «խոսող», «լսող», «հաղորդակցական իրադրություն», «ասույթ» տարրերի առկայությունը (տե՛ս Պարոնյան, 2011):
2. «Ֆիզիկական գործոնները» ենթադրում են սոցիալական իրավիճակներում մարդկանց խոսքային գործողություններով հիմնավորված համակարգ, որը պայմանավորված է հասարակության մեջ ընդունված խոսքային նորմերով ու օրենքներով:
3. Խոսքային գործունեության տեսության մեջ դրդումը կամ մոտիվը, ըստ էության, առարկայացված պահանջմունքն է, որը կապ է հաստատում դրդիչի, մտքի և ընդհանուր մտադրության միջև: Եթե մոտիվը որոշում է տվյալ խոսքային գործողության բնույթը, ապա հաղորդակցական մտադրությունն արտահայտում է հաղորդակցական այն նպատակը, որը խոսողը հետապնդում է լսողի վրա այս կամ այն ազդեցությունը գործելու համար (Առաքելյան, 2007):
4. Այս հարցին անդրադարձել է դեռևս Ֆ. Նիցշեն իր աֆորիզմներում՝ նշելով. «Մարդիկ ազատ ստում են բերանով, սակայն նրանց դեմքը, որն այդ ընթացքում նրանք ծամածռում են, ամեն դեպքում ճշմարտությունն է վկայում» (Ничше, стр. 303, 1990: Почецов, 2001, стр. 63): Սրանք այն բառերն են, որոնք շատ ճշգրիտ հավաստում են, որ տեսողական բնույթի հաղորդակցությունները վերահսկելն անհնարին է, մինչդեռ բառայինը՝ ոչ:

5. Հարկ է նշել, որ ի սկզբանե «դիսկուրս» եզրույթը ֆրանսիական լեզվաբանության մեջ նշանակում էր խոսքն ընդհանրապես և «տեքստ» եզրույթի հոմանիշն էր: Մակայն հաղորդակցական տեսությունների զարգացմանը համընթաց՝ այս հասկացությունների բովանդակությունը աստիճանաբար այլ իմաստ է ձեռք բերում, ընդ որում, Տ. Վան Դեյքն առաջիններից էր, որ տարանջատեց «դիսկուրս» և «տեքստ» եզրույթները (Dijk van, 1997: Бочарникова, 2010):
6. Գործարանական լեզվաբանության մեջ դիսկուրսը դիտվում է որպես լոկուտիվ, իլլոկուտիվ և պերլոկուտիվ մակարդակների եռատարր ամբողջություն: Լոկուտիվ մակարդակում արտացոլվում է ստորոգման բովանդակությունը՝ դիսկուրսի նշանակությունը: Իլլոկուտիվ մակարդակում դրսևորվում է խոսքի հաղորդակցական իմաստը, խոսողի մտադրությունը՝ հրաման, խնդրանք, հարցում: Պերլոկուտիվ մակարդակում դրսևորվում է այն ազդեցությունը, որը տվյալ խոսքային իրողությունը առաջացնում է լսողի վրա (ահաբեկում, համոզում, զվարճացում) (տե՛ս Պարոնյան, 2011, էջ 19):
7. Ուսումնասիրություններից պարզվում է, որ հաղորդագրությունների 55%-ը ընկալելի է դառնում դիմաշարժության, շարժմունքի օգնությամբ, իսկ 38%-ը՝ հնչերանգի և ձայնի ելևէջների միջոցով (Каймакова, 2008): Նպատակադրում կա նաև ճշտելու ոչ բառային հաղորդակցության գերակայող լինելու հանգամանքը: Այս ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ խոսքային, ձայնային և ոչ խոսքային (ըստ դեմքի արտահայտության) հաղորդակցությունների կապակցված ազդեցությունը նրանցից յուրաքանչյուրի ազդեցության ընդհանուր գումարն է ըստ համապատասխան գործակիցների: Այս հանգամանքը ևս մեկ անգամ փաստում է ոչ բառային խորհրդանշանների ուսումնասիրման կարևորությունն ու անհրաժեշտությունը:

8. Այստեղ տեղին է նաև «հաղորդասեր» հասկացության պարզաբանումը, որն իր բնույթով համապատասխանում է «շփվող, զրուցասեր» հասկացության նշանակությանը, իսկ ձևով մոտ է «հաղորդակցվող, փոխանցվող» նշանակությանը: «Հաղորդասեր» ասելով հասկանում ենք անհատի՝ շփումը հեշտությամբ հաստատելու և այն արդյունավետ պահելու կարողությունը: Մարդու հաղորդասեր լինելը կախված է ոչ միայն իր հոգեբանական տեսակից, այլև հասարակական կենսափորձից:
9. Համացանցային դիսկուրսի ուսումնասիրությունը սկիզբ է առել դեռևս 1984 թ., երբ լեզվաբան Նոամ Բարոնը հողված հրատարակեց՝ խոսելով համացանցային դիսկուրսի՝ որպես լեզվում տեղի ունեցող փոփոխությունների ազդեցության մասին: Հետագայում ուսումնասիրությունները շարունակեցին Դենիս Մուրեյը և Քերսթին Սեվերինսոն Էքլունդը, սակայն միայն Քեթրին Ֆերարայի, Հանս Բրունների և Գրեգ Ուիթմորի «Փոխգործուն գրավոր դիսկուրսը որպես նոր առաջացող ժանր» աշխատության լույրնծայումից (1991) հետո լեզվաբանները սկսեցին համացանցային դիսկուրսը լուրջ ուշադրության արժանացնել (տե՛ս Herring, 1994):
10. “A networking”- համակարգ, որը տարբեր սենյակներում, կառույցներում, քաղաքներում և այլուր գտնվող մարդկանց համակարգչային ցանցի միջոցով միմյանց հետ կապվելու հնարավորություն է ընձեռում (OALD, 2001):
11. Տեղային ցանցերը միավորում են միևնույն շենքի կամ կազմակերպության մի քանի համակարգիչ: Ի տարբերություն տեղային ցանցերի՝ ժամանակակից համաշխարհային ցանցերը (Internet), տարածական բնույթի հաղորդակցություններ են ներառում և սովյալները փոխանակելու համար կիրառում են տարբեր միջոցներ, հաճախ՝ հեռախոսային ցանցը:
12. Այսօր լայն տարածում ունեցող համացանցային հաղորդակցությունը տեքստային հիմք ունի, այսինքն՝ հաղորդագրություններ-



ըը կազմվում են համակարգչի ստեղծած աշխարհի օգնությամբ և որպես տեքստ ընթերցվում համակարգչի էկրանից մեկ մարդու կամ մարդկանց կողմից, որոնք հաղորդագրությունն ուղարկողից հեռու են: Տեքստային հիմք ունեցող համացանցային հաղորդակցությունը ներառում է էլեկտրոնային փոստը, քննարկման էլեկտրոնային հարթակները կամ խմբերը, գրույցը իրական ժամանակում: Հաղորդակցության նշված տարատեսակների լեզվական հատկանիշները տարբերվում են՝ կախված գործող հաղորդագրության համակարգից և հասարակական ու մշակութային համատեքստից: Այնուամենայնիվ, այս բոլոր ձևերն էլ մեկ ընդհանրություն ունեն. դրանց միջև տեղի ունեցող գործողությունը, նախ և առաջ հաստատվում է տեսողականորեն ներկայացված լեզվի միջոցով (Herring, 2008):

13. «Վիրտուալ իրականություն» ասելով հասկանում ենք հավանական, հնարավոր իրականությունը (դեռևս չիրականացած), որը փաստական կամ ընթացիկ (գործող) իրականության ճիշտ հակապատկերն է: Ժամանակակից փիլիսոփայական բառարանը «վիրտուալ» հասկացությունը սահմանում է որպես իրականում գոյություն ունեցող, բայց դեռևս չդրսևորված երևույթ (Современный философский словарь, 2004 ):
14. Հեռախորհրդաժողովները (Use-net) արտացոլում են նաև դրանց պատմությունը, որն սկիզբ է առել երիտասարդ նենգորդների (hackers) գործողություններից 1970-ականների վերջերին:

## ԳԼՈՒԽ 2

### ՀՈՒՅԶԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՆԱՅԻՆ ՇՓՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԱՐԸ

#### *2.1 «Հույզ» հասկացությունը որպես գիտական քննության օբյեկտ*

Հաղորդակցվելիս մենք ակամա, երբեմն նաև կամովի, փորձում ենք միաժամանակ ըմբռնել և գնահատել մեր զրուցակիցների հուզական ազդակները մեր իսկ ասածների, պահվածքի և վարքագծի վերաբերյալ: Հաղորդակցությունը նախ և առաջ հույզերի փոխանակում է, ընդ որում, հենց հույզերը կարող են խթան դառնալ շփումը սկսելու, ինչպես նաև այն ընդհատելու կամ ամբողջովին կասեցնելու (կանխելու) համար:

Մարդը, լինելով հասարակական էակ, մշտապես շփման կարիք ունի, քանի որ այն մարդկային կենսագործունեության պարտադիր պայմանն է: Ինչպես արդեն նշվել է, բնական լեզվի հիմնանպատակը մարդկանց միջև շփման իրականացումն է, որը պայմանավորված է ֆիզիկական, հասարակական, մշակութային և լեզվական գործոններով: Առանց շփման՝ անհատի և հասարակության փոխազդեցությունն անհնարին է: Հաղորդակցության միջոցների ընտրության և դրանց իրականացման համար փոխադարձ գործունեության ընթացքում զրուցակիցները փոխազդելու իրենց համապատասխան ծրագիրն են մշակում, կիսում ընդհանուր նպատակներն ու տեսակետները:

Հաղորդակցությունը նկարագրելիս պետք է հաշվի առնել դրա բազմատարրությունը, որը պայմանավորվում է մասնակիցների, նպատակների, ուղորտի, միջոցի և միջավայրի առկայությամբ: Բնականաբար, այս ամենն անհնար է պատկերաց-

նել, եթե անտեսվի դրանում հուզական բաղադրիչի առկայությունը՝ անկախ այն փաստից, թե հաղորդակցությունը տեղի է ունենում առերես, թե առցանց:

Հույզը սահմանվում է որպես մարդկային հոգու ուժեղ զգացողություն, ինչպիսիք են, օրինակ՝ սերը, աստելությունը, վիշտը (Longman, 2000): Հույզի առաջացման պատճառ կարող է համարվել կարիքների կամ հակումների իրագործելի կամ ոչ իրագործելի լինելը: Այսպես՝ Ն. Ֆրիդյան տարանջատում է կարիքների երկու հիմնական խմբեր՝ խորքային և մակերեսային: Առաջին խմբին են պատկանում այն կարիքները, որոնց բավարարման պահանջները կապվում են անվտանգության և որևէ բան իրականացնելու պատրաստակամություն նկարագրող վիճակների հետ: Մակերեսային կարիքները բնորոշվում են տիպային նպատակներին հատուկ եզրույթներով, ինչպես, օրինակ, մարդկային իրավունքի խախտման պատճառով առաջացած զայրույթն ու վրդովմունքը (Frijda, 2009, Reisenzein, 2009):

Քանի որ մարդու հուզական համակարգը ամենաբարդ համակարգերից է, այն բազմակողմանի ուսումնասիրություն է պահանջում՝ առավելապես դրա լեզվական առումով: Օբյեկտիվ իրականության մեջ առարկաների ու երևույթների ճանաչողության գործընթացում մարդիկ արձագանքում կամ հակազդում են դրանց տարբեր գնահատականների կամ զգացմունքային տարբեր դրսևորումների միջոցով, որոնք էլ, բնականաբար, իրենց արտահայտությունն են գտնում լեզվում:

Հույզերի ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունի Վ. Շախովսկին, որը ներմուծել է «հուզաբանություն»<sup>1</sup> եզրույթը: Հուզաբանությունը հույզի լեզվաբանությունն է: Հույզերի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի

դրանց տարատեսակ դրսևորումների դիտարկումը տեքստի սահմաններում և հաղորդակցության համատեքստում: Եվ իրոք, հույզերի բնույթի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն մարդու՝ իր իսկ էությունը գիտակցելու և հասկանալու առումով, այլև, լայն առումով, շրջապատող մարդկանց ավելի խորը և հիմնովին հասկանալու համար: Հաղորդակցական լեզվաբանությունն ուսումնասիրում է լեզվական բոլոր միավորների հաղորդակցական ներուժը՝ ըստ դրանց տարբեր տիպերի: Մեր նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես է հուզականությունը դրսևորվում հաղորդակցության մեջ, ինչպիսին է հույզի հաղորդակցական ներուժը, և որոնք են դրա արտահայտության տարատեսակ միջոցները:

«Հուզաբանություն» ասելով հասկանում ենք գիտելիքի ամենատարբեր ոլորտների գիտական հետազոտությունների ամբողջությունը, որն ինչ-որ ձևով կամ չափով անդրադառնում է մարդու հուզական ոլորտին (Филимонова, 2007): Այսօր հույզերի ուսումնասիրությունը չափազանց արդիական և կարևոր է, և դրա վերաբերյալ ավելի համոզիչ և օբյեկտիվ արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է համադրել լեզվաբանության ու հոգեբանության ոլորտների ուսումնասիրության մեխանիզմները: Հույզերը թափանցում են մարդկային ողջ հաղորդակցական գործունեության մեջ՝ ծնված օրից մինչև կյանքի վերջը: Ահա սա է պատճառը, որ ժամանակակից լեզվաբանության մեջ հույզերն ուսումնասիրվում են թե՛ իմաստաբանության և թե՛ հաղորդակցության ոլորտներում, այսինքն՝ դիտվում են ոչ թե որպես առանձին սուբյեկտի, այլ միջսուբյեկտային կենսափորձ, որը ներխուժում է հաղորդակցական գործընթաց և սահմանվում հատուկ բառային և ոչ բառային նշաններով (Шаховский, 2009): Ցանկացած ասույթ կա-

րող է առաջացնել որոշակի հույզեր, իսկ սա նշանակում է, որ հույզերը ներթափանցում են լեզվական համակարգի բոլոր մակարդակները: Ուստի, ինչ խնդրով էլ զբաղվեն լեզվաբանները, հստակ կարելի է ասել, որ հետազոտության որևէ փուլում նրանք առնչվելու են հույզերի լեզվական գործառույթների դրսևորումների հետ: Փիլիսոփայական մոտեցման կողմնակիցներն առավելապես շեշտում են բանականի ու զգացականի գուգակցումը, ըստ որի՝ բանականն ու հուզականը (արտաբանականը, ոչ բանականը) առկա են մարդկային գործունեության յուրաքանչյուր ոլորտում և սերտորեն կապված են նրա վարքագծի հետ: Անհատը մտքին տալիս է տրամաբանական ձև՝ չիմանալով, թե ինչպես է այն գոյանում: Նա գիտակցաբար նպատակներ է հետապնդում, սակայն առաջնորդվում է արտաբանական ցանկություններով (Орлова, 2009): Փաստորեն, բանականն ու ոչ բանականը միահյուսված և վերադասավորված են՝ փոխադարձաբար լրացնելով միմյանց: Բանականը, լինելով մարդկային էության բնորոշ հատկանիշ, չի որոշում և երբեք էլ չի որոշել մարդկային ողջ կյանքը, քանի որ մարդը երբեք չի կարող լինել լիովին բանական (Золотухина, 2002): Առօրյա կյանքում մարդիկ գրեթե միշտ բանական են մասամբ՝ կախված իրավիճակից: Որոշակի դեպքերում մարդիկ կարող են դրսևորել արտաբանական (կամային, հուզական, ինտուիտիվ) և ոչ բանական (հիմար, անիրագել, մոլուցքներով տարված) վարքագիծ:

Մարդկային հույզերը կապված են մարդու գիտակցության հետ և միջնորդավորվում են ճանաչողությամբ: Մտքերի ու զգացմունքների, ինչպես նաև բանականի ու հուզականի ամբողջությունը վկայում է այն մասին, որ մարդ արարածն արտացոլում է այն ամենն, ինչ զգում է: Այս և նմանատիպ ապ-

րումներն իրականանում են մարդկանց խոսքային վարքում: Խոսքային վարքը կարող է ինքնին արտացոլման, այսինքն՝ գիտակցության առարկա լինել: Փաստորեն, գիտակցությունը, որն օբյեկտիվ իրականության արտացոլումն է, հանդես է գալիս մտածողության, զգացումների, կամային վիճակների ձևով: Այն ոչ միայն գիտելիք է, այլև մարդու՝ այդ գիտելիքի նկատմամբ ունեցած ապրում, որը կարող է քիչ թե շատ համապատասխանաբար արտահայտվել բառերով և դրանով իսկ ներառված է հաղորդակցության մեջ: Յուրաքանչյուր բառ արդեն իսկ ընդհանրացնում, նշանակում և մատնանշում է ինչ-որ բան, հետևաբար հուզական բառը նույնպես կոնկրետ հույզի ընդհանրացումն է: Այդ իսկ պատճառով կարելի է ենթադրել, որ հույզի լեզվական արտահայտումը մտավոր բնույթ է կրում, և որ հույզն ինքնին մարդու մտածողության (բանականության) մասն է (Шаховский, 2000; Адамчук, 2010): Հույզերն իրականության արտահայտման ձևերից են, ուստի մարդու ճանաչողության ոլորտների շարքում գոյություն ունի նաև հուզական-զգայական ոլորտը: Եվ քանի որ լեզուն ավելին է, քան պարզապես բանական տեղեկության փոխանցման կամ ստացման միջոց, ապա այն պետք է ներառի նաև հուզական գործառույթ և, հետևաբար, այն իրականացնող համապատասխան կողմ: Հույզերի միջոցով մարդը յուրահատուկ փորձ է ձեռք բերում, որն ամրակայվում է գիտակցության և մտածողության մեջ՝ լեզվում բառային միջոցներով նշելով գոյություն ունեցող օբյեկտները, երևույթներն ու իրավիճակները, ինչպես նաև մարդու՝ դրանց տրվող հուզական գնահատականը:

Բնական է, որ բանականությունն ու հույզերը սերտորեն կապված են միմյանց հետ, ընդ որում, հույզն ակտիվացնում է բանականությունը, իսկ բանականությունը մեղմանում է հույ-

գերի միջոցով: Հույզերը ոչ միայն առաջանում են հատուկ իրավիճակներից, այլև հենց իրենք են առաջացնում արտասովոր իրավիճակներ: Հույզերն անբաժան են լեզվից, դրանք կարելի է և պետք է ուսումնասիրել լեզվի միջոցով, և հենց լեզուն է հույզերի ուսումնասիրման թե՛ օբյեկտը, թե՛ միջոցը: Հաղորդակցվողը, որն օժտված է հուզականությամբ, կարող է ըստ արժանվույն ընկալել իր խոսքնկերոջ հույզերի բառային և ոչ բառային դրսևորումները ափսոսանքի և գեղարվեստական հաղորդակցության մեջ, նա կարող է արտահայտել և նկարագրել հուզական զգացումները, հմտորեն կառավարել իր և ուրիշի հույզերը:

Բանականությունն ու լեզուն փոխկապակցված են, այդ պատճառով մարդկային մտածողության ճշմարտացիությունն ի հայտ է գալիս խոսքային վարքագծի միջոցով, այդ թվում նաև հուզական (Шаховский, 1987): Ելնելով այն փաստից, որ խոսքում հուզականության առկայությունը ժխտելն անիմաստ է, և որ լեզուն ու մտածողությունն անքակտելիորեն փոխկապակցված են՝ տրամաբանական է ընդունել մտածողության հուզականորեն երանգավորված լինելու փաստը: Սա խոսում է այն մասին, որ մտածողության գործունեությունը պայմանավորված է նաև զուգորդումների գոյությամբ. այն պայմանավորվում է զուգորդումներով: Մտածողությունը՝ որպես հոգեկանի իրական գործընթաց, մտավորի ու հուզականի ամբողջությունն է (Рубинштейн, 1979, Мягкова, 1990): Մտածողության գործընթացի վերլուծությունը պետք է սկսել նախ և առաջ գիտակցության ոլորտից, որն ընդգրկում է մարդկային հետաքրքրությունները, աֆեկտներն ու հույզերը (Выготский, 2022): Այսպիսով, կարելի է ևս մեկ անգամ փաստել, որ մտածողությունը սերտորեն կապված է հուզական աշխարհի հետ,

որի շնորհիվ մարդն ընկալում և իր գործունեությամբ արտացոլում է արտաքին աշխարհը: Մտածական ակտի ուսումնասիրությունը պետք է սկսել գիտակցության մոտիվացիոն ոլորտից, որն ընդգրկում է հակումներն ու պահանջումները, դրդումներն ու հույզերը: Չնայած մոտիվացիայի ոչ խոսքային բնույթին՝ այն չափազանց կարևոր է լեզվախոսքային գործունեության ընթացքում, քանի որ, ինչպես հայտնի է, խոսքը դեկավարվում է ոչ միայն լեզվական, այլև արտալեզվական գործոններով: Ըստ հոգեբանների՝ հույզերն արտահայտում են գործունեության մոտիվների և դրանց իրականացման հարաբերությունները: Դրանք կապված են ոչ թե առանձին գործողությունների, այլ հենց գործունեության՝ իբրև ամբողջի հետ (Леонтьев, 1977):

Հույզի բանաձևը, ինչպես արդեն նշվել է, անպատճառ ունի գնահատողական հիմք. անձին թվում է, որ օբյեկտն իր համար հաճելի կամ տհաճ է բարոյական, էթիկական, հասարակական, քաղաքական կամ այլ պատճառներով, և դա արտահայտվում է լեզվում: Նրա գիտակցության մեջ ձևավորվում են հույզի բազմաբևեռային սահմաններ, ինչպես, օրինակ, բացասական հույզերի սահմաններում առանձնացվում են արհամարհանքը, քամահրանքը, ստորացուցիչ բառերը: Ըստ գնահատման տարբեր հայեցակերպերի (բարոյական, էթիկական, հասարակական, քաղաքական), քամահրանքի բնույթն ու աստիճանը փոխվում է (օրինակ փոխվում է ազնիվ մարդու քամահրանքի տեսակը գողի, աշխատող մարդունը՝ անգործի և կամ նվիրյալ զինվորինը՝ դավաճանի նկատմամբ) (Шаховский, 1987): Այսպիսով, ըստ վերը նշվածի, հույզերն ունեն դրական, բացասական կամ չեզոք բնույթ:



Հարկ է անդրադառնալ նաև բևեռային հույզերին, որոնցից են ուրախությունը, տխրությունը, տառապանքը, ձանձրույթը, բավարարվածությունը, հաճույքը և այլն: Ըստ որոշ հեղինակների, չեզոք հույզերից է, օրինակ՝ հետաքրքրասիրությունը (Мягкова, 1990):

Որոշ լեզվաբաններ հույզի կարևոր բաղադրիչ են համարում այսպես կոչված «դիպվածը» (episode), քանի որ «հույզ» եզրույթը, ընդհանուր առմամբ, կիրառվում է կարճատև երևույթներ մեկնաբանելու համար, և ուստի այն սահմանվում է որպես անհատի կյանքում տեղի ունեցող միջադեպ, դիպված (Scherer, 2001)<sup>2</sup>:

Փիլիսոփաներից ոմանք տարանջատում են հույզերի երկու տարատեսակ՝ միջադեպերը՝ որպես կարճատև և հուզավիճակները՝ որպես երկարատև երևույթներ (Scherer and Wallbott, 1994, Scherer, Tran, Wranik, 2004): Այսպիսով, հույզի կարևոր բաղադրիչ է ինչ-որ մի բան տեսնելու, լսելու, հիշելու միջադեպը և այլն: Ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող այսպիսի միջադեպերը համարվում են զգայական, ճանաչողական, բանական հույզի հիմքը: Դրանք կարող են տեղի ունենալ առանց հույզի, բայց ոչ մի հույզ չի կարող իրականանալ առանց այս հիմքերից որևէ մեկի: Այս տեսակետը փաստում է, որ հույզերի մասին կարծիքը ձևավորվում է հենց դրանց հիմքերից: Այսպես, օրինակ, ներկայացումից հիացած լինելը վերաբերում է այդ ներկայացմանը, քանի որ այն կապվում է տվյալ ներկայացման ընկալման կամ ընդունման հետ (Mulligan, Scherer, 2001): Որոշ դեպքերում հույզերը պետք է կիրառվեն պայմանական միջադեպեր արտահայտելու համար, որոնք ներառում են տեսնելու, լսելու, զգալու, հիշելու, ակնկալելու, դատելու և այլ գործընթացներ: Այսպիսի և նմա-

նատիպ այլ ճանաչողական և իրադրային (բանական միջադեպերի) օբյեկտները կարող են լինել արտաքին կամ ներքին, իրական կամ ձևական, կոնկրետ կամ վերացական: Հենց դրանց միջադեպային պայմանականությունն է, որ հաստատում է հույզերի պայմանական լինելը<sup>3</sup>:

Հարկ է նշել, որ շատ հաճախ «հույզ», «զգացմունք» և «աֆեկտ» եզրույթները շփոթմունք են առաջացնում: Իրականում զգացմունքները բարձրագույն հույզեր են: Զգացմունք է համարվում մարդու հուզական վերաբերմունքն իրականության առարկաների ու երևույթների հանդեպ: Ի տարբերություն հույզերի՝ զգացմունքներն ավելի տևական կայուն և ընդհանրացված են՝ արտահայտելով անհատի զարգացման ընթացքում ձևավորվող արժեքներն ու պահանջմունքները (Առաքելյան, 2007): Ավելին՝ զգացմունքն այն զգացողությունն է, որը բխում է նախկին կենսափորձից: Այն անձնական է և կենսագրական, քանի որ յուրաքանչյուր մարդու համար բնութագրական են նախկինում ունեցած զգացողությունները, որոնց արդյունքում նա եզրակացնում կամ մեկնաբանում է սեփական զգացմունքները: Հույզը՝ որպես զգացմունքի դրսևորում, ի տարբերություն զգացմունքի, կարող է լինել իրական կամ ձևական: Եվ ուրեմն, ի՞նչ տարբերություն կա «հույզ ունենալու» և «ինչ-որ բան զգալու» միջև: Հետևելով գիտնականների պարզաբանումներին, կարելի է եզրակացնել, որ զգացմունքը հանգեցնում է հետադարձ կապի և սեփական զգացումի՝ հնարավոր դարձնելով մտավոր պատկերումն ու հաղորդակցությունը, այսինքն՝ զգացումը վերագրվում է շոշափելի զգացողություններին (Mulligan, Scherer, 2001):

Երեք առանցքային հասկացություններից (հույզ, զգացմունք, աֆեկտ) աֆեկտն ամենավերացականն է, քանի որ այն

չի կարող լիովին իրականանալ լեզվում և բացի այդ, այն միշտ նախորդում է գիտակցությանը կամ դուրս է գիտակցությունից: Աֆեկտները հուզական այն գործընթացներն են, որոնք արագորեն համակում են մարդուն և բուռն ընթացք ստանում: Աֆեկտի ուժը դրա չձևավորված և վերացական լինելու մեջ է: Առանց աֆեկտների զգացմունքները չեն ապրվում, որովհետև դրանք չունեն ոչ մի ուժ, իսկ առանց զգացմունքների բանական որոշում կայացնելը խնդիր է դառնում (Damasio, 2005): Ըստ իրենց վերացական բնույթի, աֆեկտներն ավելի ընկալելի և փոխանցելի են, քան հույզերն ու զգացմունքները: Ահա սա է պատճառը, որ չի կարելի շփոթել աֆեկտը հույզի և զգացմունքի հետ: Այսպիսով, զգացմունքներն անձնական են և կենսագրական բնույթի, հույզերը՝ հասարակական, իսկ աֆեկտները՝ միջանձնային (Shouse, 2005): Ի տարբերություն հույզերի՝ աֆեկտները կարճատև են:

Հույզերը երանգավորում են մեր իրականությունը: Ուսումնասիրելով դիմաշարժումները, մարմնի շարժումները, խոսքի հնչերանգը, ինչպես նաև մարդկանց՝ հուզմունքից գունատվելու, վախից կամ ուրախությունից կարմրելու, դողալու և այլ հակումները՝ կարելի է գնահատել խոսողի հուզավիճակը և նրա խոսքային վարքը, որն էլ իր հերթին կարող է փաստել հաղորդակցության հուզական բնույթը: Զրուցակիցների հարաբերությունները միմյանց նկատմամբ կարելի է որոշել նաև մարմնի շարժումների միջոցով (ձեռք սեղմում, ծոծրակի կամ քթի ծայրի շփում և այլն): Այս ամենն արտալեզվական դրսևորումներ են: Ինչ վերաբերում է դրանց լեզվական դրսևորումներին, ապա բազմազան է հույզերի նշանակությունը լեզվական գիտակցության մեջ: Հույզերի նշանակումը լեզվի միջոցով, դրանց արտահայտումը լեզվում և հենց խոսողների՝

դրանց տարբերակումը սերտորեն կապված է հույզերի դասակարգման խնդրի հետ:

Լեզուն միջոց է, որի օգնությամբ մարդիկ նկարագրում են իրենց շրջապատող աշխարհի առարկաներն ու իրողությունները և խթանում դրանց փոխազդեցությունը (Трофимова, 2009): Լեզվում կա հուզական միջոցների որոշակի պաշար, որից կախված է հաղորդակցության բնական լինելը: Այն նախ և առաջ արդի տեղեկատվության փոխանցման, ստացված գիտելիքները բանական մշակման ենթարկելու, և դրանք սերնդեսերունդ փոխանցելու միջոց է: Մակայն այս բոլոր գործընթացներն անհնարին են առանց զգացումների, ապրումների, ցանկությունների առկայության և դրանք չեն կարող լեզվաբանական ուսումնասիրության նյութ չդառնալ: Ըստ Վ. Շախովսկու՝ մարդու մեջ յուրաքանչյուր երևույթ գործի է դրվում հույզերի շնորհիվ, այդ թվում և նրա ստեղծագործական մտածողությունն ու վարքը: Դրա մասին դեռևս փաստել են Շ. Բալին, Է. Ստանկևիչը, Դ. Գոուլմանը և այլք (Шаховский, 2009):

Վ. Հակի մեկնաբանմամբ, լեզուն ժողովրդի ինքնարտահայտման ձևն է, և այդ ձևը անհամաչափ և ազգային բնորոշում ունի, որի հետևանքով միջմշակութային շփման ընթացքում հնարավոր են հաղորդակցական անկանոնություններ կամ ընդհատումներ (Гак, 1997): Ըստ մի շարք հեղինակների (Մյազկովա, Ֆրումկինա, Շախովսկի և այլք)՝ լեզվի ողջ բառապաշարը հուզական երանգավորում ունի: Յուրաքանչյուր ժողովուրդ յուրովի է ընկալում իրական աշխարհը և յուրովի իր հուզական արձագանքն է տալիս այդ իրականությանը, որի արդյունքում ի հայտ են գալիս լեզվի հուզական արտահայտման տարբերությունները, որը որոշակի խոչընդոտ է<sup>4</sup> միջմշակութային հաղորդակցության համար:

Ու. Գրեյը նույնպես այն կարծիքի կողմնակիցն է, որ մտածողությունն<sup>5</sup> ու ճանաչողությունը կողավորվում են հույզերի միջոցով և ոչ մի կասկած չկա, որ հույզերը ներգրավված են գիտակցության և ճանաչողության կառուցվածքում (Шаховский, 1987): Այսպես, հույզերը, ճանաչողությունն ու արտացոլումը փոխադարձաբար ազդում են միմյանց վրա, ընդ որում, հույզերը մասնակցում են ճանաչողության գործընթացին, սակայն չեն համարվում վերջինիս բաղկացուցիչը: Հույզերը պարզապես ուղեկցում և երանգավորում են ճանաչողությունը, ուստի ճանաչողությունը ոչ այլ ինչ է, քան գիտելիքի և դրա բովանդակության կապ (հարաբերություն): Արտացոլումն այս դեպքում հանդես է գալիս որպես բառի մեջ օբյեկտների, իրողությունների հուզական գնահատականի արտահայտություն և որպես առաջացման պայման: Ահա սա է իրականության արտացոլման հուզական ձևի որակական առանձնահատկությունը: Ի տարբերություն ճանաչողական արտացոլման՝ հույզերն արտահայտում են սուբյեկտիվ վերաբերմունք, որում աշխարհի առարկաներն իրենց դրսևորումն են գտնում մարդու խոսքային գործունեության, կարիքների, նպատակների և դրդումների մեջ: Հույզի և ճանաչողության փոխազդեցության խնդիրը լեզվաբանության մեջ իր լուծումն է ստանում՝ հույզերն անվանելու, գնահատելու, նկարագրելու և արտահայտելու, դրանց բառայնացման ու պատկերման միջոցների ուսումնասիրմամբ (Шаховский, 2009):

Հնգելեզվաբանական մոտեցումը, համադրում է հուզականն ու բանականը: Առաջինի նպատակը խոսողի հուզական ինքնարտահայտումն է և լսողի՝ պատասխան հուզական ազդակի ակնկալումը, իսկ երկրորդի դեպքում խոսողը գրավում է համոզիչ փաստերով ու փաստարկներով, որոնք ազդում են մարդկային գիտակցության վրա (Zajonc, 1984):

Փաստորեն՝ խոսքային ներգործման բանական միջոցներն են փաստարկները, շարադրվող նյութի տրամաբանական լինելը, ներկայացվող փաստարկների հիմնավորված և ճշգրիտ լինելը, մինչդեռ հուզական են անհանգստացնող, զարմացնող, ապշեցնող, տխրեցնող և նմանատիպ այլ հույզեր ու զգացմունքներ առաջացնող միջոցները: Հույզերի հոգելեզվաբանական ուսումնասիրություններն առաջ են քաշում հույզերի մի շարք տեսություններ: Ամենայն հավանականությամբ սա վերաբերում է քննության ենթարկվող առարկայի առանձնահատկություններին, որոնք բավական բարդ են ուսումնասիրման համար, որն իր հերթին պայմանավորված է նաև ոլորտին վերաբերող համակարգված ուսումնասիրությունների նորությամբ և սակավաթվությամբ:

Ավանդական լեզվաբանության մեջ ընդունված էր կարծել, որ հուզականն ու բանականը լեզվում, խոսքում, տեքստում հակասական երևույթներ են: Այս շղթայում լեզուն կապված է մտքի հետ և գործում է նրա հետ համաժամ, իսկ հույզերը՝ լոկ աղոտ նշանակցություն են ներկայացնում, դիցուք, բառի իմաստային առանձնահատկությունը հասկանալու համար: Սակայն այս դրույթը հիմնավոր համարվել չի կարող, քանի որ, ինչպես նշում է Ս. Իոնովան, լեզուն համարվում է լեզվական անհատի կարևորագույն ու բնորոշ մարդկային հատկանիշը (Ионова, 2004):

Հույզերն առարկայանում են արտաքին երևույթներում, որոնք են վարքը՝ դիմաշարժությունը, շարժմունքները, խոսքը և այլն, այսինքն՝ ամենատարբեր դրսևորումները, որոնք շրջապատում ընկալվում են որպես այս կամ այն հույզի հարացույց: Այսպիսով, հույզերը ներկայացնում են խոսողի հոգեբանական վիճակը, նրա պատասխան ազդակներն իրադարձություններ-

րին և հաղորդակցման մասնակիցներին, նրանց վարքին, օբյեկտիվ իրականության մեջ առկա ներքին և արտաքին, ինչպես նաև լեզվական ու արտալեզվական գործոններով պայմանավորված առարկաներին: Գիտական հոգեբանության զարգացմանը համընթաց՝ հույզն իր բաղադրիչների հետ միասին վերլուծելու հաջող փորձեր են արվել: Թերևս առավել հայտնի է զգացմունքի վերաբերյալ Վ. Վունդի առաջ քաշած տեսությունը, ըստ որի՝ զգացմունքները հնարավոր է վերլուծել ըստ հաճելի/տհաճ, լարվածություն/թուլություն և գրգռվածություն/հանգստություն գործոնների: Հույզերից յուրաքանչյուրը կարող է վերը նշվածներից որևէ մեկի յուրովի համակցումը լինել (Byndt, 1984):

Բացի Վ. Վունդի հարցադրումից՝ առաջ են քաշվել հույզի նկարագրական այլ տեսակետներ ևս: Այդուհանդերձ, դժվար է բոլոր հույզերը դասակարգել, եթե հարցին մոտենանք որոշակի տեսանկյունից: Պարզ չէ՝ հաճելի/տհաճ հակադրությունն արդյոք կներառի՞, թե՞ կբնորոշի հույզը, քանի որ աֆեկտային ազդակներից յուրաքանչյուրն էլ ինչ-որ կերպ ձևավորում է վերը նշված տեսակետը:

Այս առումով հետաքրքրական է Ք. Օութլիի մոտեցումը, ըստ որի՝ հույզերի իրական տարբերությունները դրանց առանձնացումն է ըստ գործողության և որակական հատկանիշների: Այսպես, մեկ հույզը կարող է սահմանվել որպես հաճելի կամ տհաճ աֆեկտային կենսափորձ, որը ենթադրում է երևույթի բնութագրական որակ և ձևավորում է հակազդման երեք համակարգ՝ ճանաչողական-անհատական, վարքագծային-արտահայտչական և ֆիզիոլոգիական-հարմարվողական (Oatley, 2009; Reisenzein, 2009):

Բոլոր հույզերն էլ ունեն որևէ «շահավետ» գործառույթ, որը համապատասխան վարքագծային ազդակներն արդյունավետորեն իրականացնելու հնարավորություն է տալիս սուբյեկտին: Խոսքը նաև բացասական հույզերի մասին է, որոնք հասարակական հարմարվողականության և անձնական ինքնակարգավորման հարցում առավել կարևոր գործառույթ են իրականացնում:

Ըստ Ջ. Ռիվլի՝ հույզն ունի երեք հիմնական գործառույթներ՝ հարմարվողական<sup>6</sup>, հասարակական և շարժառիթային (Reeve, 2009): Հնարավոր է, որ հույզի առավել կարևոր գործառույթներից մեկն օրգանիզմի նախապատրաստումն է շրջակա պայմաններից բխող վարքագծի արդյունավետ իրականացմանը՝ կենտրոնացնելով դրա համար անհրաժեշտ էներգիան, ինչպես նաև վարքն ուղղելով դեպի կոնկրետ օբյեկտ: Ռ. Պլուտչիկն ընդգծում է հույզերի ութ գլխավոր գործառույթ և համամիտ է գործառական այնպիսի լեզվի ստեղծման գաղափարին, որը նույնացնում է վերը նշված ազդակներից յուրաքանչյուրը՝ ըստ իր համապատասխան հարմարվողական գործառույթի: Այս կերպ՝ հույզն ուսումնասիրելու համար ավելի հեշտ է իրականացնել այս գործընթացը և ավելի արդյունավետ գործադրել փորձառական մեթոդը: Հույզերի՝ որպես հարմարվողական մեխանիզմների կարևորությունը մեկնաբանել է դեռևս Չ. Դարվինը, որը փաստում էր, որ հույզը հարկավոր է համապատասխան վարքը պարզեցնելու համար: Սակայն հույզերն այն գործընթացներից են, որոնք բնական ընտրության սկզբունքին ոչ միշտ են ենթարկվում՝ ղեկավարվելով երեք հիմնական երևույթներով՝ մտածողության վրա հիմնված գուգորդումներ<sup>7</sup>, հակազդումներ և նյարդային համակարգի ակտիվ գործունեություն (Plutchik, 1991):



Նոր դարվիչյան կողմնորոշման առավել հայտնի ներկայացուցիչներից են Ռ. Պլուտչիկը, Փ. Էկմանը և Ք. Իզարդը: Հետազոտողներն իրենց վերլուծությունները կենտրոնացնում են հույզի հենց հարմարվողական գործառույթի վրա և ուրույն հետաքրքրություն են ցուցաբերում հույզերի արտահայտչամիջոցների ուսումնասիրություններում:

Քանի որ հույզի հիմնական գործառույթներից մեկը համապատասխան վարքագծերին բնորոշ հասկանիչների վերհանումն է, հույզերի արտահայտումը թույլ է տալիս կանխագուշակել հենց նրանց հետ զուգորդվող վարքը, որն անհերքելի նշանակություն ունի միջանձնային հարաբերություններում: Ք. Իզարդը հույզերի բազմաթիվ հասարակական գործառույթներ է առանձնացնում, որոնցից է հասարակական շփման պարզեցումը, դրանցից շատերի վարքին հետևելը, ինչպես նաև աֆեկտային վիճակներում հաղորդակցություն իրականացնելու հնարավորություն ընձեռելը (Izard, 1977):

Հույզն ու շարժառիթը միմյանց հետ բավական սերտ կապի մեջ են: Հույզերը, ինչպիսին, օրինակ, ուրախությունն է, դրական ազդեցություն ունեն հասարակական կապերի և միջանձնային հարաբերությունների վրա, մինչդեռ ցասումը, օրինակ, կարող է առաջացնել թե՛ կանխարգելող, թե՛ համարժեք (հարիր) պատասխան: Հույզերի արտահայտումը կարող է դիտարկվել որպես սահմանափակ շարժառիթների մի շարք, որոնք ավելի դյուրին են դարձնում համապատասխան վարքագծերի իրականացումը: Հույզն ակտիվացնում է մոտիվացված վարքը: Այն վարքագիծը, որը հուզականորեն հազեցած է, իրականանում է առավել մեծ ուժգնությամբ: Ինչպես արդեն նշել ենք, հույզը ցանկացած պահանջմունքի դեպքում համապատասխան վարքի արդյունավետ իրականացումը հեշտաց-

նելու հարմարվողական գործառույթ ունի: Այսպես՝ ցասումը պաշտպանական ազդակներ է առաջացնում, ուրախությունը՝ միջանձնային համակրանք, անակնկալը ուշադրություն է գրավում նոր շարժառիթներից ելնելով և այլն: Այսպիսով, կարող ենք ասել, որ ողջ մոտիվացված վարքագիծն առաջացնում է հուզական ազդակ, և հույզն էլ իր հերթին հեշտացնում է հենց մոտիվացված վարքագծերի պարզաբանումը (Аванесова, 2010):

Հույզերի գոյությունն ամրապնդում է ճանաչողությունը, իսկ ճանաչողությունն իրականանում է հույզերի միջոցով, որոնք ոչ միայն ծագում են կոնկրետ իրադրություններից, այլև հիմք են դառնում այդօրինակ իրադրություններ ստեղծելու համար: Կան մոտեցումներ, ըստ որոնց հույզերի մասին տեսությունները կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբում այն տեսություններն են, որոնցում հուզական և ճանաչողական գործընթացներն ուսումնասիրվում են որպես հիմնովին տարբեր երևույթներ կամ որպես տարբերվող մեխանիզմներ: Երկրորդ խմբում ճանաչողական բնույթի այն տեսություններն են, որոնք կարևորում են հատկապես հույզերի արտահայտման ընթացքում իրականացող չտարբերակված ազդակների դերը: Երրորդ խմբում ճանաչողական այն տեսությունն է, որում, ի տարբերություն երկրորդի, բնախոսական ազդակները չեն դիտարկվում որպես հույզի արտահայտման պարտադիր պայման: Ինչ վերաբերում է հիմնական հույզերին, ապա դրանք նկարագրող արդիական տեսությունները տարբեր են (Izard, 1977; Ekman, 2016): Ըստ Ք. Իզարդի, հույզը, որպես կանոն պարզ, սակայն յուրահատուկ նյարդային հիմք ունի՝ ներառելով նույնքան պարզ և առանձնահատուկ զգացումներ: Նույն հեղինակը նշում է, որ այս պահանջումները բավարա-

րող հույզերն են հաճույքը, հետաքրքրությունը, տխրությունը, ցասումը, զգվանքը, վախը և արհամարհանքը: Հիմնարար հույզերի համադրումից առաջանում են նաև բարդ հուզական վիճակներ, ինչպիսին է, օրինակ, անհանգստությունը, որը կարող է ներառել վախ, ցասում, հետաքրքրություն և մեղքի զգացում (Психология Эмоции, 1984): Դատելով վերը նշվածից՝ հույզերը կարելի է դասակարգել երկու բևեռային խմբերի. դրական, որոնք առաջանում են դրական գործողություններից և բացասական, որոնք դրդում են այնպիսի ակտիվության, որն ուղղված է վնասակար գործոններից խուսափելուն: Առավել բարդ մակարդակում առանձնացվում են գոհունակությունը (դրական զգացումներ), դժգոհությունը (բացասական զգացումներ) և անտարբերությունը (չեզոք զգացումներ): Սակայն հուզական ապրումները միանշանակ բնույթ չեն կրում, քանի որ միևնույն առարկան կարող է առաջացնել հակասական հուզական հարաբերություններ: Այս երևույթը ստացել է զգացմունքների «երկարժեքականություն» անվանումը: Այն կարող է առաջանալ առարկայի կամ երևույթի հանդեպ ունեցած հաստատուն զգացումներից կամ հակադրվել դրանց, որն էլ զարգանում է իրավիճակային հույզերից (օրինակ՝ խանդի դեպքում սերն ու ատելությունը):

## ***2.2 Հույզի՝ որպես հոգեյլեզվաբանական կարգի առանձնահատկությունները լեզվում***

Հույզերը ոչ միայն պայմանավորված են գործունեությամբ, այլև պայմանավորում են այն՝ մտածողության անբաժան մաս կազմելով: Ինչպես նշվել է, հույզերի արտալեզվական դրսևորումներից են դիմախաղը, շարժումները, դիրքի, կեցվածքի փոփոխությունները և այլն:

Հույզերը ներկայացնելու գլխավոր միջոցը բառերն են, իսկ դրանց հիմնական մասը խոսքի ինքնուրույն մասերն են, ինչպիսիք են, օրինակ, սպասարկու բառերն ու ձայնարկությունները: Կարելի է առանձնացնել հուզական իմաստ ներկայացնող չորս գործոն՝ 1) հուզական երանգավորում, 2) հուզական հարաբերություն, 3) հուզական գնահատում, 4) հուզական վիճակ (հուզավիճակ): Այսպիսով, հույզի լեզվաբանության զարգացման ժամանակակից փուլում լեզվաբանների մեծ մասն ընդունում է բառի մեջ հուզականի և բանականի բաղկացուցիչների առկայությունը և համաձայնում այն տեսակետին, որ խոսքը ոճական առումով պայմանավորվում է խոսողի հուզական ընտրությամբ (համեմատենք, օրինակ, կենցաղային խոսքն ու գեղարվեստական հաղորդակցությունը): Ընդ որում՝ հույզերը, որոնք, ըստ Վ. Շախովսկու «անհատի էությունն» են, լեզվի մոտիվացված և ճանաչողական հիմքն են (Шаховский, 2003):

Հիմնարար հույզերը բառապաշարում հեշտությամբ են դրսևորվում և հուզականորեն իմաստավորվում են նույնիսկ համատեքստից դուրս, քանի որ նրանց հիմնանշանակային իմաստներն արդեն իսկ հուզական են: Այդպիսի բառապաշարը, ինչպես բնորոշում է Վ. Շախովսկին, տեսականորեն սահ-

մանվում է որպես հուզական, իսկ նշանագիտության մեջ՝ կոդավորված հուզական է համարվում, համապատասխանաբար, հուզական հաղորդակցության մեջ կարող է գործածվել ինչպես բառարանային, այնպես էլ համատեքստային հուզարտահայտչական միավորի՝ էմոտիվի հետ (Шаховский, 2007):

Հույզերի հասկացությային ոլորտը սահմանվում է որպես «էթնիկ առանձնահատկություններով, մշակութորեն պայմանավորված կառուցվածքախմաստային, բառայնորեն և/կամ դարձվածաբանորեն արտահայտված կազմություն, որը հենվում է հասկացությային հենքի վրա՝ հասկացությունից զատ, ներառելով պատկերացում, մշակությային արժեք և խոհածության ու հաղորդակցության գործընթացում գործնականորեն մարդու ընկալումն ու դիրքորոշումը փոխարինող երևույթները, որոնք առաջացնում են մարդու կանխակալ վերաբերմունքը» (Красавский, 2001): Այլ կերպ՝ հուզական հասկացությային ոլորտը առանձին հույզերի հասկացությունների ամբողջություն է, որն առավել բնորոշ է տվյալ լեզվական հանրությանը: Դա է պատճառը, որ ժամանակակից հոգելեզվաբանության մեջ մեծ ուշադրության են արժանացնում ճանաչողական գործընթացները՝ կապված հույզերի նույնականացման և դրանց հետագա կարգայնացման հետ: Անկասկած, ճանաչողական ոլորտի ուսումնասիրության հիմնական միավոր ընդունված է համարել հասկացությունը, որում բանականն ու հուզականը, ըստ Յու. Ստեպանովի, անքակտելի են, քանի որ հասկացությունները, գնահատականները, ապրումները և այլն կազմում են հասկացական միասնական մի տիրույթ, որը պահպանվում է լեզվական միավորներում (այս մասին տե՛ս Орлова, 2009):

Կարևոր է նշել, որ որքան շատ են լեզվում հույզ նշանակող բառերը, այնքան ավելի լիակատար է գիտակցված հույզի

կարգը տվյալ լեզվակիրների գիտակցության մեջ: Հույզերի ժամանակակից արտասահմանյան լեզվաբանական ուսումնասիրություններում քննության է առնվում հույզերի լեզվական դրսևորումների հոգեճանաչողական կողմը: Այս դիտարկմամբ հատկապես արդիական է բառերի ուսումնասիրությունը և դրանց կարգայնացումն ըստ հուզական բառերի ու արտահայտությունների: Ավելին, հույզերի կարգայնացման խնդրի շուրջ բավականաչափ քննարկումներ են դեռևս արվում, որոնցից մեկի համաձայն հույզերը չեն կարող ներկայանալ ճանաչողական կառույցների միջոցով, այսինքն՝ դրանք ճանաչողությունից դուրս են (Lazarus, 1984; Zajonc, 1984): Այս դեպքում կարելի է համաձայնել այն տեսակետի հետ, որ յուրաքանչյուր հույզի հիմքում որոշակի տիպի ճանաչողական գնահատական կա (տե՛ս, օրինակ, Frijda, 2009; Шаховский, 1988, Жыра, 2004), որի ամենակարևոր հատկանիշը թե՛ բառային և թե՛ ոչ բառային հույզերի դրսևորման տարբերակումն է: Փաստորեն, հույզը ոչ միայն գոյանում է որոշակի իրավիճակներից, այլև հենց ինքն է ստեղծում, ձևավորում դրանք: Այսպիսով, հույզերը մարդու հոգեկան և ճանաչողական բարդ գործունեության արդյունքն են: Դրանց, ինչպես նաև դրանց արտահայտչամիջոցների քննությունը լեզվում և կոնկրետ խոսքային համատեքստում, հույզերի դրական կամ բացասական լինելու մասին պատկերացումների վերհանումը մեծ նշանակություն ունի լեզվի հուզական կողմի հետագա ուսումնասիրությունների տեսակետից:

Յուրաքանչյուր հույզ հոգեբանական գործընթաց է բնախոսական, սուբյեկտիվ, արտահայտչական բաղադրիչների համակցմամբ, այսինքն՝ մարդը նախ զգում է հուզական այս կամ այն ազդակը որպես ֆիզիոլոգիական վիճակ, հետո նոր

վերապրում և արտահայտում է այն, իսկ նրա հոգեբանական գործընթացների արտահայտման միջոցն էլ հենց խոսքն է (Яблокова, 2003): Հետևաբար հույզերի բնույթի ուսումնասիրման մեջ խոսքն առանձնահատուկ դեր ունի: Այլ կերպ՝ մի կողմից զգացումի վերապրման գիտակցումը անպատճառ ենթադրում է այն համապատասխան բառով անվանելը, մյուս կողմից մարդկային խոսքն անմիջականորեն արտացոլում է վերապրվող իրական հույզը:

Հարկ է նշել, որ մարդկային շփումը միայն խոսքային գործունեություն չէ: Փաստորեն, ցանկացած խոսքային գործունեություն իրենից ներկայացնում է հաղորդակցվողների միջև միմյանց նկատմամբ դրսևորվող հուզական հարմարեցում, որի բացակայությունը կարող է առաջացնել այսպես կոչված «բառային մենամարտ», ինչպիսին է, օրինակ, խոսրնկերների միջև առաջացած վեճը:

Լեզվաբանության տեսանկյունից առանձնացվում են նաև հետևյալ երկու մոտեցումները. 1) իմաստային, որն առաջարկել է Ա. Վեժբիցկայան, և որի համաձայն հույզերը նկարագրվում են նախատիպային իրավիճակների<sup>8</sup> միջոցով, որոնցում դրանք առաջանում են, 2) փոխաբերական, որը կարգավորում է բառապաշարի մեջ հույզի նկարագրման հարցը: Ինչպես նշում են Ջ. Լաքոֆն ու Մ. Ջոնսոնը, հույզերի լեզվական դրսևորումները հիմնականում փոխաբերական են, այսինքն՝ հույզերը երբևէ ուղղակիորեն չեն արտահայտվում, սակայն դրանք միշտ նմանեցվում կամ համեմատվում են ինչ-որ բանի հետ (Lakoff, Johnson, 1980):

Մարդկային հույզերի բառայնացման խնդիրն այսօր տարբեր հետազոտողների ուշադրության կենտրոնում է: Հետազոտություններում հատվում են ժամանակակից լեզվաբանու-

թյան, հաղորդակցական, ճանաչողական, գործաբանական ու մշակութային ոլորտները: Հույզերի լեզվաբանության այսօրինակ բազմակողմանի լինելը հոգեբանական ուղղվածությամբ լեզվաբանական ուսումնասիրությունների տրամաբանական զարգացումն է, որը դեռ վաղուց է առաջ քաշել ու հաստատել այն թեզը, որ հույզերը ներթափանցում են մարդկային գործունեության ամբողջ մտածական ոլորտը՝ խոսքային և ոչ խոսքային տարբեր դրսևորումներով, և որ լեզվում ամեն ինչ դեկավարվում է հույզերի միջոցով (Шаховский, 2009):

Մարդկային հույզերը հոգելեզվաբանության, հոգեբնախոսության, փիլիսոփայության և լեզվաբանության ուսումնասիրության առարկան են: Թեև հուզականությունը միշտ էլ արտացոլում է խոսքնկերների (եզրույթը Շ. Պարոնյանի) սուբյեկտիվ վերաբերմունքը, այնուամենայնիվ այն հենվում է հասկացության հիմնանշանակային կոնկրետ երևույթների վրա, որոնք խոսողի հուզականությունն արտահայտելու խթանն են: Եվ վերջապես, խոսքնկերների հուզական հակազդման ուսումնասիրությունը ենթադրում է իմաստաբանության ոլորտից գործաբանության ոլորտ անցնելու անհրաժեշտություն: Հուզականությունը գործաբանության կարևորագույն խնդիրներից է, քանի որ այն առավել ցայտունորեն է մարմնավորում ներգործման գործառույթը: Քանի որ հուզական ներգործումը խոսքում պատկերվում կամ արտահայտվում է ցանկացած լեզվի խոսքային և շարահյուսական միջոցներով, խոսքի ուսումնասիրությունը ենթադրում է դրանում հուզական արտահայտությունների առկայություն, որի վառ օրինակը լեզվի հուզական գործառույթի իրականացումն է խոսքում: Հուզականությունը երկակի է իր էությունը. այն թե՛ արտահայտման և թե՛ բովանդակային բնույթ ունի (Шаховский, 1987, 2009):



Մարդկային ողջ գործունեությունը, այդ թվում և խոսքայինը, հազեցած է հույզերով: Քանի որ լեզուն ներհյուսված է մարդկային գործունեության բոլոր տեսակների մեջ, ապա հույզերն էլ ներկայացվում են ոչ միայն բառերի, այլ նաև հիշողության, հնչյունների, երաժշտության և այլ միջոցներով: Քանի որ մարդ արարածը ստեղծագործող անհատ է, նրա յուրաքանչյուր գործունեության ընթացքում արտահայտվում են նրա հուզական ապրումները: Մարդկանց ամեն քայլ իրագործվում է հույզերի միջոցով, որոնք էլ նրանց գործունեության որոշիչ հիմքն են և, հետևաբար, չեն կարող չարտացոլվել լեզվում: Մարդն է ստեղծում լեզուն և կրում այն՝ զանազան փոխհարաբերությունների մեջ մտնելով իրեն շրջապատող այլ մարդկանց, առարկաների և երևույթների հետ: Ուստի մարդն ու նրա հույզերը, լինելով օբյեկտիվ իրականության մաս մասնակցում են նաև աշխարհի լեզվական պատկերի ձևավորմանը, ընդ որում, մարդը գործող սուբյեկտն է, լեզուն՝ արտահայտման միջոցը, իսկ մարդկանց հույզերը օբյեկտիվ իրականության արտահայտման ձևերն են:

Լեզուն, ինչպես հայտնի է, շփման, ճանաչման և փոխներգործման, ինչպես նաև ինքնարտահայտման միջոց է: Լեզվի գործառույթի խնդիրը, ինչպես նշում է Ե. Սյուսարևան, առանձնակի հետաքրքրություն է առաջացնում հատկապես հաղորդակցության ընթացքում, գործառական ոճերի, ինչպես նաև տեքստի լեզվաբանության ոլորտներում: Այս խնդրի պարզաբանման համար անհրաժեշտ է նախ և առաջ որոշել, թե լեզվի այս կամ այն գործառույթի արտահայտման համար լեզվական համակարգի և կառուցվածքի որ միջոցներն են առավել նախընտրելի (Слюсарева, 1990, Филимонова, 2001): Այս առումով առաջ են քաշվել տարբեր մոտեցումներ, ըստ որոնց

լեզուն գործում է իր տարբեր գործառույթների և ոլորտների փոխներգործության արդյունքում (Jakobson, 1956): Կառլ Բյուլերը, օրինակ, փորձ է արել լեզվի գործառույթները տարբերակել խոսքային շփման մեջ՝ տարբերակելով խոսքային ակտն ըստ խոսողի և ըստ լսողի: Նշվածի հետ կապված՝ նա առանձնացրել է երեք հիմնական գործառույթներ, որոնք առկա են յուրաքանչյուր խոսքային ակտում 1) ներկայացում, 2) արտահայտում, 3) դիմում, ընդ որում, ներկայացման գործառույթն առավել ցայտուն է, երբ լեզուն կիրառվում է որոշակի տեղեկություն հաղորդելու նպատակով: Դիմելու գործառույթն առկա է խնդրանքների, հրամանների և լսողի վրա ներագդելու խոսքային այլ իրավիճակներում: Ինչ վերաբերում է արտահայտման գործառույթին, ապա այն ավելի ակնհայտորեն է դրսևորվում ինքնակամ բացականչությունների միջոցով, որոնք արտացոլում են խոսողի անմիջական զգացմունքները (Филимонова, 2001):

Սովորաբար լեզվի կարևորագույն գործառույթների թվին դասվում են նաև հաղորդակցման կամ շփման և ճանաչողական գործառույթները, ինչպես նաև հուզականը (Слюсарева, 1990, Филимонова, 2001): Հենց լեզվի միջոցով է իրականանում գիտելիքի մշակումն ու պահպանումը, աշխարհի անհատական և ազգային պատկերի ձևավորումը: Ինչպես նշել է Վ. Հումբոլդտը, «բոլոր այն երևույթներից, որոնց միջոցով ճանաչվում է ազգի հոգին ու բնութագիրը, միայն լեզուն է, որ ունակ է արտահայտելու ազգային հոգու ամենաուրույն և նուրբ գծերը՝ ներթափանցելով նրա ամենաձածուկ խորքերը» (Гумбольдт, 2000): Լեզվի ճանաչողական և հուզական գործառույթների փոխհարաբերությունը բարդ և մանրազնին ուսումնասիրություն է պահանջում: Ն. Մեչկովսկայան նշում է, որ

հաղորդակցական և ճանաչողական գործառույթները հիմնականն են, քանի որ դրանք գրեթե միշտ առկա են խոսքային գործունեության մեջ: Հուզական գործառույթը նա անվանում է հուզական-արտահայտչական, քանի որ հույզն արտահայտելու հիմնական միջոց նա համարում է առոգանությունը, ձայնարկություններն ու հուզարտահայտչական, առնչանակային իմաստ ունեցող բառերը (Мечковская, 2000): Այս տեսակետը, իհարկե վիճահարույց է, քանի որ բառի վերոհիշյալ առնչանակային միջոցներից հուզական գործառույթն իրականանում է նաև լեզվական շատ այլ մակարդակներում, օրինակ՝ բառային, քերականական, տեքստային և այլն: Այսպիսով, լեզվի գործառույթներում առաջնայիններից է հաղորդակցականը, այսինքն՝ անհատների կամ մարդկանց խմբերի միջև իրականացող շփումը, որը կայանում է լեզվի բոլոր ոլորտների կիրառմամբ (Филимонова, 2001; Адамчук, 2010): Աշխատանքում կարևորվում է նաև ճանաչողական և հուզական գործառույթների փոխհարաբերությունը:

Վերը նշվածի առումով էական է նաև «հուզական մտածողություն» եզրույթի շրջանառումը, որն արտահայտում է բանականության և հույզերի, մտածական գործընթացի և զգացմունքների միջև սերտ կապը: Այն մարդու ինքնատիրապետման, նպատակաուղղված գործելու կարողությունն է, ինչպես նաև սեփական գործունեության նկատմամբ ունեցած դրդում է (Филимонова, 2001; Goleman, 1997): Դ. Գոուլմանի «Հուզական ինտելեկտ» («Emotional Intelligence») աշխատությունը հենց այս մասին է: Այստեղ մեկ անգամ ևս նշվում է հույզերի և լեզվի փոխհարաբերության հաշվառման կարևորությունը:

Հույզերը հարկավոր է ուսումնասիրել ըստ լեզվական սովյալների, քանի որ հենց լեզուն է համարվում հույզերի

ուսումնասիրության թե՛ առարկան, թե՛ միջոցը: Այլ կերպ ասած՝ լեզուն ինքնին մարդկային հույզերի ուսումնասիրման բանալին է: Այն անվանում, արտահայտում, նկարագրում, կարգայնացնում, դասակարգում և մեկնաբանում է հույզերը, միջոցներ է առաջադրում խոսքային դրսևորումների և համապատասխան հույզի ձևավորման համար, այսինքն՝ հենց լեզուն է ձևավորում լեզվամշակույթի կրողի այս կամ այն հուզական նկարագիրը (Шаховский, 2003): Հետևաբար հուզական մարդը այնպես, ինչպես խոսող մարդը (ըստ Շախովսկու՝ homo loquens) և՛ լեզվի, և՛ մշակույթի սուբյեկտն է:

Հույզերն արտահայտելու նորմերը կայուն չեն և փոփոխվում են մշակույթից մշակույթ, դարաշրջանից դարաշրջան, միևնույն մշակույթի ներսում մի հասարակական դասից մյուսին անցնելիս: Ժամանակի հետ հենց նրանք են թելադրում հույզերի արտահայտման տարբեր դրական կամ բացասական միջոցների և ձևերի կիրառումը: Այսպիսով, հնարավոր է ենթադրել, որ հույզերը համընդհանուր բնույթ են կրում և բնորոշ են բոլոր մարդկանց: Հետևաբար նրանց դրսևորումներն ու նշանակությունն ունեն մշակութային առանձնահատկություն, որն էլ, անկասկած, արտացոլվում է լեզվում և խոսքում:

Մարդկային գործունեության յուրաքանչյուր դրսևորում ուղեկցվում է հուզական ապրումներով: Հույզերի գլխավոր գործառույթը դրանց շնորհիվ միմյանց հասկանալն է: Առանց խոսքի կիրառման մենք կարող ենք դատել մարդկային հոգեվիճակների մասին, ավելի լավ տրամադրվել փոխադարձ գործունեության և շփման նկատմամբ: Վերը նշվածի վառ ապացույցն է այն փաստը, որ տարբեր մշակույթներ կրող մարդիկ կարող են անթերի ընկալել և գնահատել միմյանց դեմքի արտահայտությունը և դրա միջոցով բնորոշել այնպիսի հուզավի-

ճակներ, ինչպիսիք են ուրախությունը, տխրությունը, ցասումը, վախը, զզվանքը, զարմանքը (Орлова, 2000): Հույզերի հասարակական յուրահատկությունը ձևավորվում է մարդկանց ամենատարբեր հասարակական խմբերի, համամարդկային, ազգային, ժողովրդագրական, մասնագիտական, գենդերային, տարիքային ոլորտներում և, ամրակայվելով լեզվի հուզական միջոցներում, գործածվում է խոսքային հաղորդակցության ընթացքում:

Հույզերի լեզվաբանության ժամանակակից ուսումնասիրությունները կատարվում են գործաբանական, հաղորդակցական և լեզվաճանաչողական գիտական հարացույցների շրջանակներում: Սա պատահական չէ, քանի որ մարդու ճանաչողական գործունեության մոտիվացիոն հիմքը լինելով՝ հույզերը ճանաչողական համակարգի զգալի մասն են կազմում, իսկ հույզերի բառայնացման գործընթացները, իրենց հերթին, լուսաբանում են մարդկային մտածողության գործունեության հիմնական մեխանիզմները: Հավելենք, որ լեզվամշակութային հարացույցի շրջանակներում դիտարկվում է հույզերի համընդհանրությունը՝ ըստ ազգամշակութային գործոնների:

Հույզերի մասին ժամանակակից բազմաթիվ տեսություններում գլխավոր հասկացություններ են համարվում հուզումը (ալեկոծումը) և գնահատումը: Ինչպես երևում է եզրույթներից, դրանցից առաջինն արտահայտում է հույզի բնախոսական, բնական էությունը, իսկ երկրորդը ենթադրում է հուզական իրողության մտածական մշակման ինչ-որ աստիճան (Филимонова, 2007):

Ե. Մյազկովան հույզերի վերլուծության հոգելեզվաբանական իր մոտեցումներն է առաջադրում՝ տալով դրանց համոզիչ նկարագրությունը: Ըստ հեղինակի՝ հույզերը «մարմնի

կամ հոգու վիճակներ են», որոնց հիմքը մարդու կարիքները, դրդումները, ճանաչողական գործընթացներն են: Հուզական գործընթացներն իրականանում են գիտակցական և անգիտակցական մակարդակներում և կապված են տեղեկատվության մշակման հետ (Мягкова, 2000):

Հույզերի արտացոլումը խոսքային մակարդակում, այսինքն՝ բառային նշանակությունների և հասկացությունների միջոցով դիտարկելի է դրանց բառային և տեքստային դրսևորումների մեջ: Վ. Շախովսկին տարանջատում է «հուզական», «հուզականություն» բառի «հուզարտահայտչական միավոր» (էմոտիվ) հասկացությունները: Ըստ նրա, հուզականը նույնն է, ինչ հուզիչը, եթե խոսքը վերաբերում է լեզվական մակարդակին (Шаховский, 1987): Հուզականությունը մարդու հույզերի ու զգացմունքների որակն ու դինամիկան արտահայտող հասկություններից է (Առաքելյան, 2007): Այն, անկասկած, վերաբերում է լեզվին՝ արտահայտելով հուզականությունը որպես հոգեկանի փաստ: Ինչպես արդեն նշվել է, այն կրում է երկակի բնույթ (բովանդակային և արտահայտչական), որի շնորհիվ էլ դրսևորվում են հուզական հարաբերությունները, այսինքն՝ զրուցակիցների հուզական վիճակները (Шаховский, 1987, 2000): Այս ամենի հետ մեկտեղ հարկավոր է տարբերակել նաև «հուզականություն» (эмоциональность) և «հուզարտահայտչականություն» (эмотивность) հասկացությունները: Հուզականությունը գործաբանության տեսանկյունից ընդունված է դիտել որպես պարտադիր, այսինքն՝ մարդկային հիմնական որակ, որը կարգավորում է մտքի առաջացման և ձևավորման հիմնական գործընթացները (Ионова, 2004): Լինելով բնագրային՝ հուզականությունը, չգիտակցված, չպլանավորած հույզի դրսևորումն է, մինչդեռ հուզարտահայտչականությունը հույզերի ներկայացման պլանավորված գիտակցական դրսևորումն է:

րում է, որն ուղղված է որևէ օբյեկտի (Ларина, 2004): Լեզվական մակարդակում հույզերը փոխակերպվում են հուզականության: Հույզը հոգեբանական կարգ է, իսկ հուզականությունը՝ լեզվական, քանի որ հույզերը կարող են արտահայտվել լեզվում և լեզվի միջոցով: Հուզականություն ասելով՝ հասկանում ենք հույզերի լեզվական արտահայտումը, իսկ հուզական բաղադրիչը այն իմաստային մասնաբաժինն է, որի միջոցով լեզվական միավորն իրականացնում է իր հուզական գործառույթը: Հուզարտահայտչականությունը զարգանում է անհատի ճանաչողական-հաղորդակցական գործունեության մեջ դրսևորվող հուզականության հիման վրա և մտածական արդյունք է: Այն հուզականության դրսևորումն է լեզվական մակարդակում:

Հույզերը, ինչպես և մարդկային հոգեկանի մյուս երևույթներն ու կողմերը ամրակայվում են լեզվական միջոցներով և արտահայտվում են շփման կոնկրետ ակտերի միջոցով: Հուզականությունը գործառական կարգ է, որը լեզվակիրների՝ աշխարհի նկատմամբ իրենց հուզավիճակը փոխանցելու միջոց է: Հետևաբար համակարծիք լինելով Վ. Շախովսկու տեսակետին՝ կարծում ենք, որ հուզարտահայտչականությունը՝ հույզի լեզվական արտահայտությունն է, այն «գործաբանական-հոգեբանական-խոսքային կարգ» է: Ինչպես հուզականությունը, այնպես էլ հուզարտահայտչականությունն ունեն հաղորդակցական նպատակ, սակայն նրանց ուղղվածությունն ու նշանակությունը տարբեր է: Լեզուն, իր հուզական ներուժը ամբողջությամբ դրսևորում է հաղորդակցության մեջ, քանի որ հենց խոսքային փոխազդեցության գործընթացում է խոսողն իրականացնում հուզական միավորների ընտրությունը, որոնք, հուզական երանգ ստանալով, իրականանում են խոսքում

(Агапова, 2004): Փաստորեն, ևս մեկ անգամ կարելի է եզրակացնել, և այդ մասին վկայում են լեզվաբանական շատ աշխատություններ, որ «հուզականություն» ասելով հասկացվում է մարդու բնախոսական (ֆիզիոլոգիական) հոգեբանական վիճակը, իսկ «հուզարտահայտչականություն» ասելով՝ հուզականության լեզվական արտահայտությունը: Հուզականությունն ունի և՛ բովանդակության, և՛ արտահայտության պլան, ուստի էմոտիվները, որպես խոսքի արտահայտման միջոցներ, ներակայվում են լեզվական տարբեր մակարդակներում և հուզական զանազան իմաստային տարբերակներով՝ հիմնվելով բառի հարանշանակային (կոնոտատիվ) և հիմնանշանակային և, իհարկե, գնահատողական, արտահայտչական և գործառական-ոճական իմաստների վրա: Հենց բառի հուզականության շնորհիվ է իրականանում բառի ներգործումը մարդու վրա: Նշանակում է՝ հույզերը, ինչպես և զգացումներն ու մտքերը, պայմանավորվում են առարկաների որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշներով: Արդյունքում, հուզականությունն արտահայտվում է կա՛մ հատուկ հուզական բառով (talkative - leaky, deceive - fox, modern - saucy և այլն), որը չեզոք իմաստի հոմանիշն է, կա՛մ էլ այնպիսի հուզական բառով, որը չունի չեզոք հարաբերակից, ինչպիսիք են փաղաքշական կամ քամահրական դիմելաձևերը (love, beauty, silly, honey, sweety), որոնցում հուզականի գործառույթը գերակշռում է անվանման գործառույթի համեմատությամբ (Шаховский, 2009):

Բառի հուզարտահայտչական տարրը հուզական հարաբերություններ կամ խոսողի հուզավիճակ արտահայտելու նպատակով կիրառում են բոլոր լեզվակիրները: Էմոտիվն իր հերթին, իմաստային առումով արտահայտում է ներքին «ես»-ի հուզավիճակը, և մարդկային վարքի հուզական դրսևորումը



նույնպես կարող է նշանակալի դեր ունենալ: Բառի հուզարտահայտչական տարրը ներառում է աֆեկտիվ կամ զգացական, հարանշանակային արտահայտչական (էքսպրեսիվ) տարատեսակները: Այն արդիական կարող է լինել վերոհիշյալ երկու տարատեսակների դեպքում՝ աֆեկտիվ և նշանակցական: Աֆեկտիվը նույն ինքը էմոտիվն է, որի նշանակությունը կոնկրետ բառի համար արտահայտված հույզն անվանելու միակ միջոցն է: Աֆեկտիվներ կարող են լինել, օրինակ, ձայնարկությունները և ձայնարկող բառերը, անվանողական կամ փաղաքշական ու նախատիհնքի (այդ թվում՝ ոչ պատշաճ) բառապաշարը (Шаховский, 2009):

Էմոտիվը նշանակությունը հուզական այն բաղադրիչն է, որը նշանակցության բաղկացուցիչ տարրն է, այսինքն՝ դրա անվանելու տրամաբանական-առարկայական հատկությունը: Դա այն բառն է, որի իմաստային կառուցվածքը ներառում է կա՛մ որևէ հուզականորեն երանգավորված իմաստ, կա՛մ հատկանիշ, կա՛մ էլ սուբյեկտիվ հուզական գնահատման իմույթ:

Էմոտիվների կամ հուզարտահայտչական տարրերի հաղորդակցությունն իրականանում է դրանց՝ խոսակցի հոգեվիճակի մասին արտահայտվելու, հուզական որևէ տեղեկություն հաղորդելու և պատասխան հուզական հակազդում առաջացնելու օգնությամբ (օրինակ՝ զգվանքի, ատելության կամ արհամարհանքի զգացման գիտակցումը և այլն):

Ինչպես արդեն նշվել է, լեզվում հուզականի արտահայտումն անմիջականորեն կապված է այնպիսի եզրույթների հետ, ինչպիսիք են հուզականությունը, արտահայտչականությունը, գնահատումը: Այս առումով, հետաքրքիր է Վ. Շախովսկու տեսակետը, ըստ որի՝ հուզականությունն առանձնա-

նում է որպես հարանշանակային բաղադրիչ, իսկ էքսպրեսի-  
ան (արտահայտչականությունը) և գնահատականը դիտվում  
են որպես հիմնանշանակայնության բաղադրիչներ (Шахов-  
ский, 1987, Мягкова, 1990):

Գնահատման տարանջատումը հուզականության բաղադ-  
րիչից շատ հաճախ պայմանական բնույթ ունի, և բառը կամ  
ասույթը լեզվաբանական նկարագրության նպատակով իմաս-  
տաբանական վերլուծության ենթարկելու արդյունքն է:

Հարց է ծագում՝ գնահատման դեպքում ո՞ր գործառույթն է  
առաջնային՝ հուզական<sup>ն</sup>ը, թե՞ քանականը: Բնականաբար,  
հույզերի տեսությամբ զբաղվողների համար հենց հույզն է ա-  
ռաջնայինը, քանի որ այն երևույթների և իրադարձություննե-  
րի անմիջական ազդակն է, և կանխորոշում է տրվող գնահա-  
տականը: Ի տարբերություն սուբյեկտիվիստների՝ օբյեկտի-  
վիստները կարծում են, որ հույզերում դատողությունները քո-  
ղարկված են: Դրանք կախված են մեր դատողություններից, և  
եթե փոխվում է հույզի մասին կարծիքը, ապա փոխվում է նաև  
հենց ինքը՝ հույզը: Բնական լեզվում չի կարող լինել միայն հու-  
զական գնահատական, քանի որ լեզուն ինքնին միշտ ենթադ-  
րում է քանական մոտեցում: Այսպիսով, լեզվում զուտ հուզա-  
կանի կամ զուտ քանականի տարանջատումը պայմանական է  
(Вольф, 1985): Լեզուն օժտված է տարատեսակ միջոցներով,  
որի շնորհիվ հնարավոր է տարանջատել հուզական գնահա-  
տականն ու քանական գնահատականը, պարզաբանել հասցե-  
ատիրոջ՝ (նրան ուղղված) զանազան հակազդումները, տար-  
բերակել գնահատման այս երկու տիպերը մեկնաբանման ըն-  
թացքում (Вольф, 1985):

Ն. Ռազինկինան սահմանազատում է բառի «հուզական  
նշանակություն» և «հուզական երանգավորում» եզրույթները:

Ընդ որում՝ առաջինը բառի մեջ հասկացության արտահայտման միջոցն է, իսկ երկրորդը՝ գնահատողականը, այսինքն՝ դրա դրական կամ բացասական բնույթը (Разинкина, 1972; տե՛ս նաև Мягкова, 1990):

Հուզական է առարկայի (օբյեկտի, իրավիճակի) նկատմամբ անմիջական ազդակը, որն արտահայտվում է ձայնարկություններով, զգացական բառերով, կշտամբանք արտահայտող բառերով և այլն: (*Wow!!! So wonderful. Oh jeez, that's beautiful! Damn you!!!*) Հուզական գնահատականը, որպես կանոն, արտահայտչական է: Բանական մտածողությունը ենթադրում է գնահատողական դատողություն և արտահայտման միջոցներ: Այսպես, օրինակ, համեմատենք՝

*Wow! How disappointing. Sorry that you witnessed such ugliness (գնահատողական դատողություն)*

*Congressman Schiff, you are wise and powerful. I believe you would be an **incredibly powerful and effective** President of the US. (հուզարտահայտչական գնահատական)*

Որոշ հեղինակներ, նույնացնում են «գնահատում» և «հուզականություն» հասկացությունները (Ахманова, 1969; Шаховский, 1987): Մյուսները կարծում են, որ անգամ եթե այս երկու հասկացությունները միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են, և անգամ եթե հնարավոր է դրանց իմաստների համընկնումը, այնուամենայնիվ, հուզականը չի կարելի նույնացնել գնահատողականի հետ (Блох, 1986, Телия, 1991; Sherer, 2001 և այլք): Լինելով երկրորդ տեսակետի կողմնակից՝ մենք, ընդունում ենք, որ գնահատումը կարող է լինել ինչպես հուզական, այնպես էլ բանական: Բանական գնահատական տալիս գնահատվող օբյեկտը, առարկան կամ իրավիճակը համեմատ-

վում է ըստ որակական երկու բևեռների, մինչդեռ հուզականը այդ գնահատականը համալրում է նշանակցական իմաստներով, որոնք էլ որոշակի հուզականություն են հաղորդում գնահատվող առարկային: Այսինքն՝ հուզական գնահատականն ավելի լայն ընդգրկույթ ունի, քան բանականը: Գնահատականը հույզի անբաժանելի կողմն է: Հուզականը միշտ գնահատում է պարունակում, մինչդեռ գնահատումը կարող է հուզական չլինել (Вольф, 1985; Sherer, 2001):

Լեզվում հույզերի արտահայտման դիտարկումը կապվում է հուզականության և արտահայտչականության լեզվական կարգերի բնորոշման հետ: Սույն աշխատանքում ևս այս երկու հասկացությունները տարանջատվում են: Հուզականությունը արտահայտման ձև է, որն ընդունելի է թե՛ հուզական և թե՛ մտավոր տեղեկության փոխանցման համար: Գիտական տեքստերում, օրինակ, «հուզականություն» և «արտահայտչականություն» եզրույթների տարբերակման առումով մեծ ներդրում ունի Մ. Նիկիտինը, որը, ուսումնասիրելով բանաստեղծական խոսքի արտահայտչականության իմաստաբանական գործոնները, հանգել է այն եզրակացության, որ արտահայտչականությունը մտքից ձևավորված տպավորության ուժն է, դրա արտահայտման միջոցը, որը ճանաչողական բնույթ ունի (Никитин, 1996, Филимонова, 2001; Галкина-Федорук, 1957):

Արտահայտչականությունը դրսևորվում է նաև առոգաբանական առանձնահատկություններով և նախադասության բացականչական տիպով և անմիջական կապ ունի հուզական գնահատականի հետ: Որպես կանոն՝ այն ի հայտ է գալիս այն դեպքում, երբ գնահատականը որոշակի իրավիճակի անմիջական ազդակ է դառնում: Այսպիսով, «հուզականություն» և «արտահայտչականություն» եզրույթների տարանջատումը

հիմնվում է նրանց բնույթի զանազանության վրա: Լեզվում հուզական միավորները ծառայում են մարդկային զգացողություններ արտահայտելու համար, իսկ արտահայտչականները՝ սաստկացնելու կամ շեշտելու պատկերավորությունն ու արտահայտչականությունը թե՛ հույզի և թե՛ հաղորդակցության ցանկացած այլ տիպի արտահայտման համար (Орлова, 2009):

Ինչպես նշվել է, հույզերի ուսումնասիրության մոտեցումների զարգացման գործում մեծ է Ա. Վեժբիցկայայի ներդրումը: Իր աշխատություններում նա հանգամանորեն վերլուծել է լեզվի դերը հույզ անվանելու և այն մեկնաբանելու գործում՝ ապացուցելով, որ լեզուն ներթափանցում է մարդկային հույզերի ներքին կառուցվածք, դրանով իսկ առարկայացնելով, այսինքն՝ իմաստավորելով և բառայնացնելով այն (Wierzbicka, 2008):

Խոսքը ոչ միայն հույզն անվանելու միջոց է, այլև զանազան հուզական հարաբերություններ արտահայտելու ձև, ուստի այն կարող է հանդես գալ և՛ որպես արտացոլման ձև, և՛ որպես արտացոլման առարկա: Որպես արտացոլման առարկա՝ հույզ արտահայտող բառը էմոտիվ չի համարվում, քանի որ այն ոչ թե հույզ է մատնանշում, այլ կոնկրետ հույզի մասին հասկացությունը (օրինակ՝ սեր, զգվանք, ատելություն, և այլն) (Шаховский, 2009):

Ինչ վերաբերում է հույզերի բառային կարգին, ապա դրան պատկանող միավորների թվին են դասվում նաև հուզական գնահատական արտահայտող բառերը՝ այսինքն՝ հույզերի «մտավոր վերապրումները», որոնցում ոչ միայն որոշակի հույզ կամ հուզատեսակ է դրսևորված, այլև որոշակի վերաբերմունք է արտահայտված (Առաքելյան, 2007):

Հուզական կառույցները լեզվական փաստեր են, որոնց մասին շատ թե քիչ խոսվում է նաև իմաստաբանության կամ դարձվածաբանության մեջ: Հուզականության արտացոլման լեզվական միջոցները բազմաթիվ են: Ինչպես արդեն նշվել է անգլերենում հույզերն արտահայտվում են ձայնարկությունների, հուզարտահայտչական/գնահատողական ածականների, բայերի, մակբայների, գոյականների և այլ բառերի օգնությամբ:

***Breathtakingly beautiful!!! Love the colors. Perfect for a beach wedding.***

***Cloud Alas! Wow, absolutely mindblowing!***

***Oh my Gosh! I hate to feel that on my foot. I'd probably have a stroke. I swear.***

***Deeply saddened to hear of such a racist Yorkshire person! They are normally a friendly lot. Greatly endorse Maggie Noble's suggestion, the public transport system, probably via the City Hall.***

Հույզերը բազմազան են, բազմաթիվ են նաև լեզվում գոյություն ունեցող հուզական բառերը, որոնց կիրառմամբ որոշվում է նաև դրանց հաղորդակցական բնույթը: Ներկայումս համացանցը՝ որպես տեղեկատվական-տեխնոլոգիական նորագույն միջոց, հետզհետե վերածվում է հաղորդակցության առաջնային միջոցներից մեկի, որը հաճախ դիտվում է որպես անձի ինքնարտահայտման ամենակարևոր եղանակը, ընդ որում, այս գործընթացը տեղի է ունենում բացառապես շփման պայմաններում, անձերի միջև ընթացող հաղորդակցության միջոցով:

Հարկ է հաշվի առնել, որ վերացական գոյականների հետ գործածվելու պարագայում հիմնականում արտահայտվում են ածականների իմաստային նրբերանգները, իսկ (կոնկրետ) գոյականների հետ համադրվելիս ածականները հաճախ կիրառվում են իրենց հիմնանշանակությամբ: Վերոհիշյալ միջոցները, որոնք նկարագրում են բառի հուզական իմաստը, բազմազան են և արտացոլում են հուզականի կապը նշանակության մյուս բաղադրիչների հետ («հուզական գնահատական», «հուզական արտահայտություն» և այլն): Փաստորեն, հաղորդակցության ձևերը կարող են կախված լինել լեզվի գործածման ձևերից, որոնք կարող են և պետք է լինեն նաև հուզական: Հուզականորեն երանգավորված միավորներով լի հաղորդակցությունը մարդկային խոսքը դարձնում է ավելի արտահայտիչ և ներգործուն, ուստի լեզվի հուզական միջոցները հաղորդակցության ընթացքում գործածելու հարցում հստակ սահմանափակումներ չկան:

Միջմշակութային շփման ընթացքում անխուսափելի են նաև այդպես կոչված «հուզական» կորուստները, քանի որ օտար լեզվով խոսողն ուղերձն ընդունելիս այն թարգմանում է՝ ըստ իր լեզվամշակույթում ընդունված նշանակության: Տարբեր ժողովուրդների խոսքային հուզական վարքագիծը համադրելու դեպքում ակնհայտ են դառնում արտահայտվող հույզերի տարբերությունները, վառ դրսևորված հուզական հաղորդակցական ունակությունները, որը հնարավորություն է տալիս խուսափելու մշակութային և հուզական հետագա թերըմբռնումներից (Шаховский, 2009): Հաղորդակցության որևէ տեսակ և մասնավորապես համացանցային հաղորդակցությունը լի է հույզ արտահայտող բառերով, անկախ այն փաս-

տից, որ վերջինս համարվում է անդեմ միջոց և ենթադրվում է, որ հույզերի արտահայտումն առցանց այնքան էլ հեշտ չէ:

Հույզ արտահայտելը, այդ թվում՝ բացասական, բնական երևույթ է: Համապատասխանաբար ուղղորդված լինելու պարագայում դրանք մեզ միշտ օգնում և ուժ են տալիս: Սակայն իրենց դրական հատկանիշները կորցնելու պարագայում դրանք կարող են խոչընդոտ դառնալ մարդու համար: Ուստի կարելի է նշել, որ հույզերը մեր կենսագործունեության համար բավական կարևոր դեր ունեցող հակազդումներ են, որոնք սակայն, այնքան արագ են առաջանում, որ շատ հաճախ մենք ինքներս մեզ հաշվետու չենք լինում, թե մտածական ի՞նչ գործընթացների արդյունքում են դրանք ծագել: Հույզի արտահայտումը յուրաքանչյուր հասարակության անդամների գործունեության անբաժան մասն է և այս առումով չափազանց կարևոր է հույզերի ուսումնասիրությունը տարբեր խոսքային ակտերի և այլ կարգերի տեսանկյունից: Ընդ որում, կարևորվում են հույզերի դրսևորումները ոչ միայն առերես, այլև առցանց հաղորդակցության ոլորտում՝ որի ուսումնասիրությանն էլ նվիրված է աշխատանքի հաջորդ գլուխը:



## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս եզրույթը վերաբերում է լեզվական այն միավորին, որի իմաստային կառուցվածքը պարունակում է հուզական տարր, որի շնորհիվ բոլոր լեզվակիրները հուզավիճակ արտահայտելու համար կիրառում են այդ միավորը:
2. Հույզերը հազվադեպ են արտահայտվում միայնակ, ավելի հաճախ դրանք իրականանում են (ամբողջական) խմբով. օրինակ՝ ցամառն խումբը ներառում է «տհաճություն», «արհամարհանք» կամ «զգվանք» իմաստները: Հույզերի կարգայնացման ընթացքում համակարգման յուրահատուկ հատկանիշներից է նրա երկարժեքականությունը (երկվալենտականություն), օրինակ՝ սերն ու ատելությունը, վիշտն ու ցնծությունը կարող են համակել մարդկանց միաժամանակ, որն էլ մի շարք օրինակների միջոցով արտահայտվում է հաղորդակցության մեջ: Հույզերի բնենացման հարաբերակցությունն ըստ գնահատողական բնույթի (դրական կամ բացասական) լեզվի բառային համակարգում իր արտացոլումն է գտնում՝ թե՛ հույզն անվանելու (սեր, ատելություն, խանդ և այլն) և թե՛ դրա արտահայտման ոլորտում (հիանալի, զգվելի և այլն) (Шаховский, 2000):
3. Ինչպես վկայում են շատ փիլիսոփաներ, հույզերի տեսություններում կամ հույզերն իրենք են վերապրման օբյեկտ, կամ էլ թվում է, թե այդպես է: Օբյեկտի դերում կարող է լինել ինչ-որ առարկա (օր.՝ նկար), կենդանի օրգանիզմ (օր.՝ շուն), բնական երևույթ (օր.՝ փոթորիկ), մարդկային վարք (օր.՝ վախ), մեր սեփական վարքագիծը (օր.՝ ինչ-որ արգելված բան անելը) և այլն: Այս առումով հույզերը պայմանական բնույթ են կրում (Mulligan, 2001):
4. Նմանատիպ խոչընդոտի օրինակ են անգլերեն անջատական նախադասությունները, որոնց տարբերությունը, ինչպես նշում է Ա. Վեժբիցկայան, միայն տվյալ լեզվակիրների համար է հասկանալի (Won't you shut up? Shut up, will you?) (Вежбицкая, 2003, Шаховский, 2009):

5. Մտածողությունը մարդու գիտակցության ձևն է, ճանաչողության գերզգայուն աստիճանը: Մ. Բերդսլիին առանձնացնում է մարդու բանականության երկու տեսակ. օբյեկտիվ, որում ներառվում է այն ամենը, ինչ վերաբերում է արտաքին աշխարհի առարկաներին, ինչ մարդն ընկալում է իր զգայական օրգանների շնորհիվ, և սուբյեկտիվ՝ այն ամենը, ինչ վերաբերում է մարդու ներաշխարհին, նրա «ես-ին», մտքերին, ապրումներին և այլն (Шаховский, 1987):
6. «Հարմարեցում» կամ «ադապտացիա» հասկացությունը գործածել է Ժ. Պիաժեն: Նա մտավոր աճ էր համարում աշխարհին հարմարվելու գործընթացը (Piaget, 1960): Ըստ Կ. Շերերի՝ այն ամենը, ինչը կարևոր է առարկայի կամ օբյեկտի համար, արժեքավոր ու հարմար է տվյալ առարկայի համար: «Արժեքավոր» ասելով նկատի է առնվում նպատակների, ցանկությունների և այլնի հետ կապված այն ամենը, ինչ հնարավոր կդարձնի այդ նպատակների իրագործումը (Sherer, 2012):
7. Չուգորդումը երևույթների կամ օբյեկտների միջև գոյություն ունեցող մտածական կապն է, որը հենվում է անհատական փորձի վրա: Անհատական փորձը կարող է համընկնել հասարակական փորձին, ինչպես նաև խորը արմատներ ունենալ առանձին մարդկանց կենսափորձում (Առաքելյան, 2007):
8. Նախատիպը կարգի էության գծապատկերային արտացոլումն է, որը պայմանավորվում է հույզի հասկացության յուրահատկությամբ (А. Вежбицкая, 1996):

### ԳԼՈՒԽ 3

## ՀՈՒՋԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### *3.1 Հուզարտահայտչական միավորները լեզվի բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում*

Հույզերի արտահայտումը հաղորդակցության ընթացքում երկու կամ ավելի մարդկանց հույզերի և զգացմունքների փոխանակման միջոց է: Հույզերն արտացոլվում են մարդու գործունեության մեջ և արտահայտվում են նախ և առաջ լեզվում և լեզվի միջոցով, լինի առերես, թե առցանց: Համացանցային հաղորդակցության մեջ կարող են միաժամանակ իրականանալ լեզվի տեղեկատվական, հուզարտահայտչական և խոսքարկման գործառույթները: Սկզբունքորեն անհրաժեշտ է տարբերակել հույզերի ինքնաբերական և գիտակցված լեզվական արտահայտությունները:

Համացանցային հաղորդագրությունների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում պարզելու հուզարտահայտչական ասույթների առանձնահատկությունները նաև գործաբանական տեսանկյունից: Այս առումով կարևոր է նշել, որ համացանցային հաղորդակցության միջոցով հաղորդակցվողները տեղեկացնում են միմյանց իրենց զգացմունքների մասին, վերլուծում են դրանք, ինչպես նաև դրդում հասցեատիրոջը՝ գործել այս կամ այն կերպ և այլն:

Հույզերը բազմազան են, բազմաթիվ են նաև լեզվում գոյություն ունեցող հուզանիշ բառերը, որոնց կիրառմամբ էլ որոշվում է հաղորդակցության բնույթը: Խոսքի արտահայտչակա-

նությունն ու դրա դրսևորումների քննությունը լեզվաբանության ոլորտի հիմնական և ամենատարածված խնդիրներից են, քանի որ հենց դրանց միջոցով են մասնավորապես արտացոլվում հաղորդակցվողների հուզական փոխհարաբերությունները: Սրանով է պայմանավորված «արտահայտչականություն», «հուզականություն» և «գնահատում» հասկացությունների տարանջատման անհրաժեշտությունը:

Արտահայտչականությունն անմիջականորեն ուղղված է հասցեատիրոջը, իսկ հուզականությունը ինքնարտահայտման միջոց է: Հետևաբար «հուզական գործառույթ» ասելով՝ նկատի է առնվում չուղղորդված հույզերի լեզվական արտահայտությունը, այսինքն՝ խոսողի հուզական խոսքային վարքը՝ որպես աշխարհի հանդեպ հուզական հարաբերության արդյունք: Ինչ վերաբերում է «գնահատման» հասկացությանը, ապա այն անմիջականորեն զուգակցվում է հուզականության հետ և պայմանավորվում է հույզի բնույթով: Ընդհանուր առմամբ՝ այս երեք կարգերը (հուզականություն, գնահատում, արտահայտչականություն) կարելի է որակել որպես միմյանց հետ սերտորեն կապված և հաճախ նմանվող, սակայն ոչ նույնական երևույթներ: Ինչպես արդեն նշվել է, «հուզականություն» և «արտահայտչականություն» եզրույթները երբեմն դժվար է տարանջատել. հուզականությունը խոսողի՝ իրականության նկատմամբ զգացմունքների ու տրամադրության արտացոլումն է խոսքում, իսկ արտահայտչականությունն արտացոլում է սուբյեկտի վերաբերմունքը: Վերջինս, բացի արտահայտչականությունից, ենթադրում է նաև գնահատման և հուզականության դրսևորում: Ուստի արտահայտչականությունը երկակի բնույթ ունի՝ լեզվական և խոսքային: Ինչ վերաբերում է «հուզականություն» և «արտահայտչականություն» հասկա-

ցությունների փոխհարաբերությանը, ապա պետք է ընդունել այն փաստը, որ հուզականությունը արտահայտչականության մասն է, այսինքն՝ հուզականը միշտ արտահայտչական է, մինչդեռ արտահայտչականը միշտ չէ, որ հուզական է: Ասվածից հետևում է, որ արտահայտչականությունը միշտ արտահայտում է խոսողի վերաբերմունքը սուբյեկտի կամ իրականության երևույթների նկատմամբ: Ընդ որում՝ խոսքի արտահայտչականությունը որոշվում է դրա յուրօրինակությամբ, այսինքն՝ ամբողջ տեքստի կամ դրա որևէ մասի առանձնացմամբ՝ ըստ բառային, հնչյունային, քերականական և ոճական միջոցների, որը նպաստում է տվյալ տեքստի կամ դիսկուրսի դրական կամ բացասական գնահատմանն ընդունողի/ստացողի կողմից, այսինքն՝ նրա հուզական աշխարհի վրա ներգործմանը:

Հուզարտահայտչական միավորներ պարունակող տեղեկատվական տիպի հաղորդագրություններն աչքի են ընկնում հուզարտահայտչական ածականների, մակբայների, ձայնարկությունների, գոյականների և այլ բառերի կիրառմամբ:

Հույզ արտահայտող շատ բառեր և մասնավորապես ձայնարկությունները, այն արտահայտում են ամենաընդհանուր ձևով՝ նույնիսկ չնշելով դրա դրական կամ բացասական լինելը: Մինչդեռ, օրինակ, առավել հաճախ կիրառվող «oh» ձայնարկությունը նշված համատեքստում կարող է արտահայտել և՛ ուրախություն, և՛ տխրություն, և՛ զարմանք, և՛ այլ հուզատեսակներ՝ կախված համատեքստից: Համեմատենք համացանցում տեղ գտած հետևյալ ամենատարբեր իրավիճակներ նկարագրող մեկնաբանությունները.

**Oh, heavens!** *My condolences here's hoping and praying your mother recovers soon... cheer up!* (կարեկցանք)

**Gosh!** *What an experience having!* (զարմանք, հիացմունք)

**Oh, that's gorgeous!** *My fiance' took this panoramic photo. We didn't get to see them after dark unfortunately, but we were speechless when we saw them in the daylight. Stunning!* (հիացմունք)

**Oh, dear!** *Sorry to hear that. Here we had Remembrance Day ceremonies!* (սփսուսանք)

**Oh, my goodness!** *Too cute.* (զարմանք, հիացմունք)

**Wow...** *You are in a very mischievous place! First the trees, now the children.... You better watch out, Ellen!* (նախազգուշացում)

Ըստ ուսումնասիրությունների արդյունքների և մեր դիտարկումների՝ ձայնարկությունները համացանցում հույզ արտահայտող ամենահաճախակի գործածվող միջոցներից են, քանի որ հենց դրանք են արտահայտում զգացմունքներ և կամային դրդումներ: Հույզերի արտահայտումը ձայնարկությունների միջոցով կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

I. Ձայնարկություններ, որոնք արտահայտում են դրական հույզեր, օրինակ՝

**Wow!** *You look amazing!*

**Oh, look...** *God really exists, because look how healthy this child is!*

**Wow!!! Least to say amazing!** *This is what happens when man is no longer involved.*

II. Չայնարկություններ, որոնք արտահայտում են անհամբերության, դյուրագրգիռ վիճակի ու արհամարհանքի բացասական հույզեր, օրինակ՝

*I have just read about the floods in the UK... Horrible! I hope nobody I know has suffered.*

**Oh!** *You can't even play with your child. People making negative comments here are completely missing the whole damn point. The father is not hurting or abusing the baby. The picture is simply showing how mothers nurture and dads have a tendency to play around. GEESE LOUISE!!!*

III. Այսպես կոչված «խառը տիպի» ձայնարկություններ, որոնք, կախված կոնկրետ խոսքային իրադրությունից, կարող են արտահայտել ամենատարբեր հուզատեսակներ, օրինակ՝

**Oh, my goodness! Amazing work!!!** *We surely miss the voice. She is endless.*

**Wow Arevik!!! So wonderful!!!!** *All the best to You, Your Husband and Your Family!!!*

**Wow!** *You can't even play with your child without noisy people thinking the worse of it. Wow, Wow, Wow !!!*

**Wow!!!** *You look amazing...*

**Jesus man!!!** *What kind of trainers are you hiring?*

**This is hilarious, wow!** *Some of the things these kids say are very grown up sounding. So funny!!!*

Հարկ է նշել, որ որոշ բառարաններում (OALD, 2001), ձայնարկությունները բնորոշվում են որպես անորոշ հույզեր, (օրինակ՝ անգլերեն «Oh!» ձայնարկությունն արտահայտում է անակնկալ, ցավ կամ ցանկություն, իսկ «Ah!» ձայնարկությու-

նը՝ ցավ, անակնկալ, ափսոսանք, կարեկցանք, հակակրանք, ուրախություն, հրճվանք և այլն՝ կախված իրավիճակից)<sup>1</sup>:

*Oh! seriously can't wait to pet a puppy. (ուրախություն)*

*Oh! So sorry how did the operation go? Hope you'll get better soon. (տխրություն)*

Դիտարկենք դրական և բացասական հուզավիճակների դրսևորումներ՝ արտահայտված տարբեր խոսքի մասերի միջոցով.

**ա.** մակբայներ.

**Honestly** *I don't know what that means, I have to say because of copywrite laws I did take that from a dark looking gentlemen not too long ago.*

*Cloud Alas! Wow absolutely mind blowing!*

**բ.** բայեր.

*That's hot... Love it... now that's what you call a very real details of art, this is one of those art pieces that really creeps me out. Thanks for sharing. Love you!*

*Love it... Incredible piece of art!*

**Keep up** *the good work and leadership Boogie! Go Kings!!!*

**գ.** գոյականներ, որոնք գործածվում են նախդիրներով, նաև այնպիսի գոյականներ, որոնք արտահայտում են հույզերի բնախոսական երևույթներ՝ լաց, ծիծաղ և այլն.

**Beauty!** *I guess its one of those things, beauty is in the eye of beholder. I'd love to have this!*

**Sadness** *in the world! It's not fair that good people like your sister are taken too soon.*



դ. ածականներ, որոնց օգնությամբ խոսողն արտահայտում է իր հուզական գնահատականը, օրինակ՝

**Heartbreaking!** *Don't watch it!* **BEAUTIFUL!!!** *Was this little creature in your yard?... and which lens did you use???* **Amazing work!!!** *We surely miss the voice. She is endless!* **Amazing Syuzi!!!** *Missed you so much!!!* **Happy to be home!** **Unbelievable!** *I want that chair! Whoever did, is very talented That is an awful picture. If I caught the father of my child doing this he would never see that child again!* **DISGUSTING!**

Պետք է նշել, որ, ի տարբերություն այլ խոսքի մասերի, ածականներն ընդգրկում են բավականին հարուստ հուզական անշանակային իմաստներ, որոնց նշանակությունն ընդգծվում է գոյականի հետ գործածվելիս: Դա դիտարկելի է հետևյալ օրինակներում.

*That's an **odd** face.*

*What a **great** idea, Voytek! Yes, with my absent-mindedness this might solve the problem! Thanks, will keep it in mind!*

Նշված օրինակներից առաջինում “**odd**” ածականը “**face**” գոյականի հետ կիրառվելիս կարող է իրացնել ն՝ յուրօրինակ, ն՝ տարօրինակ, արտասովոր իմաստներ՝ կախված կոնկրետ իրավիճակից: Երկրորդ օրինակում նույնպես դրական իմաստն արտահայտված է ածական+գոյական կապակցությամբ, որը կարելի դիտարկել նաև որպես հաճոյախոսության յուրօրինակ դրսևորում:

Այսպիսով, հաղորդակցության ձևերը կարող են կախված լինել լեզվի գործածման ձևերից, որոնք կարող են լինել նաև հուզական: Հետաքրքրական է նաև այն, որ հաղորդագրություններում, որոնցում ներկայացվում են հակասական զգացմունքներ, դրական, վեհ զգացմունքներն արտահայտվում են ծավալուն, իսկ բացասականները՝ չոր, պաշտոնական և կարճ մեկնաբանությունների օգնությամբ:

Համեմատենք՝

***Breathtakingly beautiful!** Love the colors. **Perfect** for the beach wedding!*

***Interesting! Touching! Moving!** Lyrics and video convey a sense of ... as if somebody narrates to you about her or his bream of long long time ago and makes you the keeper of that memory. **Weird!***

***Beautiful** quaint little garden, looks like something magical could happen there.*

*That is **horrible**, if true... However not all dads are like that !!!*

Ինչպես տեսնում ենք, հույզերը ներթափանցում են լեզու, և ինչ խնդրով էլ լեզվաբանը զբաղված լինի, հետազոտության որևէ փուլում նա անպայման կառնչվի լեզվում հուզական գործոնի որևէ դրսևորման: Հաղորդակցության կայացման գործընթացում կարևոր է գնահատման դերը, քանի որ հենց հուզական գնահատումն է, որ բանականը համալրում է հարանշանակային իմաստներով, որը հուզական վերաբերմունք է ենթադրում այն ամենի նկատմամբ, ինչ ենթակա է գնահատման: Փաստորեն, լեզվում հուզականի արտահայտությունը սերտորեն կապված է և՛ «գնահատում», և՛ «արտահայտչականու-

թյուն» եզրույթների հետ<sup>2</sup>: Գնահատողական բաղադրիչ պարունակող ասույթները բազմազան են: Հետևաբար չի կարելի չհամաձայնել Ե. Վոլֆի այն կարծիքին, ըստ որի՝ գնահատողական են ոչ միայն լավ/վատ գնահատողական բառեր պարունակող ասույթները, այլև այն բառերն ու արտահայտությունները, որոնք նաև ընդհանուր իմաստով են գնահատում արտահայտում: Այսպես, օրինակ՝

*Pretty picture, nice dress, would look better in silk.*

*It was nasty! Some girls who sat in front of me in class...*

*Man, some people are so stupid.*

*Probably the worst video I have ever seen!*

Բերված օրինակներից երևում է, որ առաջին ասույթում դրական գնահատականն արտահայտվում է “pretty”, “nice” ածականներով, մինչդեռ դրանց հաջորդող երեք ասույթները պարունակում են բացասական գնահատական, և այդ մասին փաստում են “nasty”, “so stupid”, “the worst” միավորները:

Այստեղից հետևում է, որ արտահայտությունները կարող են լինել գնահատողական բնույթի, եթե այդ ասույթների ներասույթային մակարդակում առկա բառերը պարունակում են հավանել/չհավանել, համաձայնել/քննադատել կամ ուրախանալ/տխարել և այլ գնահատողական իմաստներ. ընդ որում՝ «լավի» կամ «վատի» իմաստը բացահայտվում է այդ ասույթներում առկա բառերից որևէ մեկի իմաստից ելնելով:

Արտահայտչականության, հուզականության և գնահատման մեկ այլ չափանիշ է նաև սաստկացումը, որը նախորդի նման ցույց է տալիս որոշակի աստիճանավորում: Սաստկացումը որպես ուժգնացման աստիճանի ցուցիչ որակապես արտացոլում է ասույթի արտահայտչական բովանդակության գե-

րակայությունը՝ առարկայական–տրամաբանականի նկատմամբ<sup>3</sup>: Այն գնահատման բնորոշ հատկանիշներից է և կարող է արտահայտվել այնպիսի բառերով, ինչպիսիք են *good, very good, good enough, incredibly good* և այլն: Օրինակ՝

*London is loaded with parks and green areas. This private patch of green doesn't surprise me. I'm a Londoner. It's **incredibly good.***

***Very nice picture!** Doesn't look like Kim in this one, looks like her own beautiful self!*

*Interesting novels on teen fiction. Small exercises or short stories are **good enough** to help not only in vocabulary, but would also develop interest.*

Հարկ է նշել, որ արտահայտչականությունը, ինչպես հուզականությունը լեզվի զարգացման կարևորագույն նախապայմաններից է, քանի որ այն նպաստում է նոր լեզվական միջոցների ստեղծմանը, որոնք իրենց հերթին խթանում են խոսողի/գրողի մտքերի ու զգացմունքների առավել ցայտուն փոխանցումը: Արտահայտչականությունը լեզվական միավորների իմաստառճական հատկանիշների ամբողջությունն է, որի շնորհիվ այն դրսևորվում է հաղորդակցական ակտում՝ որպես խոսողի և/կամ նրա ասածի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտման միջոց<sup>4</sup>:

Դիտարկենք հետևյալ օրինակները՝

*God let Your will be done, but if we may ask you, **please** heal this beautiful little baby, because the kingdom of heaven belongs to the children. **God bless this baby!!! Amen!!!***

***Great picture!** Thanks for the postcards!*

Վերոհիշյալ ասույթները համացանցային կայքում տեղ գտած մեկնաբանություններ են, որոնք օգտատերերի համաժամանակյա երկխոսության արդյունք են: Առաջին ասույթը խնդրանք է, և **“please”, “God bless!”, “Amen!”** արտահայտությունների միջոցով զրուցակիցն իր կարեկցանքն է արտահայտում օգնության կարիք ունեցող երեխայի նկատմամբ:

Հաջորդ օրինակում իրավիճակն այլ է. այստեղ սուբյեկտը տեղեկացնում է իր այն սպավորության մասին, որ ստացել է նամակը կամ բացիկը կարդալուց հետո: Երկխոսությունը տեղի է ունենում իզական սեռի երկու օգտատերերի միջև, որոնք իրենց հիացմունքն են արտահայտում **“great”** ածականի միջոցով (դիսկուրսի այս հատվածում վերոհիշյալ ածականը կարող է դիտվել որպես բացականչական հնչերանգով արտահայտված ձայնարկություն): Համացանցային հաղորդակցության ուսումնասիրվող նյութը ցույց է տալիս, որ հաղորդակցության մասնակիցները ձգտում են ոչ միայն իրենց տեսակետն արտահայտել այս կամ այն իրողության վերաբերյալ, այլև շփման մյուս մասնակիցների հետաքրքրությունը շարժելով՝ փորձում են դրական արձագանք ստանալ նրանցից, ընդ որում, բոլոր տեսակի պատասխաններն էլ ցույց են տալիս խոսողի հուզական վերաբերմունքը այս կամ այն իրավիճակի նկատմամբ:

*Thank you for your email.*

*It is **really good** news that we may pick up the goods, because we are a little late in our timetable. My shipping agent will connect to you very soon, but before it I'll **kindly** ask you to send the packing list by excel format in order to be able to make some changes in prices and*

*weight mentioned there. Send us **please** the original ones, because we don't want to be surprised again.*

*Many thanks and best regards, Ara!*

Թեև հաղորդագրությունը գործնական բնույթ է կրում և կարծես պետք է գերծ լինի հուզականությունից կամ արտահայտչականությունից, սակայն **“good”, “kindly”, “please”** և նմանատիպ այլ ածականների ու մակբայների շնորհիվ արտահայտվում է գրողի անձնական վերաբերմունքը և այն ավելի ներգործուն է դառնում: Հարկ է նշել, որ ընդգծված բառերից յուրաքանչյուրի գործածումն այստեղ ավելի շատ քաղաքավարության դրսևորում է, քան բուն խնդրանքի: Քաղաքավարության կիրառումը մեծացնում է դրական արձագանքի հավանականությունը: Վերոհիշյալ հաղորդագրություն գրողը տեղեկացնում է իր գործընկերոջը գործարքը վերսկսելու մասին՝ դրդելով նրան ավելի արդար լինել՝ հետագա խնդիրներից խուսափելու համար: Այսպիսով, հաղորդագրությունն ընդունողի համար հասկանալի է դառնում գործընկերոջ դրական պատասխանը, որն էլ, բնականաբար, գոհացնում է նրան: Հետաքրքրական է, որ երախտագիտության, մեղքի և այլ զգացումների արտահայտությունները հիմնականում ի հայտ են գալիս հաղորդագրությունների ներածական մասում: Օրինակ՝

***Thank you all! I was really speechless when I left the shopping mall and looked at the sky- luckily I had my camera on me! Many people were taking pictures, too. Here in the south we can luckily just enjoy the magnificent sky!***

*Yes, this lady was on her way back: it's so unfortunate that happened, you'll always be missed! **Walk on, walk on with God!***

Հաղորդագրությունների եզրափակող հատվածներում առավել հաճախ աչքի է ընկնում այլալեզու ասույթների կիրառումը, որն ավելի է աստվածացնում հաղորդագրության արտահայտչականությունը: Դիտարկենք հետևյալ օրինակը՝

*Hooray!!! The world is white again! After one day without snow on the ground I was getting positively depressed that I was not going to see it again for many months ahead... What a relief! **Me gusta.***

*Off to bed **jan.** Hope you had a nice sleep my georgeous passionate woman. Love you!*

Առանձնակի ուշադրության է արժանի նաև հաղորդագրությունների եզրափակող հատվածներում հուսադրող հուզարտահայտչական միավորների կիրառումը, որի նպատակը կրկին հաղորդակցվողների զգացմունքների մասին տեղեկություն հաղորդելն է: Այսպես՝

*Sad indeed... But I hope you'll find more of such friends.*

*Oh, I hope he will get better soon. I'd love to see you, **take care dear!***

Անշուշտ, հասցեատիրոջը ուրախության, ավստասանքի, երախտագիտության կամ ոգեշնչման հետ կապված ապրումների մասին տեղեկացնող բառերը միայն ներածական կամ եզրափակիչ հատվածներում չեն հանդիպում, պարզապես այս դիրքերում դրանք հաղորդագրությունն ավելի արտահայտիչ և ներգործուն են դարձնում:

Հաղորդակցության գործընթացի կայացման համար կարևոր է նաև այն հասարակական փոխհարաբերությունների ու ժամանակի տեսանկյունից դիտարկելը, որը մեծապես խթանում է հաղորդակցությունը: Քանի որ հաղորդակցությունը մարդկանց փոխազդման արդյունք է, այն կարելի է դիտարկել որպես գործընթաց: Տեղեկության փոխանակման ոճը, դրա տեսակները, դրականի և բացասականի, ինչպես նաև պայքարի և համերաշխության փոխազդեցության առկայությունն է, որն ապահովում է հաղորդակցության գործընթացի արդյունավետ կայացումն ու իրականացումը (Verschueren, 1999):

*Always love your mother cause you 'll never get another!*

- **So very true!**

- **Absolutely, no one can replace her... think of what you can do to her in return before it's too late...**

**Smile, dance and play rock music!** *By doing all the crazy things without explain **keep laughing...** that's it!*

*Just watched the movie for the first time last week.*

**Brilliant! Oh!** *and those 'personal friends' of her who seem to know so much about her!*

Մեջբերված օրինակներում օգտատերերն ամենատարբեր իրավիճակներում յուրովի են արձագանքում իրողություններին, սակայն նրանցից յուրաքանչյուրը խոսընթացում արտահայտում է իր համաձայնությունն ու անհամաձայնությունը, ուրախությունն ու ափսոսանքը՝ մեկ անգամ ևս փաստելով մարդկային փոխհարաբերությունների ու դրանց փոխազդեցության կարևորությունը հաղորդակցության կայացման գործընթացում: Եվ իրոք, մեր շփումների մեծ մասը բնորոշվում է մեր հասարակական փոխհարաբերություններով, քանի որ



լեզվական փոխներգործությունն ինքնին անպայմանորեն ենթադրում է հասարակական փոխադարձ գործունեություն<sup>5</sup>:

Ոչ պակաս կարևոր գործառույթ ունի նաև ազդեցիկ լինելը կամ մտերմության աստիճանը, որը մարդկանց փոխհարաբերությունների ընթացքում շատ հաճախ քննարկման առարկա է դառնում: Նմանատիպ գործոններն առավել կարևոր դեր են կատարում այն հաղորդակցվողների համար, որոնց միջև հասարակական հարաբերությունները դեռևս սկզբնական փուլում են: Այսպես՝

*Dear partners! We consider our relationship not as just seller-buyer, but real partnership. So we **kindly** ask you to raise this issue as possible as high level management level to find out applicable solution for both of us, otherwise we will lose this market without winning it. But our goal is long lasting cooperation. The target is 4000 cylinders per year which is 30-40% of our market. Just few days ago we took loan from bank to achieve this quantity. But those prices you have offered will kill our business.*

*Dear Mr Edvard! A few days ago we have got very important information that want to share with you for further discussion. A couple of weeks ago some local company imported CNG cylinders with very low prices. Initially we thought this invoice is false as acting usually for escaping high taxation, but we were surprised when we have been offered the same prices. When we demanded the certifications of some types of cylinders we have been **astonished and disappointed** because we revealed that our company represents your production line.*

Վերոհիշյալ հաղորդագրությունները քաղված են չինացի և հայ գործարարների՝ էլեկտրոնային փոստի միջոցով իրականացվող նամակագրություններից. ընդ որում՝ դրանցից առաջինը գրված է, երբ դեռ գործարքն սկզբնական փուլում էր և ուղերձն ուղարկողը, խրախուսական արտահայտություններ կիրառելով և գործարքի հաջող ընթացքն ապահովելու նպատակով, փորձում է զգոն պահել իր գործընկերոջը՝ իսկ երկրորդի դեպքում *“astonished”*, *“disappointed”* ածականների կիրառման միջոցով նա արտահայտում է իր վրդովմունքն ակնկալվող արդյունքի բացակայության առիթով, սակայն, պահպանելով գործնական մտերմիկ խոսելաոճը, ձգտում է ներգործել հասցեատիրոջ վրա՝ նրանից դրական արձագանք ակնկալելով:

Փաստորեն, արտաքին և ներքին գործոնները մեծ ազդեցություն են թողնում ոչ միայն մարդու խոսքի վրա, այլև այդ խոսքի մեկնաբանման որակի վրա: Հաղորդակցության ընթացքում շատ հաճախ ենք հանդիպում թյուր մեկնաբանված հաղորդագրությունների, որոնք կարող են որակվել որպես կուպիտ ու անքաղաքավարի, կամ մտածված, գիտակցված և այլն: Նման արժևորումների ազդեցությամբ պարզ է դառնում դիսկուրսի իլլուզիոտիվ նպատակը, ըստ որի՝ հաղորդակցության ընթացքում փոխանցվում է ավելին, քան ասվում է: Այսպիսի ներգործման մասին դատողություններ կատարելը հնարավոր է դառնում քաղաքավարության խոսքային ակտի մանրակրկիտ ուսումնասիրության շնորհիվ: Երբ քաղաքավարությունը դիտարկվում է հասարակական ավելի մտերիմ հարաբերությունների շրջանակներում, գործ ենք ունենում ընկերական, սիրալիր կամ համերաշխ փոխհարաբերությունների դրսևորման հետ: Դիտարկենք հետևյալ օրինակները՝

*I am leaving jan! Have a nice day, don't stay at home,  
enjoy your week- end. Kiss-kiss!*

*Love and Peace to you my lovely friend! Blessings to  
you.*

*It was such a lovely time – our first meeting after four  
years!*

Բերված առցանց ասույթները հատվածներ են համաժամանակյա հաղորդագրություններից, որոնց նպատակը պարզապես ջերմ հույզեր փոխանցելն է: Ի դեպ՝ դիսկուրսի այս երեք հատվածներն արական և իգական սեռի օգտատերերի միջև տեղի ունեցող զրույցներ են, որոնցից առաջինը հատված է անգլիացի և հայ սիրահար զույգերի երկխոսությունից, երկրորդը՝ շոտլանդացի երկու մտերիմ ընկերների առօրյա զրույցը, իսկ երրորդում լեհուհին իր դրական հույզերը կիսում է համացանցի իր բոլոր ընկերների հետ՝ փոխանցելով իր մտերիմ ընկերուհուն կրկին հանդիպելու առիթով իր ոգևորությունը:

Հասարակության մեջ ընդունված ավելի պաշտոնական փոխհարաբերությունները մեկնաբանվում են որպես հարգանքի կամ անտարբերության դրսևորում, սակայն մեր դիտարկումներից պարզ է դառնում, որ անգամ այս ոճում մարդիկ չեն խուսափում հուզարտահայտչական բառերի կիրառումից: Համեմատենք՝

**Dear Mr Edvard, good day!**

*We need to start produce second container, but need a  
change company to minimize our custom clearance  
payments. I want to present you my partner who  
organized next container starting payment and pay off.*

*Dear partners, our intention is a long cooperation. So for us it is **extremely interesting** what is the reason that your boss visited Armenia and did not meet us.*

Էլեկտրոնային փոստով ուղարկված այս հաղորդագրությունները պաշտոնական բնույթ ունեն, դրանցում *“dear”* ածականի կիրառումը ոչ միայն պաշտոնական, գործարար նամակագրական ոճին հատուկ լեզվական միավորի (cliche´) գործածություն է, այլև հենց քաղաքավարությունից բխող հարգանքի դիմելաձև, իսկ ահա *“extremely interesting”* սաստական ածականի շնորհիվ հասցեատերը փորձում է հնարավորինս տեղեկացված լինել գործարքի մանրամասների և դրա շրջանակներում տեղի ունեցող անկանխատեսելի իրադարձությունների մասին: Ընդհանուր առմամբ, անկախ այն փաստից, թե հաղորդակցվողների միջև զրույցը պաշտոնական հանգամանքներում է տեղի ունենում, թե ոչ՝ դրա նպատակը նախ և առաջ արտահայտիչ և ներգործուն լինելն է, որն էլ իր հերթին ենթադրում է համապատասխան բառապաշարի կիրառում: Այսպես՝

*Sad what they do with the sheep! Never buy these!*

Տվյալ ասույթը բացականչական հնչերանգով նախադասություն է, բայց և պահանջ է արտահայտում՝ դրդելով ընթերցողներին զերծ մնալ կենդանու մորթուց կամ կաշվից պատրաստված իրեր կրելուց և հոգ տանել կենդանիների և բնության մասին: Ընդ որում՝ արտահայտված հույզերը վկայում են զրուցակցի վրդովմունքի մասին:

Շույզերի արտահայտման մեկ այլ հետաքրքրական հայեցակերպ են հարցական նախադասությունները, որոնք կարող են մի դեպքում արտահայտել զարմանք, համակրանք, հե-

տաքրքրություն և այլ դրական հույզեր, իսկ մյուս դեպքում՝ անհանգստություն, հանդիմանանք, ծաղր և նման այլ բացասական հույզեր<sup>6</sup>: Հարցական նախադասություններից առավել ուշադրության են արժանի հռետորական հարցերը, որոնք առանձնանում են իրենց վառ հուզական և հուզարտահայտչական բնույթով, քանի որ դրանք ոչ միայն պարզապես մտածողության տրամաբանությունն են արտահայտում, այլև փոխանցում են հաղորդակցվողների զգացմունքները՝ յուրովի ներգործելով հաղորդագրությունն ընդունողի/ստացողի վրա:

**Oh, Martha!** *So very sorry to hear this! I am praying for you and your Mom and hope that she will get better quickly. Was her operation a success?*

Այս օրինակում հարցական նախադասության կիրառությունն արժանի է հատուկ ուշադրության: Այստեղ բուն նպատակը ոչ այնքան պատասխան ստանալն է, որքան դրա միջոցով որոշակի հուզական ներգործում կատարելը: Իր հարցն ուղղելով հասցեատիրոջը՝ հասցեագրողը տվյալ հարցական նախադասության միջոցով պարզապես շուտափույթ առողջություն է մաղթում գրուցակցի ծնողին:

Մեր հետազոտական նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ համացանցային դիսկուրսում օգտատերերի խոսքի հուզարտահայտչականությունն առավելապես դրսևորվում է հռետորական հարցերում, որոնք կարող են արտահայտել թե՛ հաստատում, թե՛ ժխտում: Դրանք պատասխան չեն ակնկալում, քանի որ պատասխանն արդեն թաքնված է հարցում: Այսպես՝

*Hit and runs are problem here too. Unfortunately, it's everywhere. Is there hope for humanity? Haven't we already hit rock buttom already? Time to rise up!*

*Isn't nature stunning? We're so fortunate to have Mother Earth. Let's look after her!*

Դիսկուրսի նշված հատվածներում հռետորական հարցերը որոշակի հույզեր են արտահայտում: Ընդ որում՝ առաջին ասույթը ԱՄՆ-ի կոնգրեսի անդամի ուղերձն է ժողովրդին՝ ոստիկանական մեքենայի հետ կատարված դժբախտ դեպքի վերաբերյալ: Պաշտոնյան, կիրառելով հռետորական հարց, ձգտում է մի կողմից հուզական ներգործություն ունենալ զրուցակիցների վրա, իսկ մյուս կողմից՝ իր վերաբերմունքն ու ցավակցությունն արտահայտել ստեղծված իրավիճակի նկատմամբ՝ կոչ անելով էլ ավելի զգոն լինել՝ հետագա դժբախտ պատահարներից խուսափելու համար:

Ինչ վերաբերում է երկրորդ ասույթին, ապա այստեղ իրավիճակը փոքր-ինչ այլ է: Այն պարունակում է կասկածի, զարմանքի և երևի նաև ինքնահամոզման առնշանակային իմաստներ և կարող է մեկնաբանվել հետևյալ կերպ. “The nature is stunning and we should look after her”: Փաստորեն, վերը բերված հարցական նախադասությունը դիսկուրսի հռետորական իմաստի ցուցիչն է՝ ներկայացված հարցի տեսքով, որի շնորհիվ հարցական նախադասությունն, անկասկած, ստանում է հռետորական հարցի իմաստ, իսկ դրա մեկնաբանումը որպես հռետորական հարց՝ կախված է դրա կիրառության համատեքստից: Եվ իրոք, հուզարտահայտչական հռետորական ասույթներն իրականանում են ամենատարբեր հաղորդակցական միջավայրերում: Այդ ասույթների պերլոկուտիվ ազդեցությունն անհամեմատ ավելի մեծ է, քան սովորական հարցական նախադասությանը:

Այսպիսով, բերված օրինակների քննությունը ցույց է տալիս, որ «արտահայտչական գործառույթի» իրացումն ուղղակիորեն կապ ունի ասույթի կամ հաղորդագրության նպատակային սաստկացման հետ, որը ենթադրում է հաղորդակցության ընթացքում ցանկալի ներգործում: Այլ կերպ՝ արտահայտչական գործառույթը ասույթների և հաղորդագրությունների գիտակցված սաստկացումն է, իսկ հուզականը կոչված է պարզապես արտահայտելու հաղորդակցվողների հույզերը՝ առանց հասցեատիրոջ վրա ներգործելու մտադրության<sup>7</sup>: Արտահայտչականությունը գործում է լեզվի մեխանիզմների համաձայն, ուստի այն լեզվական բնույթ ունի, սակայն դրա ազդեցությունն արտահայտվում է միայն խոսքում: Ինչ վերաբերում է սաստկացման կամ ուժգնացման կարգին<sup>8</sup>, ապա վերջինիս քննությունը ենթադրում է բազմակողմանի մոտեցում՝ քերականական և բառային կարգերի հաշվառմամբ: Դիտարկենք հետևյալ օրինակները.

*I just had to pick myself up of the floor from laughing at your video... Was he trying to make a run for the bathroom, lol? That was **too funny!***

*I might have to go back home soon to see my dad, who is **not too well.***

***What a spectacular beauty! Really amazing!** The English definitely know how to garden.*

*She is **really gorgeous!***

*Thanks so much. It'd be **even more magical** to see it for real, not only in pictures!*

*Happy New Year **my dear, my faithful, my super-puper, my gorgeous, my incredible, my unforgettable and sweet***

**professor.** *I wish all your dreams come true, giant kisses thanks for being in our lives!*

Հետազոտական նյութը քննելիս և առաջնորդվելով Ի. Տուրանսկու սաստկացման կարգի մեկնաբանությամբ առաջ քաշած դասակարգումով՝ հանգում ենք այն համոզման, որ սաստկացման բոլոր տիպերն էլ լայնորեն կիրառվում են նաև համացանցային հաղորդակցության ընթացքում<sup>9</sup>:

Մեր նյութի քննությունը գենդերային տարբերությունների դիտանկյունից նույնպես հետաքրքիր փաստեր է բացահայտում համացանցային հաղորդագրություններում: Տղամարդկանց ուղղված վիրավորական արտահայտությունները (ինվեկտիվներ) մոտ յոթ անգամ ավելի հաճախ են հանդիպում, քան կանանց ուղղված ինվեկտիվները: Կանայք և տղամարդիկ, որպես կանոն, իրենց կամ հակառակ սեռի ներկայացուցիչների նկատմամբ վիրավորական տարբեր միջոցներ են նախընտրում: Այսպես, օրինակ, կանայք նախընտրում են միմյանց կամ տղամարդկանց կշտամբել՝ **idiot, bitch, bastard, coward** բառերով, իսկ տղամարդիկ հաճախ կիրառում են **idiot, pig, fool** բառերը: Վերջինիս համար վառ ապացույց են դիսկուրսի ստորև նշված հատվածները, որոնք առանձնացված են տղամարդկանց հաղորդագրություններից: Այսպես՝

**Dumb!** *That's not how organ donating works.* (արական)  
*Jake Moylan you're obviously a jerk!* (արական)  
*That's not airport fashion! That's airport hell! Can you imagine what the security check would be like if we were wearing all of those clothes and accessories.* (արական)  
**Oh my goodness! This is cute!!!** *Makes me want twins...*  
*Well may be not, but it sure is cute!* (իգական)



*To a young and beautiful Mom who is **very happily** emotional today! All the best to your one and only and so lovely daughter!* (իզական)

Հարկ է նշել, որ սղամարդիկ լեզվական միջոցների օգնությամբ ավելի հաճախ ձգտում են պահպանել իրենց կարգավիճակը, նրանք առավել հաճախ նկարագրում են գործողություններ կամ մղում են գործելու, ինչպես նաև քննարկում կամ ներկայացնում են փաստեր: Նրանց մեկնաբանությունների մեծ մասը բավականին վճռական և անառարկելի է լինում: Ինչ վերաբերում է կանանց հաղորդագրություններին, ապա դրանք շատ հաճախ միտված են գրուցախմբում կամ օգտատերերի միջև ծագած լարվածության թուլացմանը: Կանայք աչքի են ընկնում հուզական առումով ավելի կայուն խառնվածքով, իսկ նրանց մեկնաբանություններն ու կարծիքներն ավելի զգույշ են և կշռադատված: Մեր այս դիտարկումները հաստատվում են նաև Ե. Գորոշկոյի ուսումնասիրությամբ, որի արդյունքները ներկայացված են համացանցային լեզվին վերաբերող նրա հոդվածում:

*People actually believe **this shit**? You think this actually happened? Get your head out of the clowns... **this is incredibly stupid.** This is why we are the society of num nutz that we are. Did someone actually ask “is this true”? Can't kill yourself to give your child an organ. **Stupid!** That's a **REAL father!***

---

\* “Интернет жанр и функционирование языка в интернете: попытка рефлексии”// “Жанр” и “культура” сб. научных трудов №6 (Горошко, 2006).

**OMG, people! It's just a story showing you what a parent is willing to do for his child. It's not a real story, just a story ... depicting LOVE.**

Դիսկուրսի վերոհիշյալ հատվածներում արական և իգական սեռի ներկայացուցիչների մեկնաբանությունները հոր և որդու փոխհարաբերություններին են վերաբերում (հայրն իր որդու համար սրտի դոնոր է): Առաջին երկու օրինակներն արական սեռի օգտատերերի արձագանքներն են, իսկ երրորդն ու չորրորդը՝ կանանցը: Ինչպես երևում է, միևնույն թեմայի շուրջ կանանց և տղամարդկանց արձագանքները խիստ տարբերվում են. ընդ որում՝ տղամարդկանց մեկնաբանությունները շատ ավելի կոպիտ են հնչում (*shit, incredibly stupid, stupid*), քան կանանց մեկնաբանությունները (*REAL father, just a story... depicting LOVE*), որը մեկ անգամ ևս փաստում է կանանց բնորոշ հուզականությունը:

Թե՛ իգական, թե՛ արական սեռի ներկայացուցիչները հավասարապես են մասնակցում հաղորդակցության համաժամանակյա ձևին, որտեղ կանայք աչքի են ընկնում ավելի դրական երանգավորմամբ բառերի ու բառակապակցությունների կիրառմամբ, իսկ տղամարդկանց բնորոշ է ավելի կոպիտ և կտրուկ արտահայտությունների գործածությունը, առավել ևս եթե խոսքն առաջի երկու կողմի մասնակիցներն էլ արական սեռի ներկայացուցիչներ են: Կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ կանայք, լինելով հանդուրժող՝ ավելի պատրաստակամ են ներողություն հայցել, ուրիշներին սատար կանգնել և իրենց զրուցակիցների նկատմամբ ցուցաբերել համագործակցության դիրքորոշում, մինչդեռ արական սեռին երբեմն բնորոշ է հաղորդակցության հա-

կամարտական կամ մրցակցային ոճը: Այս ամենի արդյունքում պարզ է դառնում, որ տղամարդկանց և կանանց խոսքը բավականաչափ տարբեր և բազմաբնույթ են ոչ միայն առերես, այլև առցանց շփման ընթացքում, սակայն երկու սեռերի ներկայացուցիչների հաղորդագրություններն էլ հազեցած են հուզականությամբ և արտահայտչականությամբ, թեև դրանք կարող են մեկնաբանվել տարբեր ձևերով:

Համացանցային հաղորդակցությունը նաև տեքստի միջոցով իրականացող հուզական շփումն է: Համացանցում շփվող օգտատերերը սիրահարվում են և վիճում, անհանգստանում են և ուրախանում, իսկ նրանց խոսքն առավել արտահայտչական դարձնող առոգաբանությանը և դիմաշարժությանը գալիս են փոխարինելու զանազան կետադրական նշանների, ինչպիսիք են ստորակետը, միջակետը, տրոհագիծը, փակագծերն ու չակերտները, հարցական և բացականչական նշանները, բազմակետը և այլ հարալեզվական միջոցներ, որոնցից են գլխատառերի և հապավումների կիրառությունը, տառերի կրկնությունը և այլն: Կետադրական նշանների դերն առավել կարևորվում է համացանցային հաղորդակցության ընթացքում, քանի որ, բացի մտքի տրոհման գործառույթ կատարելուց, դրանք կարող են նաև ուժգնացնել կամ թուլացնել ասույթի հուզականության աստիճանը, որը բանավոր խոսքում հնչերանգի գործառույթներից է<sup>10</sup>: Ստորև նշված հաղորդագրություններում գլխատառերի (**BEAUTIFUL, AWESOME, YOU LOOK AMAZING**), կետադրական նշանների (**WOW!! BEAUTIFUL!!! but ... nothing**), տառերի միտումնավոր կրկնությունների (**SOO HANDSOME, uhhh!**) կիրառումը համացանցային հաղորդակցության մեջ ունի ուրույն ռազմավարական նշանակություն և հուզականության անուղղակի արտահայ-

տությունն է, և որի նպատակը հաղորդակցվողների վրա որոշակի հուզարտահայտչական ներգործությունն է:

**BEAUTIFUL!!! IT'S AWESOME!!! SOO HANDSOME,  
WOW!! YOU LOOK AMAZING!!!**

Absolutely **GREEN** with envy.

\*\*\*\* **NICE, NICE** and **NICE** ...

**BEAUTIFUL!!!** Was this little creature in your yard? ...  
and which lens did you use???

Love you millions **XXXXXXXXXXXX**

OMG, that's the saddest story **EVER!** I started typing, but  
..... nothing. So sad, **uhhh!**

Կարծիք կա, որ համացանցային հաղորդակցությունն առանձնանում է նախ և առաջ պակաս անմիջականությամբ, քանի որ օգտատերերին ժամանակ է ընձեռվում կառավարելու իրենց հույզերը և դրանք արտահայտելու այնքան հազեցած, որքան ցանկանում են: Այս առումով համացանցային հաղորդակցությունն ավելի դյուրին կառավարելի է, քան իրական հաղորդակցությունը, որը, կարծես, ենթադրում է նվազ հուզական պոռթկումներ, սակայն, անշուշտ, շատ բան կախված է համացանցային հողորդակցության համաժամանակյա կամ անհամաժամանակյա միջավայրում ընթանալու փաստից: Այնուամենայնիվ, դիտարկելով համացանցային հաղորդակցության մեծ ծավալի նյութ՝ հնարավոր է եզրակացնել, որ թեև առցանց և առերես հաղորդակցությունները զարմանալիորեն նման են, առցանց շփման ժամանակ, այնուամենայնիվ հաղորդակցվողների խոսքն առավել հուզական է: Համացանցը լի է և՛ ընդունված ու կայունացած լեզվական և արտալեզվական միջոցներով, և՛ նոր միջոցներով, որն էլ օգտատերերին դրդում

Է ավելի անկաշկանդ խոսել իրենց հույզերի ու զգացմունքների մասին: Ինչպես իրական շփման դեպքում, առցանց շփումը նույնպես զերծ չէ բացասական հույզերից, որի վառ օրինակը հենց անկաշկանդ վարքագիծն է: Մա արտահայտվում է վիրավորանքների, հայհոյանքների կամ հակասող մեկնաբանությունների կիրառմամբ, որը հիմնականում դրսևորվում է ինվեկտիվ խոսքային ակտերում<sup>11</sup>:

### ***3.2 Հուզարտահայտչականության դրսևորումը խոսքային ակտերում***

Մարդու խոսքային գործունեությունն իր ձևով, կառուցվածքով և տևողությամբ ասույթների մի հսկայական ամբողջություն է, որը պայմանավորված է իլլոկուտիվ բաղադրիչներով, անհատական մտադրություններով և շարժառիթներով, խոսող սուբյեկտի բազմապիսի հույզերով: Մարդու խոսքն առավելապես աչքի է ընկնում խոսքային ակտերի բազմազանությամբ: Յուրաքանչյուր խոսքային ակտ, մեկ հաղորդակցական նպատակ հետապնդելով, կապված է հասցեատիրոջ վրա որոշակի ներգործություն իրականացնելու հետ: Հուզականությունն ու բանականությունը նկարագրող գնահատականներն առավել ցայտուն կարող են տարբերակվել հենց խոսքակերտն ուղղված խոսքային ակտերում:

Խոսքային ակտը դիտարկվում է որպես նպատակաուղղված խոսքային գործունեություն, որը խոսողն իրականացնում է խոսքային վարքագծի կանոնների և սկզբունքների համաձայն, և որն ունի լոկուտիվ, իլլոկուտիվ և պերլոկուտիվ ուժ: Այս առումով կարելի է տարանջատել «հուզական բաղադրիչ պարունակող խոսքային ակտեր» և «հուզարտահայտչական խոսքային ակտեր» հասկացությունները: Նշվածներից առաջինը անպայմանորեն ներառում է հուզական գնահատական: Ընդ որում՝ այդ հուզական գնահատականը մեծ մասամբ արտահայտվում է բացականչական հնչերանգով արտահայտված մակբայների, ձայնարկությունների և շրջադասությունների միջոցով, որոնք յուրօրինակ հուզական ներգործություն են կատարում հաղորդակցվողների վրա:

Խոսքային ակտերի որևէ տեսակի և հատկապես արտահայտչական ակտերի դասակարգման վերաբերյալ հակասական կարծիքներ են արտահայտվում: Գիտնականներից ոմանք իրենց դասակարգումներում արտահայտչական խոսքային ակտերը համարում են առանձին խոսքային ակտ (Searle, Wierzbicka, Verschueren, Шаховский), մինչդեռ մյուսները դրանք դասում են այլ կարգերի մեջ (Austin, Wunderlich, Leech, Почепцов, և այլն):

Արտահայտչական խոսքային ակտերն առաջին անգամ հիմնավորապես մեկնաբանել են Ջ. Օսթինը և Ջ. Սըրլը: Սույն աշխատանքի հիմքում Ջ. Սըրլի դասակարգումն է: Ջ. Օսթինը արտահայտչական խոսքային ակտերը չի դիտարկում որպես առանձին կարգ, այնուամենայնիվ, որոշ էքսպրեսիվներ, ըստ նրա դասակարգման, ներառված են կոմիսիվների (պարտականություններ և սպառնալիքներ արտահայտող) և բեհաբե-տիվների (այլ մարդկանց վարքի նկատմամբ հակազդումներ արտահայտող) դասին (շնորհավորանքներ, ներողության հայցում և այլն) (Austin, 1986):

Ջ. Սըրլը առաջարկում է խոսքային ակտերի իր դասակարգումը, որի հիմնական չափանիշներից են՝ իլլոկուտիվ նպատակը, համապատասխանելիությունը (բառից՝ իրականություն կամ իրականությունից՝ բառ) հոգեվիճակի արտահայտումը (համոզմունքներ, ցանկություններ, ափսոսանք և այլն) կամ անկեղծության պայմանը (Searle, 1986)<sup>12</sup>:

Դ. Վունդերլիխի դասակարգման մեջ արտահայտչական ասույթները վերագրվում են կոմիսիվների և սատիսֆակտիվների դասին: Ջ. Լիչը նույնպես արտահայտչականությունը չի դասակարգում որպես առանձին խոսքային ակտ: Նրա կարծիքով դրա հիմնական հասարակական նպատակը քաղաքավա-

րության ապահովումն ու դրա պահպանումն է, ինչպես նաև բախումներից խուսափումը (Wunderlich, 1976, Leech, 1981):

Ակնհայտ է, սակայն, որ ինչպես էլ անվանվեն արտահայտչականների խմբում ընդգրկված խոսքային գործողությունները, դրանք նախ և առաջ, տարբերակվում են ըստ իրենց իլլոկուտիվ նպատակի: Իլլոկուտիվ ակտերի արտահայտչական դասը սահմանելու համար անհրաժեշտ է խոսքի արտաբերման ընթացքում որոշարկել դրանց բարեհաջող և լիակատար իրականացման պայմանները (Searle, 1986; Трофимова, 2008):

Տեքստում իլլոկուտիվ ակտերն իրականանում են ուղերձների կամ հաղորդագրությունների միջոցով, որոնցից յուրաքանչյուրն իրեն բնորոշ հաղորդակցական գործառույթն ունի: Այդ գործառույթներից են. 1) կոչականը, որը ներառում է դիմելվածներ ու կոչեր, 2) հորդորման գործառույթը, որը հասցեատիրոջը դրդում է որոշակի գործողությունների իրականացման, այսինքն՝ հրամաններ, պահանջներ, խորհուրդներ, խնդրանքներ կատարելուն, 3) կոմիսիվները, որոնք վերաբերում են հասցեատիրոջ պարտավորվածություններին, այսինքն՝ հրամանները, երդումները, սպառնալիքները, առաջարկները և այլն, 4) պատմողականը, այսինքն՝ նոր կարգավիճակ հաստատող գործառույթը, որն է նշանակումը, դատապարտումը կամ անվանումը, 5) հուզականը, որը ներառում է հուզական ապրումները և արտահայտում է ամենատարբեր հույզեր, ինչպես, օրինակ, ցասում, ուրախություն և այլն, 6) արտահայտչականը, այսինքն՝ հասցեատիրոջ կամ նրա խոսքի հանդեպ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտությունը (ներողություն, ցավակցություն, հանդիմանություն, ավստասանք և այլն) և 7) հարցականը, որը վերաբերում է



հարցական հաղորդագրություններին (Austin, 1986; Searle, 1986):

Ամենատարբեր ասույթների նույնականացմամբ, դրանց կառուցվածքային և գործառական վերլուծությամբ զբաղվում է խոսքային ակտերի մասին տեսությունը, որի ուսումնասիրության առարկաներից մեկն էլ հենց արտահայտչական խոսքային ակտերն են: Խոսքային ակտերը վերաբերում են խոսքային գործողությունների դասին, որի մասնակիցն իր գործողություններով որոշակի ներքին վիճակ է արտահայտում, մասնավորապես՝ «զգացմունքներ», «հույզեր», «կարծիքի ձևավորում» և այլն: Հաղորդակցվողների հոգեվիճակն արտահայտող արտահայտչական խոսքային ակտերն ունեն իրենց ուրույն հասարակական արժեքը միջանձնային հաղորդակցության գործընթացում, որն առավել ցայտուն է արտահայտվում համացանցային հաղորդակցության մեջ իրականացող խոսքային ակտերում՝ հուզարտահայտչական միավորների կիրառման որոշակի առանձնահատկություններով:

Կարևոր է նաև նշել, որ արտահայտչական խոսքային ակտերի արդյունավետության նախապայմանը խոսողի մեջ որոշակի հուզավիճակ (կամ հուզական ապրումներ) առաջացնելն է՝ ասույթներ արտաբերելու և դրանց վերաբերյալ դատողություններ անելու միջոցով: Հետևաբար խոսողը արտահայտչական խոսքային ակտը պետք է իրականացնի այն դեպքում, երբ արդեն գործողությունը տեղի է ունեցել (չի կարելի ներողություն խնդրել կամ կշտամբել մի բանի համար, որը դեռևս տեղի չի ունեցել): Հաջորդ նախապայմանը կախված է արտահայտչական ասույթների դրական կամ բացասական լինելուց, այսինքն՝ նրանից, թե լսողին հետաքրքրո՞ւմ է արդյոք խոսողի հաղորդագրությունը: Այս պարագայում կարևոր է նաև ան-

կեղծության փաստը: Արտահայտչական ասույթներում հաղորդակցվողների անկեղծ արտահայտվելը վկայում է նախ և առաջ նրանց հոգեկան վիճակի և որևէ գործողություն կատարելու ցանկության մասին:

Եվս մեկ անգամ նշենք, որ աշխատանքի այս մասում առավելապես կարևորվում է հուզարտահայտչական միավորների կիրառման առանձնահատկությունների քննությունը համացանցային հաղորդակցության ընթացքում իրականացող արտահայտչական խոսքային ակտերում, որոնց հիմնանպատակը խոսողի զգացմունքներն արտահայտելն է: Ընդ որում՝ դրանք կարող են առաջանալ օգտատերերի շփման արդյունքում, թեև ընդհանուր առմամբ այս խոսքային ակտերը բնութագրում են հաղորդակցվողների կենսափորձն ու հուզական վերաբերմունքը շրջապատող աշխարհի նկատմամբ: Ինչպես իրավացիորեն նշվում է Ջ. Յուլի աշխատության մեջ, արտահայտչական խոսքային ակտերի կիրառման շնորհիվ բառերը դառնում են խոսողի աշխարհընկալման և զգացմունքների արտահայտման միջոց (Yule, 1996):

Հուզարտահայտչական միավորներով հագեցած խոսքային գործունեությունը դասվում է արտահայտչականների թվին, քանի որ դրանց միջոցով են արտահայտվում մարդկային հույզերն ու վարքագծային խոսքային ակտերը: Խոսքային արտահայտչական ակտերը կամ էքսպրեսիվները խոսքային գործունեության դրսևորումներ են, այսինքն՝ դրանք երախտագիտության, ներողամտության և այլ հատկանիշների պայմանական արտահայտությունն են՝ կոնկրետ իրադրություններում, օրինակ՝ հանդիպում, հյուրընկալություն, տոնակատարություն, նվիրատվություն և այլն:

- *So nice to see that great smile of yours!!!*
- *Oh, Brian, so sweet of you – thank you! It is a rare thing these days, but now I am smiling especially for you.*

Նշված օրինակը լեհ ընկերների երկխոսությունից մի մաս է: Դիսկուրսի այս հատվածը հաճոյախոսության խոսքային ակտն է, որ իրագործում է արական սեռի ներկայացուցիչը, որն իր այս քայլով ձգտում է հաճելի զգացումներ պարգևել հակառակ սեռի՝ տխուր հոգեվիճակում հայտնված ներկայացուցչին:

Խոսքային արտահայտչական ակտերին ուղղված հակազդումը կախված է հաղորդակցվողների կրթությունից, դաստիարակությունից, տարիքից, սեռից և հասարակական դիրքից, նրանց անհատական առանձնահատկություններից, մասնավորապես բնավորությունից, խառնվածքից ու հուզականությունից: Ինչ վերաբերում է հուզականորեն ներգործող խոսքային ակտերին, ապա այդ պարագայում արտահայտչականները ներառում են կամ խոսողի գնահատականը, կամ էլ նրա վերաբերմունքն օբյեկտի նկատմամբ:

Հուզարտահատչական խոսքային ակտերին են վերաբերում միայն հույզ արտահայտող, բայց ոչ հույզ նկարագրող խոսքային ակտերը, ուստի ասույթները, որոնցում կիրառվում են հույզ նշանակող, օրինակ, *‘surprise’, ‘threaten’, ‘irritate’, ‘despise’, ‘offend’, ‘reproach’, ‘admire’* բառերը, չեն դասվում հուզարտահայտչական խոսքային ակտերի թվին: Այսպիսի խոսքային ակտերը վերաբերում են վերոհիշյալ պատմողական խոսքային ակտերին, մինչդեռ հուզարտահայտչական խոսքային ակտերի տարբերակիչ հատկանիշը դրա իմաստային բաղադրիչն է, որի միջոցով էլ արտահայտվում է հույզը:

Օրինակ՝ *What a man! I am sure he'd have applauded today!?!?! I'd have loved to hear his responses to the 'bigoted' opposer's. He was so assured in his delivery of his wit. Amazing mind. Funny, too! Wonderful legacy. These are good!!! I'll have to reread the book...awesome, though I don't remember it being that 'poetic'.*

Նշված օրինակներում՝ *'What a man! 'Amazing mind! 'Funny, too! 'Wonderful', 'good !!!', 'awesome', 'that 'poetic'* բառերն ու արտահայտությունները կոնկրետ իրավիճակում արտահայտում են օգտատերերի հիացմունքը, որը թույլ է տալիս փաստել, որ այս ասույթները պատկանում են հուզարտահայտչական խոսքային ակտերի դասին: Ընդ որում՝ այս օրինակների իմաստային առանձնահատկություններից էլնելով՝ կարելի է ենթադրություններ անել նաև խոսողի կոնկրետ խոսքային մտադրության և նրա հուզավիճակի մասին: Այսպիսով, հուզարտահայտչական ասույթները որպես խոսքային ակտեր, իմաստային և բառային մակարդակների փոխազդեցության պարզ արդյունքն են: Հուզական բաղադրիչ պարունակող խոսքային ակտերի դեպքում, դրանց գործառական կողմն անպայման անդրադառնում է խոսքի ներգործման միջանձնային հուզական-գնահատողական ոլորտի վրա: Ի տարբերություն հուզարտահայտչական խոսքային ակտերի՝ հուզական բաղադրիչ պարունակող խոսքային ակտերը միատարր չեն. դրանք այլ իլլոկուտիվ նպատակ ունեն և ինչպես արդեն նշվել է, կարող են դասվել վերոհիշյալ խոսքային ակտերի տիպերից որևէ մեկին: Վերը նշված բացականչական մակբայները, ձայնարկություններն ու շրջադասությունը հուզական բաղադրիչի լեզվական դրսևորումներից են, մինչդեռ

հուզական բաղադրիչ պարունակող խոսքային ակտերը տարբերվում են նաև իրենց իրավիճակային և/ կամ համատեքստային բնույթով, քանի որ դրանք, ըստ էության, խոսողի՝ որոշ իրողությունների հուզական պատասխան ազդակներն են: Այսպես օրինակ՝

*I am so so glad that something was so brilliantly put together to honour such a lady of our times and there will **NEVER** be another like Ms Whitney Houston. You scrolled through her life without any blemishes of her unfortunated demise. I appreciate how respectfully this was done: it still hurts to this day of her untimely death, but to know there are those of us that still love and respect her over those that have nothing else better to do then try and discredit her and see not her faults, but her accomplishments will help in the slow healing of our love and how much we really miss her **“GONE BUT NEVER FORGOTTEN”***

*Mr. Congressman! You are wise and powerful. I believe you would be an **incredibly powerful and effective** president of the US!*

Համացանցային հաղորդակցության մեջ նույնպես շատ հաճախ ենք հանդիպում հույզերի այնպիսի դրսևորումների, որոնք կոնկրետ իլլոկուտիվ իմաստ ունեն՝ արտահայտելով, օրինակ, ցանկություն, հաճոյախոսություն, հանդիմանանք, նախազգուշացում և այլն: Օրինակ՝

*Beautiful, intelligent, articulate, hard-working and hard-playing, loves her family... what a wonderful role for young woman!* (հաճոյախոսութիւն)

*What the hell, like a dog! This is getting ridiculous.* (հանդիմանանք)

*Wow! Wish I could join that team! Good luck!* (ցանկութիւն/բարեմատիքանք)

*Yet again, hate has won. Violence has prevailed and the very people who are trying to help on the ground are being threatened. The bullies have won. What a sick vile set of circumstances for pointless death. My heart aches. It really does!* (հանդիմանանք, ակիսուսանք)

Անդրադառնալով առցանց շփման ընթացքում գործածվող խոսքային ակտերի տարատեսակներին՝ տեղին է նշել նաև Ն. Տրոֆիմովայի դիտարկումը, որը արտահայտչական խոսքային ակտերը բաժանում է երկու ենթադասի՝

- սոցիատիվներ, այսինքն՝ հասցեատիրոջը խոսողի հետ միևնույն հասարակական խմբում ներառող խոսքային ակտեր, որոնք գործածվում են որոշակի կայուն իրավիճակներում, ինչպես օրինակ՝ ողջունելիս, ներողություն հայցելիս, շնորհավորելիս, ցավակցելիս, երախտագիտություն հայտնելիս, ակիսուսելիս, բաժակաճառ ասելիս, կարեկցելիս, օրհնելիս և այլն:
- ինֆլուկտիվներ՝ հուզական գնահատական արտահայտող և հուզական ներգործում կատարող խոսքային ակտեր, որոնցում հաղորդակցվողը ներգրավվում է՝ ընդունելով դրանք որպես իր և իր ունկնդրողի միջև իրականացվող հասարակական և միջանձնային դերե-

րը կարգավորող «որոշում»: Խոսքային այս ակտերի թվին են դասվում գովաբանությունը, կշտամբանքը, հաճոյախոսությունը, վիրավորանքը և այլն: Այսպիսի խոսքային ակտերն իրականանում են ամենատարբեր նպատակներով և զանազան պայմաններում (Трофимова, 2009):

Ելնելով Տրոֆիմովայի դասակարգումից և քննելով մեր լեզվական նյութը՝ նկատում ենք, որ սոցիատիվների դասին պատկանող արտահայտչական խոսքային ակտերի կիրառմամբ խոսողն իրականացնում է հասարակայնորեն կարգավորվող խոսքային վարք, որը, որպես կանոն, արժանանում է դրական գնահատականի: Այսպես օրինակ՝ բարի կամքի դրսևորման հասկացությունը կարող է իրականանալ ցանկացած սոցիատիվ ասույթում, որի մասին վկայում է դրանց ներքին ձևը: Ի դեպ, դրա դրսևորման համոզիչ օրինակ են հաղորդակցվողների միջև ծագող ջերմ փոխհարաբերությունները, որոնք բխում են թե՛ նրանց ստեղծած դրական մթնոլորտից և թե՛ վարվելակարգային ձևերից, որի արդյունքում էլ հաղորդակցվողների մեջ դրական հույզեր են արթնանում: Ասվածը դիտարկելի է հետևյալ երկու ասույթներում, որոնցից առաջինում զրուցակիցը իրեն ուղղված ջերմ խոսքերն ընդունում է երախտագիտությամբ, իսկ երկրորդում՝ կատարված ցավալի դեպքի կապակցությամբ զրուցակիցը իր կարեկցանքն է արտահայտում՝ հուսադրելով, որ ամեն ինչ դեռ առջևում է: Թեև ստորև բերված առցանց համաժամանակյա հաղորդագրությունները տարբեր իրավիճակներում են իրականանում, այնուամենայնիվ դրանք վկայում են զրուցակիցների բարյացակամ վերաբերմունքի և դրական ու անկեղծ մտադրությունների մասին:

**Thanks Geoff!** *It's a friendly little guy at the ranch where I went horseback riding- one of my interesting residents.*

**Sad indeed...** *but I hope you will find more of such friends*

*We are **very sorry** we never ask your ship agent delay the shipping. We will deliver the goods on time, these days my boss is on a business trip in your country: may be he'll visit your company. Please keep in touch.*

Ի դեպ, ներողություն հայցելն արտահայտչական խոսքային ակտի իրագործման յուրօրինակ ձև է: Ջ. Սըրլը ներողությունը դիտարկում է որպես արտահայտչական խոսքային ակտի ստանդարտ օրինակ, որի իլլոկուտիվ նպատակը անկեղծության պայմաններում իրողությունների իրական վիճակն արտահայտելն է: Անշուշտ, զգացմունքները (այդ թվում՝ զղջումը) ժամանակի և ուժգնության տարբեր աստիճաններ ունեն, սակայն հուզավիճակն ու հուզական իմաստը ներողության խոսքային ակտի դրսևորման հարցում ցանկացած դեպքում մեծ դեր ունեն: Ահա թե ինչու է խոսքային ակտերի պարագայում կարևորվում անկեղծության փաստը<sup>13</sup>:

Առցանց շփման ընթացքում հաճախ հանդիպող ցանկության/բարենաղթանքի խոսքային ակտի դիտարկումը թույլ է տալիս նկատել, որ դրա իլլոկուտիվ նպատակը խոսողի հակազդումն է հասցեատիրոջ այն գործողությունների կամ իրողություններին, որոնց միջոցով պետք է ցանկությունն իրականացվի՝ հաշվի առնելով հասարակության պահանջները: Բարենաղթանքի արտահայտումը նպաստում է տվյալ հասարակությունում առկա մյուս անդամների հետ արդյունավետ շփում իրականացնելուն: Հետևաբար դրական ցանկության,



մաղթանքների արտահայտությունը միտված է կարգավորելու հաղորդակցվողների միջանձնային հարաբերությունները:

*God bless not only this baby, but every child on earth.*

**Thank you very much! And good luck to all of us!!!**

*By the stripes of Jesus this baby is healed!*

Ըստ դիտարկումների՝ ցանկության/մաղթանքի գործառույթը կարևորվում է նախ և առաջ երկխոսական դիսկուրսում, և դրանց դերը վճռորոշ է շփման նպատակներն իրականացնելու գործողություններում: Ընդ որում՝ դրական ցանկությունները վերաբերում են քաղաքավարի, վարվելակերպին առնչվող խոսքային գործողություններին և իրականացվում են խոսողի դրական վերաբերմունքը հասցեատիրոջն ուղղելու նպատակով:

*- Congratulations Dear Graduates, you did it!*

*- May your degree unlock many doors to **well deserved success!***

Բերված դասախոս / ուսանող առցանց երկխոսությունը ջերմ բարեմաղթանքի դրսևորում է:

Բացասական իմաստային նրբերանգ ունեցող ցանկությունները հասարակական նորմերի խաթարման պատճառ են դառնում, քանի որ դրանց միջոցով խոսողն իր հետաքրքրությունները բավարարելու նպատակով բացասաբար է ներգործում հասցեատիրոջ հուզական վիճակի վրա:

*I hesitate to say that I like this because how can I like something that shows **such pair?***

*That is **disgusting**, even if he is playing, he can still cause damage as babies are so vulnerable at that age, and you can see the pressure in one of his wrists. **WRONG!!!***

*Oh, this is it. I really don't want to read more about that family. I used to like Harper's Bazaar because it meant style. That's gone. It has turned **cheap and vulgar**. Bye!*

Վերջին նմուշը նույնպես ցանկության խոսքային ակտի համոզիչ օրինակ է, սակայն այս դեպքում այն պարունակում է ոչ հիմնական իլլուկուտիվ գործառույթ, որը սովորաբար արտահայտվում է շնորհակալության կամ հաճոյախոսության ակտերում: Այս պարագայում խոսքային ակտը, հիշատակելով մաղթանքի առիթը, մարդկանց հետագա փոխհարաբերությունների զարգացումն է նախանշում:

Կարևոր է հաշվի առնել, որ Ջ. Մըրլը իր տեսության մեջ առանձնացնում է շնորհավորանքի խոսքային ակտի հաջող իրականացման երկու՝ նախնական և անկեղծության պայմանները: Առաջինը փաստում է հասցեատիրոջը կամ նրա հետաքրքրություններին վերաբերող իրողությունների կամ դեպքերի կատարումը: Մյուսի պարագայում՝ խոսողը վերոհիշյալ իրադարձությունները դրական է գնահատում թե՛ հասցեակրի, թե՛ իր համար՝ ելնելով ձևավորված պայմանական արժեքներից և հասարակական ավանդույթներից (Searle, 1982): Այսպիսով, շնորհավորանքը խոսողի՝ ուրախության վերապրումի զգացման արտահայտություն է՝ կապված տեղի ունեցող իրադարձությունների հետ:

Հուզական գնահատական պարունակող և հուզականորեն ներգործող խոսքային ակտերը խմբավորված են ինֆլուկտիվների ենթադասում: Նմանատիպ խոսքային ակտերը, որոն-

ցում խոսողը դիմում է հասցեատիրոջ հասարակական և միջանձնային դերերը կարգավորվող միջոցներին, առաջինն ուշադրության է արժանացրել Վ. Թելիան: Այսպիսի խոսքային ակտերի թվին են դասվում հաճոյախոսության, գովեստի, կշտամբանքի և հայիոյանքի խոսքային ակտերը: Ինֆլուկտիվների միջոցով հուզական ներգործությունը, նախ և առաջ, կարգավորիչ գործառույթ է կատարում, այսինքն՝ որոշում է հասցեատիրոջ վարքի և գործողությունների հետագա ընթացքը (Телия, 1991): Եթե գործողության ենթադրվող ընթացքը չի գոհացնում հասցեատիրոջը, ապա նա կարող է առարկել՝ դիտարկելով տվյալ ինֆլուկտիվը որպես իրեն հասարակայնորեն վարկաբեկելու փորձ:

Խոսքը մարդու հասարակական կյանքի արդյունքն է և բնութագրվում է հասարակական կանոններով ու որոշակի պայմանականություններով: Այդ հասարակական կանոններին հետևելուց հրաժարվելը վկայում է այն մասին, որ գրուցակիցը հաղորդակցական շփման իրավիճակը կիրառում է որոշակի գործաբանական նպատակներով, որը բնորոշվում է հաղորդագրության իլլոկուտիվ բովանդակությամբ: Որպես այդպիսի գործաբանական նպատակ կարող են հանդես գալ, օրինակ, այնպիսի ոչ հարգալից բառապաշարի կամ լուտանքների գործածությունը, որը նկատելի է հուզարտահայտչական միավորներով հազեցած հետևյալ օրինակներում.

*First, **shame on you** for using a child in such a horrible situation **to boost** your “likes”. Secondly, prayer isn’t going to do anything for this child, donate some real money so the parents can pay the hospital bills people. Quit talking to yourself and thinking that helps people. And another*

*thing, a like on facebook is equal to prayer? **That's pretty damn sad!***

***I hate this kind of shit.** That picture is over three years old, you morons.*

Խոսքում առհասարակ, և տվյալ համատեքստում հասկապես, ինվեկտիվ (ոչ հարգալից բառապաշար) խոսքային ակտի իլլոկուտիվ նպատակը ենթադրում է «վիրավորանքի իլլոկուտիվ հասկացություն»: Ինվեկտիվ խոսքային ակտերը երկու գործառույթ են իրականացնում. մի կողմից՝ զգացմունքային կամ հուզական-մաքրագերծման, այսինքն, երբ խոսողն արտահայտում է իր հույզերը, սակայն մյուս կողմից՝ հասցեատիրոջ վրա որոշակի պերլոկուտիվ ներգործություն կատարելու իր գործաբանական նպատակը (ստորացնել, վիրավորել, նեղացնել կամ նույնն է հուզականորեն ճնշել նրան) (Трофимова, 2008): Բախման դեպքում ինվեկտիվ խոսքային ակտի ակնկալվող լեզվական հակազդումը հաճախ լինում է պատասխան վիրավորանքը (ինվեկտիվ): Ինվեկտիվ խոսքային ակտը հաղորդակցության համագործակցության ձևի փոխարեն ենթադրում է հաղորդակցության հակամարտության ձև:

Այսպես՝

*Reading Gaol is not famous just because Oscar Wilde wrote a bloody 'poem' while he was there. **You dumb ass newspaper freaks.** What an insult. It was more than just a poem. We lost a genius who was vilified because the 'law' at the time determined being gay was a crime. Makes my blood boil.*

***How rude, how could you forget me? I'm so awesome!***

*I´ll post and repost this till **the cows** come home. Kids with special needs are not weird or odd or sick. They only want what everyone else wants... To be accepted !!*

Օրինակներում կարելի է նկատել, որ բացասական հույզերի արտահայտմանը հիմնականում նպաստում են բառային միջոցները՝ հանդիմանանքի խոսքերն ու գոեհկարանությունները: Դրանք, որպես կանոն, ցասում, զզվանք և քամահրանք են արտահայտում:

Եթե հաղորդակցվողի համար վիրավորանքն այնքան անսպասելի է, որ նա չի կարողանում համապատասխան «արամիտ» վիրավորանքով պատասխանել, ապա նա գերադասում է «ինքդ ես» պատասխանը: Այսպիսի իրավիճակը Վ. Ցիլլիգն անվանում է «տեղախախտման գործընթաց», երբ հաղորդակցվողներն այնքան են տարվում հակամարտելով, որ սկզբնական խոսողի և սկզբնական հասցեատիրոջ միջև տարբերությունը չեզոքանում է (Трофимова, 2008):

Առկա նյութի քննությունը թույլ է տալիս տարբերակել վիրավորանքի խոսքային ակտը կշտամբանքի խոսքային ակտից: Թեև այս խոսքային ակտերն ինչպես ինվեկտիվները, բացասական գնահատականի կտրուկ և լարված արտահայտություն են, այնուամենայնիվ, դրանց կիրառությունը տարբեր է: Եթե կշտամբանքը, նախ և առաջ, փաստի հաստատման գործառույթ է կատարում, ապա վիրավորանքին բնորոշ է գնահատողական անվանողական ձևը, որում անձնավորվում է դատապարտման ենթակա վերաբերմունքը կամ հատկանիշը:

Կշտամբանքի խոսքային ակտի իմաստը կապվում է “**bad**” ածականի գնահատողական հասկացության հետ, որը մյուս կարգերից առանձնացվում է բազմաբնույթ կիրառություններ-

րով և իր գործառույթների բազմազանությամբ: Այն ընկալվում է որպես իրականության բացասական գնահատական, որն ուրույն հուզական գնահատողական խոսքային ակտ է: Իր բացասական գնահատականի շնորհիվ այն ունակ է հուզական ճնշում գործադրել զրուցակցի վրա՝ դրանով իսկ նրան անհարմարություն պատճառելով:

*Because it's only giving **the crazy people** in this world ideas on how to deal with their children. Guarranted this picture is gonna get to **the wrong sick mind**... don't you dare do that to your sister!*

*A **foolish idea!** Not at all funny!! He should be behaved to the same way!!*

*No, no sense of **humours**, move on... that's right it's awesome.*

Բերված խոսքային ակտերն արական սեռի օգտատերերի երկխոսություններից քաղված հատվածներ են, որոնք ***the crazy people, the wrong sick mind, a foolish idea, no sense of humours*** բառակապակցությունների միջոցով իրենց բացասական գնահատականն են տալիս համացանցում տեղադրած անհաջող «հումորային» նկարին, որը կարող է սխալ օրինակ ծառայել շատ մարդկանց համար: Նմանատիպ արտահայտչական բառակապակցություններ կիրառելով և նման որակավորում տալով նկարը համացանցում տեղադրողին՝ օգտատերերն իրենց զայրույթն ու վրդովմունքն են արտահայտում, որի կիրառումը մեկ անգամ ևս փաստում է հուզական բառապաշարի արտահայտչական և ներգործուն լինելը<sup>14</sup>:

Ի տարբերություն ինվեկտիվների՝ կշտամբանքի խոսքային ակտին բնորոշ է կարգավորող գործառույթը: Ընդ որում,

այս դեպքում խոսողի նպատակն է դրդել հասցեատիրոջը հետագայում այլ կերպ վարվելու, և դա հենց կշտամբանքի խոսքային ակտի պերլոկուտիվ ազդեցությունն է: Լինելով խոսքային գործունեության ինքնուրույն տեսակներից մեկը՝ այս խոսքային ակտը բնութագրվում է յուրօրինակ իլլուկուտիվ հատկանիշներով: Ամենից առաջ օգտատերերը տեղեկացնում են իրենց գրուցակիցներին այս կամ այն իրավիճակի նկատմամբ իրենց վերաբերմունքի մասին, այսինքն՝ գնահատում են այն, ապա, հաղորդակցվողը, ներգործելով գրուցակցի վրա, ձգտում է որոշակի փոփոխություններ մտցնել նրա վարքագծի մեջ: Եվ, վերջապես, կշտամբանք արտահայտող ասույթները ներառում են բացասական գնահատականներ, որոնք հիմնականում տրվում են, երբ կշտամբանքի օբյեկտն անդրադառնում է խոսողի անձնական հետաքրքրություններին. այդ դեպքում կարող ենք նշել ևս մեկ գործառույթ՝ խոսողին «հուզական ծանրաբեռնվածությունից» ազատելու գործառույթը: Ընդ որում՝ գլխավոր է համարվում, ինչպես վերը նշվել է, կարգավորման գործառույթը, որը բնորոշում է այդ խոսքային ակտի յուրօրինակ լինելը և տարբերակում է այն այլ խոսքային ակտերից: Օրինակ՝

*Wrong mom picture. That's octomom and those eleven babies were born on the same day by different women.*

***Stupid Internet hounds!***

***Phew- What an upsetting experience and event!***

*Why are people so butt hurt? He's not choking the baby, otherwise you would purple or blue swelling. People are so stupid, I swear.*

Առցանց հաղորդակցության ընթացքում կիրառման բարձր հաճախականությամբ առանձնացող մյուս ինֆլուե-տիվները, ինչպես օրինակ հաճոյախոսությունը<sup>15</sup>, գովաբա-նությունը կամ բարի նպատակով իրականացվող հանդիմա-նությունը, պայմանականորեն ընկալվում են որպես հաղոր-դակցության մասնակիցների հարաբերությունների բարելավ-ման փորձ և երախտագիտությամբ են ընդունվում:

Հաճոյախոսությունը խոսքային ակտ է, որը բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով հասցեատիրոջը վերագրում է որևէ դրական հատկանիշ, որը դրական արձագանք է գտնում հաղորդակցվող երկու կողմում: Հաճոյախոսության ամենա-գլխավոր գործառույթը հուզականությունն է<sup>16</sup>: Օրինակ՝

*So nice to see that great smile of yours!*

*Truly magical... nice photography!!!!*

*Oh, hey! What's your number? You look mighty fine!*

*How nice she was! There's freshness in her eyes... pretty and elegant!*

*Beauty is a sign of intelligence... You are wonderful!*

Ինչպես կարելի է դատել օրինակներից, հաճոյախոսու-թյան խոսքային ակտի իլլոկուտիվ ուժը հասցեատիրոջ արժա-նիքների դրական գնահատման ու կատարելության հաստա-տումն է: Այս ազդեցությունը հաճախ ուժգնանում է սաստկա-կան մակբայների կիրառմամբ: Որոշ դեպքերում պերլոկուտիվ ազդեցությունը կարող է նաև բնութագրվել որպես ներշնչման խոսքային ակտ, քանի որ դրա առաջնային խնդիրներից է նաև հաղորդակցվողների միջև վստահություն ծնելը և, իհարկե, նրանց պատասխան քայլի դրդելը: Թեև որոշ լեզվաբանների մեկնաբանմամբ (տե՛ս, օրինակ, Վ. Կարասիկ, Ա. Լեոնտև) հա-



ճոյախոսության խոսքային ակտն իր իմաստով նման է գովաբանության կամ շոդոքորության խոսքային ակտերին, այնուամենայնիվ դրանց միջև կան որոշակի տարբերություններ:

*My favourite singer of all times! No one beats Whitney when she is on stage. Her stage presence was glorious.*

*Amazingly beautiful: her vocal shining timbre and energy will never be repeated and seen in history.*

Վերոհիշյալ ասույթներում հաճոյախոսության խոսքային ակտերի միջոցով հաղորդակցվողներն իրենց դրական հույզերն են արտահայտում, իսկ **favourite singer of all times, amazingly beautiful, will never be repeated and seen** ածականների և սաստկացնող բառերի կիրառումն էլ ավելի է շեշտում տվյալ անձի նկատմամբ հիացմունքի և համակրանքի զգացումները, որի շնորհիվ հասցեագրողը ձգտում է հասցեատիրոջը հավաստիացնել իր հարգանքի մասին և մեկ անգամ ևս նշել նրա դրական հատկանիշները: Այսպիսով, հաճոյախոսության նպատակը հասցեատիրոջը կամ երրորդ անձին դրական գնահատական տալն է: Այլ է իրավիճակը հետևյալ երկխոսության պարագայում, որում տեղի է ունենում գովաբանման խոսքային ակտը:

- *We are doing our Master's degree, besides me and Armenuhi are doing paid internship at a language centre.*

- **Wow! That's super!** *Where are you doing your Master's, at YSU?*

- *Yes, same faculty, same department and free of charge.*

- **Sweet!**

Լեզվական նյութի քննությունը ցույց է տալիս, որ չնայած վերը նշված խոսքային ակտերի իմաստային, կառուցված-

քային և թեմատիկ նմանություններին՝ գովաբանության ակտը հաճոյախոսությունից, տարբերվում է հենց նրանով, որ այն գրեթե միշտ դերային և դիրքային պայմանավորվածություն ունի: Ավելի բարձր հասարակական դիրք ունեցողը ավելի հաճախ կարող է գովաբանել ավելի ցածր դիրք ունեցողին, քանի որ գովաբանողը պետք է արժևորելու և գովելու իրավասություն ունենա, սակայն հակառակը դժվար թե պատահի: Վերը նշված դասախոս-ուսանող երկխոսությունը դրա լավագույն ապացույցն է:

Ի տարբերություն հաճոյախոսության, որն իրականանում է հիմնականում իրավահավասար մարդկանց միջև կամ ինչպես գովաբանության պարագայում, ստորակարգային է իր բնույթով, շողոքորթության դեպքում նույնպես կարևորվում է դերային/ դիրքային կարգավիճակի գործոնը, որն այս դեպքում. հակառակ ուղղվածություն ունի՝ ստորադասից վերադաս: Որոշ դեպքերում մաղթանքի/շնորհավորանքի խոսքային ակտը նույնպես հնարավոր է նույնականացնել հաճոյախոսության խոսքային ակտի հետ, սակայն նույնպես որոշակի տարբերություններով<sup>17</sup>: Դիտարկենք օգտատերերի հետևյալ մեկնաբանությունները՝

- **Charming and pretty song!!!**

- **Thank you very much! And good luck to all of us!!!** (*հաճոյախոսություն, մաղթանք*)

*Again F2F with the beauty!* (*հաճոյախոսություն*)

*Ahh, your eyes are gorgeous!* (*հաճոյախոսություն*)

Այսպիսով, ի տարբերություն հաճոյախոսության խոսքային ակտի, որը կայուն բնույթ չունի և խոսքային պայմաններից ելնելով կարող է փոփոխվել, մաղթանք / շնորհավորանքի

խոսքային ակտը վերաբերում է պայմանական բնույթի իրավիճակներին (օրինակ՝ ծննդյան տարեդարձերին, հոբելյաններին և այլն): Այնուհանդերձ, շատ հաճախ այս երկու խոսքային ակտերը կարող են իմաստային առումով համընկնել կամ լրացնել միմյանց, ինչպես հետևյալ օրինակում, որտեղ օգտատերը միաժամանակ և՛ գովաբանում է կատարված աշխատանքները, և՛ հետագա հաջողություններ մաղթում՝ դրդելով նրանց առաջ շարժվել:

*Great game tonight boogie. Keep it going!*

*Good looking talented Armenian singer. Good job, Lilit!*

Հաճոյախոսության արդյունավետությունը և դրա ներգործման ազդեցությունն ավելի է մեծանում ածականի համեմատական կամ գերադրական աստիճանի կիրառման դեպքում:

*Beautiful!! Love you girls... You know you are one of my oldest and dearest friends...*

*God bless you...*

*Wow it's the most beautiful... I love colorful birds!*

Ինչ վերաբերում է գովաբանության խոսքային ակտին՝ ապա այն բնութագրվում է որպես քաջալերանքի կամ հավանության ուրույն արտահայտություն, որի նպատակը հաղորդակցվողների մեջ դրական հուզական հակազդում առաջացնելն է:

*Excellent movie, everyone go and watch it, it's really inspirational!!!*

*That's right Annie... For being so real and for taking the time to read our responses...Often we wonder if any of*

*the celebrities take our comments seriously. We all have our own soap box that we stand on when we have something to say... Thank you for being so real and for **remaining so down to earth**... That is what makes your blog worth following. Don't stop... Yours is a rare voice of reason emanating from the very plastic and brittle celebrity world. **We quietly salute You!***

Երկու դեպքում էլ, բնականաբար, ասույթների իլլոկուտիվ նպատակը դրական գնահատական արտահայտելն է: Առաջին ասույթում այն արտահայտված է հուզական գնահատողական ածականների և մակբայների միջոցով (**excellent, really inspirational**): Այս ասույթը գործաբանական առումով դրական կարծիք արտահայտելու նպատակ ունի: Երկրորդում՝ հուզավիճակ արտահայտող բառերի միջոցով դրական գնահատականի է արժանանում զրուցակցի վարքագիծը և նրա անմիջականությունը, որը ողջունում է օգտատերը (**That's right Annie, so down to earth, so real, quietly salute**): Երկու դեպքում էլ գովաբանության խոսքային ակտի նպատակը դրական գնահատականի միջոցով հավանություն արտահայտելը և հաղորդակցության համար հաճելի մթնոլորտ ստեղծելն է, որը հաղորդակցվողների մոտ դրական հուզական ազդակ է առաջացնում:

**Wow, Arevik!!! So wonderful!!! All the best to you, your husband and your family!!!**

*Gathered all well known artists in the world. **It's fantastic!** I just adore Adam Lambert. His voice is beyond belief. **OMG! WOW! That dress is well and truly stunning... so gorgeous!!!***

*Beautiful! I'm not even a fan of hers, but she looked amazing! Amazing veil!*

Գովաբանության կարևոր առանձնահատկություններից է այն, որ այդ խոսքային ակտն իրականացնելիս սահմանվում են իրավիճակային համակարգի արժեքներ, այսինքն՝ իրականացրած գործողություններին հակադրվում են դրանց այլընտրանքային մոտեցումները, որոնք էլ կարևոր են նմանատիպ խոսքային ակտն իրականացնելիս:

Երբեմն խոսողը գովաբանման խոսքային ակտի արտահայտչականությունը սաստկացնում է դիմում-կոչականի կիրառմամբ: Վերջինս, բացի իր հիմնական՝ դիմելու և շփում հաստատելու, զրուցակիցների հասարակական դերերի ու դիրքերի, ինչպես նաև շփման իրավիճակի մասին տեղեկություն փոխանցելու գործառույթից, իրականացնում է նաև գանազան իմաստների (հանդիմանանք, վախ, ուրախություն) հաղորդման և գնահատման գործառույթ<sup>18</sup>: Դիսկուրսի վերոհիշյալ հատվածներում հուզարտահայտչական ձայնարկությունների և ածականների միջոցով (*Wow! so wonderful, really exciting*) բնութագրվում են հենց օգտատերերի դրական հատկանիշները, որոնք նաև խրախուսանքի իլլոկուտիվ իմաստ են արտահայտում: Հաղորդակցության ընթացքում կոչականի կիրառումը զրուցակցի ուշադրությունը կենտրոնացնելու և նրա ասածների կամ արարքների նկատմամբ հուզականություն առաջացնելու յուրօրինակ գործաբանական նպատակ է հետապնդում:

Հետաքրքրության է արժանի հետևյալ երկխոսությունը, որում խոսողը ոչ թե գովաբանում է իր զրուցակցին, այլ իրեն է դրական գնահատականի արժանացնում:

*-You are beautiful, too, dear! Now we are all beautiful!!!*

*-That's what we should all do and I'm sure that your soul and your heart are amazing.*

**- With all my undue modesty I'll agree with you!**

Ե. Վոլֆը նմանատիպ ասույթներին տալիս է «ինքնագովարանման խոսքային ակտեր» անվանումը: Ինքնագովարանման նպատակը հասցեատիրոջ վրա դրական ազդեցություն գործելն է, որի արդյունքում հաղորդակցվողներն իրենց գրուցակիցների վրա որոշակի տպավորություն են թողնում<sup>19</sup>:

Գովարանության խոսքային ակտի շնորհիվ արժևորվում են հաղորդակցվողների՝ շփվելու, ուսումնասիրելու, ճիշտ ժամանակին համապատասխան միտք արտահայտելու և գնահատելու ունակությունները: Հարկ է մեկ անգամ ևս նշել, որ հաղորդակցվողների գնահատականը գովարանության խոսքային ակտում սուբյեկտիվ բնույթ է կրում: Այս խոսքային ակտերում հաճախակի կիրառվող *“excellent, well, successfully, good”* մակբայները հիմնականում արտահայտում են խոսողի սեփական, սուբյեկտիվ վերաբերմունքը, որը կարող է համընկնել նաև ընդհանուր կարծիքի հետ: Ընդհանուր առմամբ՝ ինֆլուկտիվ խոսքային ակտերն արտացոլում են հաղորդակցվողների իրականացրած հասարակական դերերի որակը, նրանց փոխհարաբերությունները, այսինքն՝ այն ամենը, ինչ կապված է հասարակական նորմերի և դրանց իրականացման գործընթացների հետ: Համացանցային հաղորդակցության մեջ կիրառվող խոսքային ակտերում գնահատողականություն արտահայտող միավորների ներգործման կարողությունը մեծապես պայմանավորված է գրուցակցին ուղղված խոսքի հուզականությամբ և արտահայտչականությամբ<sup>20</sup>: Օրինակ՝

*Ooooo, great picture! I love smokey eyes. How I wish I could do this!*

*Hilarious! I hope he's not hurt...*

*Wow! Perfect style.*

*She is really georgeous! A real inspiration to young girls and women*

*A fabulous movie! This was absolutely one of the best films in modern time and the acting to me was just superior.*

Այս օրինակներում գնահատականն արտահայտվում է ածականների և ձայնարկությունների միջոցով և հանդես է գալիս որպես հիմնական խոսողական–կատարողական (իլլուկուտիվ) ուժ և հավանության ու հիացմունքի արտահայտմամբ՝ մատնանշում է խոսողի դրական գնահատականը: Մակայն ոչ պակաս կարևոր է նաև այն հանգամանքը, թե զրուցակցին որքանով է հետաքրքրում խոսքում ներկայացվող իրադրությունը:

Արտահայտչական խոսքային ակտը կարող է բնութագրվել որպես երկկողմ երևույթ, որը կարող է հաղորդակից դարձնել շփվողներին կամ հանդես գալ որպես խոսքային և ոչ խոսքային դրդման հակազդում: Բայց, որպես կանոն, հենց արտահայտչական ակտերն են սկսում փոխներգործությունը, որը, կարծես, իրագործվում է խոսքային համատեքստից դուրս:

Այսպիսով, լեզվական և արտալեզվական միջոցների բազմազանության շնորհիվ օգտատերերը հնարավորություն ունեն բավական ճշգրիտ նկարագրելու իրենց այնպիսի հուզավիճակները, ինչպիսիք են, օրինակ, գայրույթը, տխրություն-

նը, ընկճվածությունը կամ ուրախությունը: Ուստի, այն հարցը, թե արդյոք առցանց, թե՞ առերես շփումն է նախընտրելի, վիճահարույց է և պայմանական բնույթ է կրում՝ կախված անձի խառնվածքից: Մակայն մի բան հաստատ է. համացանցը յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռում գտնելու իր նմանին՝ այն մարդուն, որը կիսում միևնույն հետաքրքրություններն ու հուզական կարիքները, որն ավելի հարմարավետ ու արդյունավետ է դարձնում շփումը այլ մարդկանց հետ և հանգեցնում է առցանց ավելի մտերմիկ և անմիջական հարաբերությունների ստեղծմանը:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ հույզերի արտահայտումը հասարակության յուրաքանչյուր անդամի կյանքի և հաղորդակցության անքակտելի մասն է, ուստի հույզերի դիտարկումը պահանջում է բազմակողմանի ուսումնասիրություն, որում իրենց ուրույն տեղն ունեն խոսքային ակտերի վերաբերյալ տեսությունները: Թե՛ դրական և թե՛ բացասական հույզեր արտահայտելը բնական երևույթ է և միայն դրանց ճիշտ մեկնաբանումը կարող է մեզ հնարավորություն ընձեռել խուսափելու խոսքային տարատեսակ թերըմբռնումներից և թյուրընկալումներից:



## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ Ա. Վեժբիցկայայի ուսումնասիրությունների՝ առավել հաճախ գործածվող ձայնարկությունների շարքում են սփոփանք կամ հուզմունք արտահայտող «**Yeah!**», զղջում արտահայտող «**Oops!**» կամ նմանատիպ զգացողություններ արտահայտող ձայնարկությունները: Անգլերենի «**Oh!**» ձայնարկությունը, կարող է արտահայտել թե՛ ուրախություն և թե՛ տխրություն՝ կախված համատեքստից և/կամ իրավիճակից (Wierzbicka, 2003):
2. Քանի որ արտահայտչական խոսքային գործողությունները որոշվում են հասարակական պայմաններով և այսպես կոչված հասարակական ծիսակարգեր են, ապա լեզվաբանության մեջ դրանք անվանվում են նաև «ծիսակարգային կամ վարքագծային» խոսքային ակտեր (Большф, 1985; Wierzbicka, 2003):
3. Ե. Վոլֆը գնահատողական ասույթները բնութագրում է նաև մեկ այլ յուրահատկության համաձայն, որը կապվում է սուբյեկտի հետաքրքրված լինելու աստիճանի հետ: Այդ յուրահատկությունը նա անվանում է զգացականություն (аффективность): Խոսքում «զգացականություն» եզրույթը վերաբերում է խոսքային այն իրադրությանը, որում առկա գնահատողական արտահայտությունները ոչ այնքան նկարագրում են իրավիճակները, որքան շեշտում են սուբյեկտի հետաքրքրվածության աստիճանը այն իրավիճակի նկատմամբ, որին վերաբերում է խոսքը (Большф, 1985):
4. Ըստ Շ. Բալլիի՝ խոսքի արտահայտչականությունը կապված է իրականության հուզական ընկալման և այն հասցեատիրոջը փոխանցելու ձգտման հետ: Ի տարբերություն հուզականության՝ արտահայտչականությունը հատուկ է լեզվական մակարդակի բոլոր միավորներին (Балли, 1961):
5. «Փոխներգործություն» ասելով բնականաբար նկատի են առնվում հաղորդակցման մասնակիցների հասարակական կարգավիճակն ու մտերմության աստիճանը, որը նախ և առաջ

հիմնվում է հասարակական արժեքների և, մասնավորապես, տարիքային գործոնի և մտավոր կարողության վրա: Վերը նշված միտքը ենթադրում է, օրինակ, հասարակական բարձր դիրք զբաղեցնող անձանց ազգանունով կամ հայրանունով դիմելը (G. Yule, 1998):

6. Ըստ Ի. Գալպերինի՝ հոետորական հարցերը բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբին են դասվում հարցական նախադասության ձևով արտահայտված ասույթները: Երկրորդ խմբին պատկանող հոետորական հարցերի միջոցով խոսողն իր կասկածն է արտահայտում: Թեպետ երկու դեպքում էլ գրուցակիցների խնդիրը հարց առաջադրելն է, առաջինի պարագայում խոսողը հստակ գիտի հարցի պատասխանը, իսկ երկրորդի դեպքում նա պարզապես իր թերահավատություն է արտահայտում՝ փորձելով գտնել իր հարցի իրական պատասխանը (Galperin, 1977; Валгина, 1991):
7. «Հուզական գործառույթ» ասելով նկատի է առնվում չուղղորդված հույզերի լեզվական արտահայտումը: Ոչ հուզական և ոչ արտահայտչական գործառույթները չեն համարվում անկախ, քանի որ երկուսն էլ լեզվի հաղորդակցական գործառույթի ոլորտում են: Սա է պատճառը, որ հուզարտահայտչական ասույթներում դրանք հաճախ արտահայտվում են միասին՝ մեկի կամ մյուսի գերակայությամբ (Шаховский, 2008):
8. Սաստկացումը լեզվի իմաստային կարգ է, որի հիմքում որակի գնահատման քանակական չափանիշն է, որն ապահովում է հաղորդակցության բովանդակային լինելը: Որոշակի առումով որևէ հատկանիշի սաստկացումը, նրա ընդունելի քանակային չափորոշիչի շեղումն է, որը որակի փոփոխություն չի ենթադրում: Սաստկացմանը բնորոշ քանակական հատկանիշը կոչվում է ինտենսեմա (սաստկացուցիչ), որը լեզվական դրսևորում է՝ միտված ավելացնելու կամ պակասեցնելու արտահայտչականության աստիճանը: Ոճաբանության տեսանկյունից սաստ-

կացումը արտահայտչականության չափանիշն է (Вольф, 1985; Безрукова, 2000; Орлова, 2009):

9. Սաստկական բառերը կարելի դասակարգել հետևյալ կերպ՝  
1) կայուն, ինչպես օրինակ՝ **very, extremely, absolutely** միավորները, որոնք իրենց բոլոր կիրառություններում են սաստկացնող բառեր, 2) գերակայող, ինչպիսիք են, օրինակ, **too, so**, որոնք ուղղված են միտումնավոր սաստկացնելու այս կամ այն աստիճան, 3) հավանական սաստկացնող բառեր, որոնք հաճախակի կիրառման արդյունքում են դառնում սաստկացնող, ինչպես, օրինակ, **really** մակբայը, 4) յուրօրինակ, **even** և 5) միանգամյա կիրառման սաստկացնող միավորներ, ինչպիսիք են, օրինակ, **giant, grossly** բառերը և այլն, որոնք կարող են համարվել սաստկացնող միայն տվյալ համատեքստում: Քանի որ «սաստկացում» եզրույթն անմիջականորեն կապվում է «հատկանիշ» հասկացության հետ և դրսևորվում է հիմնական լեզվական միջոցներով, կարելի է առանձնացնել ուժգնացման հետևյալ դասակարգումները, իսկ դրանց օրինակները ներկայացնել ըստ նշված ձևաբերականական բանաձևերի՝ հատկանիշ+առարկա (**beautiful song, little heart**), հատկանիշ+հատկանիշ (**very touching, very nice**), գործողություն+հատկանիշ (**It was nasty. That's pretty damn sad**), ածական+գոյական (**giant kisses, sweet professor**) և մակբայ+ածական (**absolutely green, truly magical**), բայ+մակբայ (**enjoy luckily, be missed truly**) (И. Туранский, 1990; В. Безрукова, 2000):
10. Խոսքնափոխ յուրաքանչյուր մասնակից իրեն հատուկ ձայնաձևավանդակ ունի: Առօրյա խոսքում հնչերանգը մասնավորապես իրականանում է ձայնաձևավանդակի ցածր հատվածներում, սակայն խիստ զգացմունքներով հագեցած խոսք արտահայտելու պարագայում հնարավոր է նաև ձայնաձևավանդակի հավելյալ բարձրության կիրառում (Roach, 2001):

11. Ք. Գլեյզերի բնորոշմամբ՝ սուր կարծիքների արտահայտման ձևը ստացել է “flaming” (այրում) անվանումը: Այն ուղեկցվում է բացասական, հակազդող հույզերի արտահայտմամբ: (Glazer, 2002):
12. Ջ. Սըրլը արդարացիորեն քննադատում է Ջ. Օսթինի այն դիտարկումը, թե իլլուկուտիվ բայերի դասակարգումը նույնն է, ինչ իլլուկուտիվ ակտերինը: Ջ. Սըրլի համոզմամբ՝ «իլլուկուտիվ ակտ» և «իլլուկուտիվ բայ» հասկացությունները չի կարելի հոմանիշներ համարել: Սա հաստատվում է խոսքային ակտերի՝ նրա դասակարգմամբ. 1) ռեպրեզենտատիվներ, 2) դիրեկտիվներ, 3) կոմիսիվներ, 4) էքսպրեսիվներ, 5) դեկլարատիվներ (Searle, 1986):
13. Ս. Բրաունի և Պ. Լևինսոնի մեկնաբանմամբ՝ ներողության խոսքային ակտերը դիտարկվում են որպես հասցեատիրոջ շահերից բխող խոսողի դիմակազրկում՝ (Brown, Levinson, 1983):
14. Կարևոր է նշել, որ *at all, a bit, in the least, in the slightest, anyway* բառերը նույնպես բացասական ներիմաստ են պարունակում և ասույթներում կիրառվում են բացասական վերաբերմունք արտահայտելու նպատակով (Quirk et al, 1985):
15. Հաճոյախոսությունը որպես խոսքային ակտ ամրակայված է առօրյա հաղորդակցական խոսքում, որը լեզվակիր հասարակության մեջ բխում է համընդհանուր «քաղաքավարության ռազմավարություն»-ից (Brown, Levinson, 1987):
16. Հուզականության ուսումնասիրության գործում մեծ է նաև Ի. Պիատրովսկայայի դերը, որը նույնպես հուզականությունն ուսումնասիրում է ասույթի մակարդակում: Հիմնվելով խոսքային ակտի տեսությունների վրա, և մանրագնի ուսումնասիրելով բացականչական նախադասությունների խնդիրը, Ի. Պիատրովսկայան հանգում է այն գաղափարին, որ անհրաժեշտ է ուսումնասիրել ասույթների այն բազմազանությունը, որը ներառում է թե՛ հուզական և թե՛ հուզական-գնահատողական բաղադրիչներ (Пиатровская, 1994):

17. Բոլոր դրական-վարքաձևային մաղթանքներն առօրյա խոսակցական դիսկուրսում պարունակում են մեկ ընդհանուր պերլուկուտիվ ուժ՝ առանց այլ հավելյալ իմաստների: Այսինքն, եթե որևէ մեկը լսել է պայմանականորեն կիրառված մաղթանք, ապա հազիվ թե նրա մտքով անցնի դրանում փնտրել ինչ-որ թաքնված իմաստ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառումը միտումնավոր է:
18. Բառը կամ բառախումբը, որն անվանում է խոսընթացի հասցեատիրոջը կոչվում է դիմում-կոչական: Դիմում-կոչականներ կարող են լինել հիմնականում հատուկ անունները, իսկ կենդանիների մականուններ ու անշունչ առարկաների անվանումներ հազվադեպ են հանդիպում: Նախադասության մեջ կոչականը նախադաս, միջադաս և վերջադաս դիրքեր է զբաղեցնում: Նախադաս դիրք զբաղեցնելիս այն արտահայտվում է թույլ հնչերանգով, մինչդեռ նախադասության մեջ դիմում-կոչականները կարող են կրել թվացյալ հնչերանգ, որի դեպքում խոսքի տեմպն ավելի արագ, իսկ ձայնի հնչողությունը՝ ավելի թույլ է լինում կամ բացականչական երանգ է ստանում: Ինչ վերաբերում է նախադասության մեջ վերջադաս դիրք զբաղեցնելուն, ապա հնչերանգն այս դեպքում նվազ արտահայտված է այն պարագայում, երբ չի իրականացնում իմաստային կամ հնչերանգային գործառույթ (Валгина, 1991):
19. Ըստ Պ. Էքմանի՝ ստի տարատեսակներից է ինքնագովաբանումը, որի նպատակը այլ մարդկանց մոտ ավելի հետաքրքիր, գրավիչ և կարևոր երևալն է (Ekman, 2003, Вольф, 1985):
20. Խոսքային ակտերում գնահատողական տիպի արտահայտությունների արտահայտչականությունն ուղղված է սաստկացնելու զրուցակցի վրա հուզական ներգործությունը, այլ կերպ ասած՝ մեծացնելու գնահատողական արտահայտության խոսողական-ներգործական ազդեցությունը (Вольф, 1985):

## Վերջաբան

Հույզերը բազմազան են, ուստի բազմաթիվ են լեզվում գոյություն ունեցող հուզարտահայտչական միավորները, որոնց կիրառմամբ որոշվում է հաղորդակցության բնույթը: Համացանցային հաղորդակցությունը, որպես միջանձնյա շփման կարևոր միջոց, առանձնանում է հույզերի արտահայտման իր բազմագործառույթ բնույթով: Մակայն համացանցային հաղորդակցության առավել աչքի ընկնող առանձնահատկություններից մեկը վիրտուալությունն է, այսինքն՝ անորոշ մարդու կամ մարդկանց խմբերի միջև հաղորդակցությունը, որը ենթադրում է տարածության և ժամանակի գործոնների առկայություն, ինչպես նաև գերտեքստայնությունը, որը հնարավորություն է ընձեռում իրականացնելու ստացված տեղեկության արագ ընդունմանը, մասնակիցների հասարակական դերերի և դիրքերի հավասարությանը, հույզերի, դիմաշարժումների և զգացումների փոխանցմանը և, վերջապես, յուրահատուկ համացանցային էթիկայի ձևավորմանը նպաստող գործողություններ:

Համացանցային շփումը, որը հույզերի արտահայտման յուրօրինակ ասպարեզ է, հաստատուն քայլերով ներթափանցում է մարդկային գործունեության տարբեր ոլորտներ՝ մարդկանց միմյանց հետ շփվելու հնարավորություն ընձեռելով՝ անկախ տարածությունից և ժամանակից: Համացանցի միջոցով հաղորդակցվելիս՝ խոսողն իրականացնում է նախախոսքային կողմնորոշում, որը վերաբերում է շփման իրադրությանը և զրուցակցին: Մեփական դիրքորոշման, զրուցակցի նկատմամբ դերային ակնկալիքների, ինչպես նաև զրուցակցի անհատական առանձնահատկությունների հաշվառման և խո-

սողի հետ հուզական հարաբերության գիտակցումն իր անմիջական արտացոլումն է գտնում խոսքում:

Հույզերի արտացոլումը լեզվական մակարդակում ի հայտ է գալիս բառային և տեքստային դրսևորումներում, որոնց շրջանակներում տարբերակվել են «հուզականություն» և «հուզարտահայտչականություն» հասկացությունները: Հուզարտահայտչականությունը զարգանում է անհատի ճանաչողական-հաղորդակցական գործունեության հուզական գործոնի հիման վրա և մտածական արդյունք է: Համացանցում հուզարտահայտչական միավորներ պարունակող հաղորդագրություններն աչքի են ընկնում զանազան լեզվական և խոսքային միավորների կիրառմամբ: Բառաձևաբանական մակարդակում մասնավորապես կարևորվել են հուզարտահայտչական ածականները, մակբայները, ձայնարկությունները, գոյականները և բայերը: Հուզարտահայտչական միավորների հազեցվածությամբ աչքի են ընկնում առավելապես ձայնարկություններն ու ածականները: Վերջիններս, գոյականի հետ գործածվելիս, կարող են ձեռք բերել հավելյալ իմաստային երանգներ՝ կախված համատեքստից և խոսքային իրադրությունից: Շարահյուսական մակարդակում իրենց կարևորությամբ առանձնացվել են կոչականները, հարցական նախադասություններն ու հռետորական հարցերը: Վերջիններն առանձնանում են իրենց վառ հուզականությամբ, քանի որ իրականանում են բազմաբնույթ հաղորդակցական իրադրություններում՝ յուրովի ներգործելով հաղորդակցվողների վրա:

Համացանցային հաղորդակցությունը տեքստի միջոցով իրականացող հուզական շփումն է: Օգտատերերի խոսքն առավել արտահայտչական դարձնող առոգաբանությանը և դիմաշարժին փոխարինում են կետադրական նշանները (բացական-

չական, տրոհագիծ, գլխատառեր, շեղատառեր և այլն) և գրաֆիկական այլ միջոցներ (օրինակ՝ հուզանշաններ), քանի որ, բացի տրոհման գործառույթ կատարելուց, դրանք կարող են ուժգնացնել կամ թուլացնել ասույթի հուզական ներգործման աստիճանը, որի արդյունքում հաղորդակցվողների խոսքն ավելի ազդեցիկ է դառնում: Համացանցային հաղորդակցության առավել բնորոշ հատկություններից է նաև տարատեսակ հապավումների կիրառությունը, որն էլ, օգտատերերին հնարավորություն է տալիս ավելի անմիջական և հակիրճ շփվելու միմյանց հետ:

Հուզարտահայտչականության քննությունը խոսքային ակտերի շրջանակներում բացահայտում է մարդու խոսքային գործունեության պայմանավորվածությունը անհատի յուրօրինակ մտադրություններով և շարժառիթներով: Հուզարտահայտչական միավորների կիրառմամբ ավելի ցայտուն են արտահայտվում օգտատերերի հույզերն ու վարքագծային յուրահատկությունները, նրանց վերաբերմունքը շրջակա աշխարհի և տարաբնույթ իրողությունների նկատմամբ:

Ընդհանրացնելով նշենք, որ համացանցային հաղորդակցությունն իր յուրօրինակ բնույթով և գործառույթներով սեփական հույզերը տարատեսակ ձևերով արտահայտելու ևս մեկ ազդեցիկ միջոց է:

Այսպիսով, հույզերի արտահայտումը յուրաքանչյուր հասարակության և նրա անդամների համագործակցության մասն է, իսկ համացանցային շփման շրջանակներում օգտատերերին հնարավորություն է տալիս առցանց հաղորդակցվելու ընդհանուր հետաքրքրություններ ու հուզական կարիքներ ունեցող անձանց հետ:



## Summary

### **The Expression of Emotive Elements in Electronically Mediated Communication**

*Tatevik Kirakosian*

Emotions have always been an inseparable part of cognition, mentality, language and thought. Currently, this fact can probably be explained by the global changes taking place in the world, including the rapid development of new information technologies. Modern means of communication, and especially the internet, facilitate cross-cultural communication, which is filled with emotions. Emotions are diverse, so there are many emotional expressive elements in language used in communication.

The aim of the monograph is the investigation of linguo-pragmatic and linguo-cognitive peculiarities of emotional expressive elements in online communication. We explain the nature, types and functions of online communication, study the peculiarities of the use of emotional expressive elements in English internet discourse, examine the role and significance of extralinguistic expressions of emotions in online communication. The study of the peculiarities of online electronic language is relevant not only because it is actual in our contemporary life, but also because it helps to reveal some important features of social psychology and individual linguistic consciousness. Of particular interest is the study of the multi-faceted examination and use of emotional-expressive elements in expressive speech acts in online discourse. From this point of view, changes in language directly manifested in online communication are of special importance.

Thus, we can conclude that communication may depend on the way the language is used, which is not devoid of emotions.

## Резюме

### Выражение эмотивных единиц в интернет-коммуникации

*Татевик Киракосян*

Эмоции всегда были неотъемлемой частью познания, мышления и языкового сознания. В настоящее время этот факт, вероятно, объясняется глобальными изменениями, происходящими в мире, в том числе быстрым развитием новых информационных технологий. Современные средства коммуникации, и особенно интернет, способствуют межкультурному общению, которое, в свою очередь, наполнено эмоциями. Главным средством выражения эмоций является язык, который именуется, описывает эмоции и в то же время разделяет их по качеству и по степени. Эмоции разнообразны, поэтому в языке также много эмоционально-выразительных единиц, используемых во время общения. Эмотивность и экспрессивность – языковые категории, воздействующие на развитие языка и способствующие созданию новых средств.

Цель работы заключается в выявлении и изучении лингвистических особенностей использования эмотивно-экспрессивных элементов в интернет-дискурсе. В монографии изучаются особенности проявления порядка эмоциональности в интернет-дискурсе, а также такие явления, благодаря которым формируется коммуникативный потенциал. Для реализации данной цели в монографии определяются природа, виды и функции интернет-коммуникации, изучаются особенности употребления единиц эмоциональной экспрессии в английском интернет-дискурсе, а также рассматриваются роль и значение экстралингвистических проявлений эмоций в онлайн-общении. Особый интерес вызывает использование единиц эмоциональной экспрессии при интернет-общении в речевых актах эмоционального выражения.

Необходимо отметить, что изучение особенностей электронного языка чрезвычайно важная задача, которая не только актуальна в целом, но еще и помогает выявить важные характерные черты социальной психологии и языкового сознания.

Итак, коммуникация зависит от выбора языкового выражения, которое в основном эмоционально.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան Ռ.Ս., Հոգեկեղվարանություն, Երևան, Լուսակն հրատարակչություն, 2007, 399 էջ:
2. Գասպարյան Ս., Մուրադյան Գ., Գասպարյան Ն., Գործառական ոճագիտություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 234 էջ:
3. Միրզոյան Վ.Ա., Երկխոսության կառավարում, Երևան, Տնտեսագետ հրատարակչություն, 2001, 3-7/ 30 էջ:
4. Պարոնյան Շ.Հ., Լեզվաճանաչողություն և դիսկուրս, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, 297 էջ:
5. Ջահուկյան Գ.Բ., Հոգեկան երևույթների լեզվաբանական կադապարումը: Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1992, 17-25 (6) էջ:
6. Аванесова Н.В., Эмоциональность и экспрессивность-категории коммуникативной лингвистики: Вестник Югорского государственного университета 2 (17): 2010: 5-9 стр.
7. Агапова С.Г., К Проблеме выражения эмоций в диалогической речи: Функционально-системный подход к исследованию языковых единиц разных уровней: Ростов-на-Дону: РГПУ, 2004: 15-16 стр.
8. Адамчук Т.В., Лексикализация эмоции «страх» в художественном англоязычном тексте: Журнал научных докторантов и аспирантов/N10: Курск; 2010: 88-90 стр.
9. Асмус Н.Г., Лингвистические особенности виртуального коммуникативного пространства. Дисс. канд. фил. наук: Челябинск: Челябинского гос. университета, 2005: 266 стр.
10. Ахманова О.С., О психолингвистике: Москва: из-во Московского Университета, 1957: 64 стр.
11. Балли Ш., Французская стилистика: Москва: Либроком, 1961: 394 стр.

12. Безрукова В.В., Проблемы интенсификации: языковая структура и социальная среда: Межвузовский сборник научных трудов: Воронеж, 2000: 137-142 стр.
13. Бочарникова Е.А., О соотношении понятий «текст» и «дискурс» в лингвистике: филологические науки: вопросы теории и практики N1 (5): Тамбов: Грамота, 2010: 50-52 стр.
14. Валгина Н.С., Синтаксис современного русского языка: Учебник: Москва: из-во Агар, 2000: 416 стр.
15. Вежбицкая А., Толкование эмоциональных концептов: Язык, Культура, Познание: Москва: «Русские словари», 1997: 896 стр.
16. Вольф Е.М., Функциональная семантика оценки: Москва: Наука, 1985: 228 стр.
17. Вундт В., Психология душевных явлений: Психология эмоций: Москва: изд-во МГУ, 1984: 323 стр.
18. Выготский Л. С. Лекции по психологии. Москва: из-во Перспектива, 2022: 148 стр.
19. Гак В.Г., Эмоции и оценки в структуре высказывания и текста: Москва: Вестник МГУ, 1997: N3 (9): 87-95 стр.
20. Галичкина Е.Н., Специфика компьютерного дискурса на английском и русском языках: Астрахань: АГПУ, 2001: 212 стр.
21. Галкина-Федотрук Е.М., Об экспрессивности и эмоциональности в языке: Сб. Ст. По языкознанию: Москва, 1957: 34-48 стр.
22. Горошко Е.И., Интернет жанр и функционирование языка в интернете: попытка рефлексии: «Жанр» и «культура» сб. научных трудов N6: Саратов: «Наука», 2009: 11-127 стр.
23. Гумбольдт В., Избранные труды по языкознанию (пер. с немецкого): Москва «Прогресс», 2000: 400 стр.
24. Жура В.В., Психо-когнитивные аспекты изучения эмоций в современных зарубежных психологических и лингвистических исследованиях: Язык и эмоции: личностные смыслы и доминанты в речевой деятельности: Сб. науч. труд.: Волгоград: ВГПУ, ЦОП «Центр», 2004: 248 стр.

25. Завьялова З.С., Реальный и виртуальный субъекты сетевой коммуникации: специфика интеракции: Вестник Томского Гос. Университета, 2011: N 343: 45-47 стр.
26. Золотухина Е.В., Рациональное и иррациональное в человеке: Ростов-на-Дону: СКНЦВШ, 2002: 308-310 стр.
27. Ионова С.В., Лингвистика эмоций: основные проблемы, результаты и перспективы: Язык и эмоции: личностные смыслы и доминанты в речевой деятельности. Сб. науч. труд.: Волгоград: ВГПУ, ЦОП «Центр», 2004: стр.4-24: стр. 248
28. Ионова С.В., Эмоциональная интерференция в тексте: Язык и эмоции: личностные смыслы и доминанты в речевой деятельности. Сб. науч. труд.: Волгоград: ВГПУ, ЦОП «Центр», 2004: 118-129: 248 стр.
29. Каган М.С., Мир общения: Москва: Политиздат, 1989: 389 стр.
30. Каймакова М.В., Коммуникации в организации: Ульяновск: УлГТУ, 2008: стр. 73.
31. Карасик В.И., Язык Социального Статуса: Москва: ИТДГК «Гнозис», 2002: стр. 333.
32. Красавский Н.А., Эмоциональные концепты в немецкой и русской лингвокультурах: Волгоград: Перемена, 2001: 495 стр.
33. Кубрякова Е.С., Александрова О. В., Виды Пространств текста и дискурса: Материалы научной конференции: из-во МГУ, 1997: 132-140 стр.
34. Кубрякова Е.С., Номинативный аспект речевой деятельности: Москва: Наука, 1986: стр. 159
35. Ларина Т.В., Выражение эмоций в английской и русской коммуникативных культурах: Язык и эмоции: личностные смыслы и доминанты в речевой деятельности. Сб. науч. труд.: Волгоград: ВГПУ, ЦОП «Центр», 2004: 36-46: 248 стр.
36. Леонтьев А.А., Основы психолингвистики: Москва: Смысл, 1997: 287 стр.

37. Липпман У., Общественное мнение: (пер. с английского): Москва: «общественное мнение», 2004: 328 стр.
38. Никитин М.В., Курс лингвистической семантики: СПб.: из-во РГПУ им. А. И. Герцена 2000: 819 стр.
39. Маслов Ю.С., Введение в языкознание: Москва: «Высшая школа» 1998: 191 стр.
40. Мягкова Е.Ю., К Проблеме исследования эмоциональных единиц индивидуального лексикона: Москва-Курск, 1999/ Web Journal of Formal Computational and Cognitive Linguistics: cog-model
41. Мягкова Е.Ю., Эмоциональная нагрузка слова: Опыт психолингвистического исследования: Воронеж: ВГУ, 1990: 108 стр.
42. Орлова Н.Н., К вопросу о языковых средствах выражения эмоций: Известия Южного федерального университета: Фил. Науки (N4), 2008: 55-63 стр.
43. Парыгин Б.Д., Анатомия общения: СПб.: из-во В. А. Михайлова, 1999: 300 стр.
44. Панферов В.Н., Классификация функций человека как субъекта общения: Соц. психология в трудах отечественных психологов: СПб., 2000: 362-376 стр.
45. Панфилова А.П., Деловая коммуникация в профессиональной деятельности: СПб., 2001: 494 стр.
46. Пиотровская Л.А., Эмотивные высказывания как объект лингвистического исследования: СПб.: Фил. фак. Санкт-Петербургского гос.ун-та, 1994: 5-15: 146 стр.
47. Поршнева Б.Ф., Социальная психология и история: Москв: Наука, 1979: 179 стр.
48. Почепцов Г.Г., Теории коммуникации: Москва: Рефл-бук, Киев: «Ваклер», 2001: 651 стр.
49. Разинкина Н.М., Стилистика английской научной речи (элементы эмоциональной-субъективной оценки): Москва: «Наука», 1972: 168 стр.

50. Рубинштейн С.Л., Основы общей психологии: Питер: СПб., 1989: стр. 729
51. Сепир Э. Избранные труды по языкознанию и культурологии: Москва: Прогресс, изд.группа «Универс», 1993: стр. 598
52. Серль Дж. Р., Классификация иллокутивных актов: Новое в зарубежной лингвистике N 17: Теория речевых актов: Москва, 1986а: 170-195 стр.
53. Серль Дж. Р., Что такое речевой акт: Новое в зарубежной лингвистике N 17: Теория Речевых Актов: Москва, 1986: 151-170 стр.
54. Соссюр Ф., Труды по языкознанию: Москва: Прогресс, 1977: 697 стр.
55. Слюсарева Н.А., Функции языка: лингвистический энциклопедический словарь: Москва: Советская энциклопедия, 1990: 564-565 стр.
56. Телия В.Н., Механизмы экспрессивной окраски языковых единиц: Человеческий фактор в языке. Языковые механизмы экспрессивности: Москва: Наука, 1991:36-66 стр.
57. Телия В. Н., Смысловая структура эмотивных предикатов: Человеческий фактор в языке. Языковые механизмы экспрессивности: Москва: Наука,1991: 67- 99 стр.
58. Телия В.Н., Экспрессивность как проявление субъективного фактора в языке и ее прагматическая ориентация: Человеческий фактор в языке. Языковые механизмы экспрессивности: Москва: Наука,1991: 5-35 стр.
59. Тер-Минасова С.Г., Сентагматика речи: онтология и эвристика: Москва: из-во МГУ, 2009: 200 стр.
60. Тер-Минасова С.Г., Язык и межкультурная коммуникация: Москва: Слово, 2000: 164 стр.
61. Трофимова Н.А., Экспрессивные речевые акты в диалогическом дискурсе: Семантический, прагматический, грамматический анализ: Санкт-Петербург: «Старый Петергорф», 2008: 376 стр.

62. Туранский И.И., Семантическая категория интенсивности в английском языке: Москва: 1990: 172 стр.
63. Филимонова О.Е., Эмоциология текста: анализ репрезентации эмоций в английском тексте: Санкт-Петербург: ООО «Книжный Дом», 2007: 448 стр.
64. Хабермас Ю., Моральное сознание и коммуникативное действие: Питер: СПб, 2000: 359 стр.
65. Шарков Ф.И., Коммуникалогия: основы теории коммуникации: Москва:Альтехсофт «Издательство Шаркова», 2010: 592 стр.
66. Шаховский В.И., Категоризация эмоций в лексико-семантической системе языка: Воронеж: из-во ВГУ, 1987: 191 стр.
67. Шаховский В.И., Лингвистическая теория эмоций: Москва: «Гнозис», 1990: 416 стр.
68. Шаховский В.И., Эмотивный компонент значения и методы его описания: Волгоград: из-во ВПИ, 1983: 92 стр.
69. Шаховский В.И., Эмоции: долингвистика, лингвистика, лингвокультурология: Москва: «Либроком», 2009: 124 стр.
70. Шпет Г., Внутренняя форма слова: этюды и вариации на темы Гумбольдта: Москва: Комкнига, 2006: 216 стр.
71. У. Эко, От Интернета к Гуттенбергу: Новое литературное обозрение: N32, 1998:5-13 стр.
72. Яблокова Т.Н., К Вопросу о средствах выражения эмоциональности в речи: Сборник научных трудов Орехово-Зуево: МГОПИ, 2003: 74-82 стр.
73. Austin J. L., How To Do Things With Words: Oxford: OUP Press, 1962: 163 p.
74. Bolinger D., Degree Words: The Hague-Paris: 1972: p. 342.
75. Carol I., Human Emotions: New York: Plenum Press, 1977: 495 p.
76. Crystal D., Language and the Internet: Cambridge: Cambridge University Press, 2001: 345 p.
77. Crystal D., The Cambridge Encyclopedia of the English Language: 3rd edition: Cambridge: CUP, 2018: 580p.



78. Damasio A.R., *Descartes' Error: Emotion, Reason and the Human Brain*: New York: Penguin Books, 2005: 336 p.
79. Dijk T.A., *Discourse as Structure and Process*: London: Sage Publications LTD, 1997:356 p.
80. Ekman P., *Emotions Revealed. Recognizing Faces and Feelings to Improve Communication and Emotional Life*: USA: TimesBooks, 2003: 285 p.
81. Ekman P., *Non-verbal Messages: Cracking the Code: My Life's Pursuit*: Paul Ekman Group LLC., 1st edition: 2016: 320p.
82. Frijda N.H., *The Emotions*: Cambridge: CUP, 1986: 544 p.
83. Frijda N.H., *Emotional Experience and its Varieties*: *Emotion Review* N1, 2009: 261-271 pp.
84. Galperin I., *Stylistics: Moscow "Higher School"*: 1977: 335 p.
85. Glazer C., *Playing Nice with Others: The Communication of Emotion in an On-Line Classroom*: 9<sup>th</sup> Annual Distance Education Conference: Austin, University of Texas, 2002:
86. Goleman D., *The Emotional Intelligence*: New York: Bentam Books, 2005; 352 p.
87. Herring S., *Gender Differences in CMC: Findings and Implications*: CPSR Newsletter: Wasington DC: ERIC Clearing house on Languages and Linguistics: 2000: Vol. 18 (N1): 55-64 pp.
88. Herring, S., *Computer-Mediated Communication: Linguistic, Social and Cross-Cultural Perspectives*: Amsterdam: 1996, 412 p.
89. Herring, S., *Gender and Participation in Computer-Mediated Linguistic Discourse*: ERIC Clearinghouse on Languages and Linguistics, 1992: 245 p.
90. Herring, S., *Language and the Internet // International Encyclopedia of Communication.* / (Ed.) W. Donsbach. Blackwell Publishers, 2008: pp. 2640-2645
91. Jakobson R., M. Halle., *The Framework of Language*: Netherlands: Mouton and Co's- Gravenhage: 1956: 108 p.

92. Johnson-Laird P. and Oatley K., *The Language of Emotions: An Analysis of a Semantic Field: Cognition and Emotion*: 1989: (N6): 201-223 pp.
93. Lakoff G.; Johnson M., *Metaphors We Live By*: Chicago: University of Chicago Press, 1980: 242 p.
94. Lasarus R., *On the Primacy of Cognition: American Psychologist*: Vol. 39: 1984: 124-129 pp.
95. Leech G. N.; Short M. H., *Style in Fiction*: 1981: 220 p.
96. Leech, G. N., *Principles of Pragmatics*: London: London Group Limited, 1983: 250 p.
97. Levinson S. C., *Pragmatics*: Cambridge: CUP, 1983: 420 p.
98. Lippman W., *Public Opinion*: Gutenberg eBooks, 1922: 120 p.
99. Sherer K., Moors A., *The Emotion Process: Event Appraisal and Component Differentiation: Annual Review of Psychology*: 2019 Vol. 70: pp. 719-745
100. Sherer K., *Theory Convergence in Emotion Science is Timely and Realistic: Cognition and Emotion*, 2022 vol. 36 -issue 2: pp. 154-170
101. Mulligan K., Sherer K., *Toward a Working Definition of Emotion: Emotion Review*: Vol. 4(N4): Sage Publications and the International Society for Research on Emotion, 2012: 345-357 pp.
102. Neelman A., Koot H., *Degree Expressions*: London: 1998, 2004: 49 p.
103. Oatley K., *Communications to Self and Others: Emotional Experience and its Skills: Emotion Review*: Vol. 1(N3): Sage Publications and the International Society for Research on Emotion, 2009: 206-213 pp.
104. Plutchik R., *The Emotions*: Lanham Md: University Press of America, 1991: p. 216
105. Quirk, et al: *A Comprehensive Grammar of the English Language*: London and New York: Longman, 1985: 1792 p.
106. Reisenzein R., *Emotional Experience in the Computational Belief-Desire Theory of Emotion: Emotion Review*: Vol. 1(N3): Sage

- Publications and the International Society for Research on Emotion, 2009: 214-222 pp.
107. Reisenzein R., Schmidt Ph. Emotional Feelings: Evaluative Perceptions or Position-Takings? Introduction to the Special Section: Emotion Review: 2022 vol. 14 (4): 233-243 pp.
  108. Reeve J., Understanding Motivation and Emotion: Hoboken NJ: Wiley, 2009: 601 p.
  109. Roach P., Phonetics: Oxford: Oxford University Press: 2001: p. 119:
  110. Scovel T., Psycholinguistics: Oxford: OUP, 1998: 135 p.
  111. Verschueren J., Understanding Pragmatics Text: London: New York: Edward Arnold Publishers, 1999: 295 p.
  112. Wierzbicka A., Cross-Cultural Pragmatics: The Semantics of Human Interaction: New York: Mouton de Guyter: Berlin: 2008: 250 p.
  113. Wunderlich D., Methodological Remarks on Speech Act Theory// and Pragmatics. Texts and Studies in Linguistics and Philosophy: Vol.10: D. Reidel Publishing Company Dordrecht/Holland/Boston/-USA/London/England: 1980: 219-312pp.
  114. Wundt W., Outlines of Psychology: German: Leipzig, 1897
  115. Yule G., Pragmatics: Oxford: OUP, 1996: 135p.
  116. Zajonc, R. B., On the Primacy of Affect: American Psychologist: Vol. 35: 1984: 151-175 pp.

## ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Գրիգորյան Խ., Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան: Երևան: Անկյունաքար, 2004, 388 էջ
2. Նազարյան Ա.Հ., Լեզվաբանական տերմինների Ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան: Երևան: «Ապրիլ»», 1993, 655 էջ:
3. Арутюнова Н.Д., Речевой акт: ЛЭС: Москва, 1966: 608 стр.
4. Ахманова О.С., Словарь лингвистических терминов: Москва: изво Московского Университета, 1966: 608 стр.
5. Психология эмоций: под. ред. Вилюнаса В.К., Гиппенрейтер Ю. Б.: Москва: МГУ, 1984: 390 стр.
6. Современный философский словарь: под. общ. ред. В. Е. Кемерова: Москва: Академический Проект, 2004: 861 стр.
7. Crystal D., The Cambridge Encyclopedia of the English Language: Cambridge: CUP, 2004: 491 p.
8. Longman Dictionary of Contemporary English: Bungay, Suffolk, Longman Dictionaries, 1995:
9. Oxford Advanced Learners Dictionary: Oxford: OUP, 2001:1539 p.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱՑԱՆՑԱՑԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Бергельсон М.Б., Языковые аспекты виртуальной коммуникации  
[http://www.russcomm.ru/rca\\_biblio/b/bergelson-text 07.doc](http://www.russcomm.ru/rca_biblio/b/bergelson-text 07.doc)
2. Психологический Словарь/ [http:// psi.webzone.- ru/st/1237000](http://psi.webzone.-ru/st/1237000)
3. [http:// psy.rin.ru/ cgibin/article.pl?id=1271](http://psy.rin.ru/cgibin/article.pl?id=1271)
4. Пиотровская Л.А., [http://- www. Philol.msu.ru/~rlc2004/ru participants/pse-arch. php?pid=91536](http://-www.Philol.msu.ru/~rlc2004/ru-participants/pse-arch.php?pid=91536)
5. Эпштейн В. Л., [http:// www.ipu.ru/pul/epstn.htm](http://www.ipu.ru/pul/epstn.htm).
6. [http:// landlow.stg.brown.edu/cspace/cspaceov.html.?](http://landlow.stg.brown.edu/cspace/cspaceov.html?)
7. Shouse E., Feeling, Emotion, Affect: M/C Journal, 8(6): 2005.  
<https://doi.org/10.5204mcj.2443>
8. <https://m.facebook.com>
9. [https:// www.instagram.com](https://www.instagram.com)
10. [https://twitter. com](https://twitter.com)
11. [http:// icqchat. Com](http://icqchat.Com)



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՏԱԹԵՎԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

**ՀՈՒՋԱՐՏԱՀԱՅՏՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ**

**ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Խմբագիր՝ Ա. Հովակիմյան

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Ստորագրված է տպագրության՝ 22.07.2024:

Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 11.875:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.ysu.am](http://www.publishing.ysu.am)



ԿՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2024  
[publishing.ysu.am](http://publishing.ysu.am)